21-ՐԴ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

6 (28)

ԵՐԵՎԱՆ

2009

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից **6 (28), 2009**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Գագիկ Հարությունյան
(համակարգող)
Մուշեղ Լալայան
Սերգեյ Գրինյան
Սպարտակ Սեյրանյան
Սևակ Սարուխանյան
Տիգրան Սարգսյան

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Գագիկ Հարությունյան
(գլխավոր խմբագիր)
Սևակ Սարուխանյան
(գլխ. խմբագրի տեղակալ)
Էդուարդ Դանիելյան
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Ռուբեն Մելքոնյան
Տիգրան Հարությունյան

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ
Гагик Арутюнян
(координатор)
Тигран Саркисян
Мушег Лалаян
Севак Саруханян
Сергей Гриняев
Спартак Сейранян

РЕДАКЦИЯ
Гагик Арутюнян
(главный редактор)
Севак Саруханян
(заместитель гл. редактора)
Лусине Баграмян
(ответственный секретарь)
Рубен Мелконян
Тигран Арутюнян
Хонарик Караугланян
(ответственный редактор)
Эдуард Даниелян

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աննա Ժամակոչյան
Տեղեկատվական հոսքերը և Հայաստանի ինֆոռանվտանգությունը 3

Ռուբեն Մելքոնյան
Տեղանունների փոփոխությունը՝ որպես թուրքացման քաղաքականություն 30

Վլադիմիր Վարդանյան
Ցեղասպանության համար պետությունների միջազգային իրավական պատասխանատվության արդի միտումներն ու զարգացումները 38

Սևակ Սարուխանյան
«Ուղեղային կենտրոնները» Իսրայելում. ազգային և ցանցային կառույցների համադրություն …..….. 55

Վարդան Ասցատրյան
Սեկուլյար հայեցակարգը 67

Մերուժան Մարկոսյան
Սոցիալական քաղաքականությունը ճգնաժամի պայմաններում ……..... 91

Հուշագիր հեղինակին 120

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՖՈՍԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Աննա Ժամակոչյան[*]

Հոդվածում կարևորվում է տեղեկատվական հոսքերի ուսումնասիրությունը՝ որպես ՀՀ տեղեկատվական սպառնալիքների բացահայտման, դրանց հակազդման մեխանիզմների մշակման և տեղեկատվության գիտակցված ընկալման հմտությունների զարգացման անհրաժեշտ միջոց: Այս նպատակով դիտարկվում է Ադրբեջանի հակահայկական ինֆոքաղաքականության օրինակը՝ մեր մշակած մեթոդաբանական մոտեցման հիման վրա: Ադրբեջանական ռազմավարությունը ներկայացվում է վերլուծական երկու մակարդակում՝ տեղեկատվության քաղաքականության համակարգի և կոնկրետ գործողությունների: Բացահայտվում են հակահայկական ինֆոքաղաքականությունում կիրառվող առանցքային ձևերը և մեխանիզմները:

1. Տեղեկատվական անվտանգության համատեքստը ՀՀ-ում

Եթե իրավիճակը սահմանվում է որպես իրական,
ապա այն իրական է իր հետևանքներով:
Ուիլյամ Թոմաս

Զրուցակցին կամ լսարանին տեղեկատվական ազդեցության ենթարկելու և նրա դիրքորոշումների ձևավորումն ուղղորդելու մղումը բնորոշ է բոլոր սոցիալական միավորներին՝ անհատից ու փոքր խմբերից մինչև մեծ կազմակերպություններ ու պետություններ: Հաղորդակցման ուղիների զարգացմանը և տեղեկատվական հոսքերի բազմազանությանը զուգահեռ՝ թեժանում է նաև լսարանի ուշադրությանն ու վստահությանն արժանանալու, նրա գիտակցության և հիշողության մեջ ամրապնդվելու, դիրքորոշումների վրա արդյունավետ ազդելու համար մղվող պայքարը: Արդյունքում՝ ժամանակակից հանրությունների և նրանց անդամների գիտակցությունը վերածվել է իրական մարտադաշտի, որտեղ կերտվում են տեղեկատվության ընկալման տեսանկյունները: Այս իմաստով հատկապես խոցելի են այն հասարակությունները, որոնցում բացակայում են տեղեկատվական-հաղորդակցական միջոցների ազդեցության ձևերի ու միջոցների մասին գիտելիքները և դրանց հետ գործ

[*] «Նորավանք» ԳԿՀ «Տեղեկատվական հետազոտությունների» կենտրոնի փորձագետ:

ունենալու տարրական հմտությունները: Այս շարքում են գտնվում հետ-խորհրդային բոլոր երկրները, որտեղ տեղեկատվական մշակույթը ձևավորվել է բազմակարծության ճնշման ու միակողմանի տեղեկատվական հոսքի ապահովման քաղաքականության պայմաններում: Խորհրդային համակարգի փլուզումից հետո, երբ արժեզրկվեց մեկ՝ միանշանակ ճշմարիտ և վստահելի պետական տեղեկատվական տեսանկյունի գաղափարը, հետխորհրդային երկրների հասարակությունները միանգամից հայտնվեցին տեղեկատվական բազմազան հոսանքների տիրույթում՝ չունենալով տեղեկատվությունը զտելու և դրանից օգտվելու անհրաժեշտ գիտելիքներ:

Ինչ վերաբերում է հայաստանյան հասարակությանը, ապա Երրորդ հանրապետությունում քաղաքական որոշակի պլյուրալիզմի շնորհիվ այստեղ ձևավորվել է տեղեկատվական հոսքերի բազմազանություն: Չնայած ներկայումս քաղաքական ուժերը հավասար մատչելիություն չունեն տեղեկատվական աղբյուրների նկատմամբ, նրանցից առավել կազմակերպվածները պահպանում են իրենց ազդեցության լսարանները: Այնուհանդերձ, ՀՀ-ում կայացած չեն տեղեկատվաստեղծ պրոֆեսիոնալ ինստիտուտները կամ ազատ փորձագիտական հանրույթները, որոնք մասնագիտական մոտեցումներով կողմնորոշման հնարավորություն կտային անորոշության կամ բազմակողմանի տեղեկատվական հարվածների տակ հայտնված հանրությանը: Արդյունքում՝ Հայաստանի ներքին տեղեկատվական հոսքերը մեծ մասամբ կառավարվում են քաղաքական կոնկրետ նպատակների համատեքստում կամ պարզապես իրավիճակային ինքնահոսի են մատնված:

Այս պայմաններում գտնվող հայաստանյան հասարակությունը կրկնակի խոցելի է իրավական լուծում չստացած ԼՂՀ հարցից բխող արտաքին սպառնալիքների առկայության և հարևանների կողմից տեղեկատվական գրոհների ակտիվացման համատեքստում: Վերջիններիս նկատմամբ անհրաժեշտ դիմադրության կարողության պակասին հաճախ ենք ականատես լինում, երբ հայաստանյան մեդիա տարածքում ադրբեջանական ապատեղեկատվության և թուրքական մամուլի խայծերի տիրաժավորում է տեղի ունենում, կամ էլ օպերատիվ արձագանքի անհրաժեշտության դեպքում խուլ լռություն է տիրում:

Հատկապես 2008թ. կեսերից տարածաշրջանի նկատմամբ հետաքրքրության աճը և ՀՀ-ի շուրջ քաղաքական գործընթացների արագացումը նոր տեղեկատվական ալիքներ են հասցնում Թուրքիայի, և ոչ միայն նրա, կողմից: Դրանք միաժամանակ և՛ կենսական սպառնալիքներ, և՛ հնարավորություններ են առաջ բերում, որոնց դիմակայելու և որոնցից օգտվելու փորձությունն առայժմ հաջողությամբ չեն անցնում հայաստանյան մեդիա, քաղաքական և փորձագիտական հանրույթները:

Նման իրավիճակում Հայաստանի հասարակությանն աջակցություն կարող է հանդիսանալ ոչ միայն ռազմավարական նշանակության սոցիալական ինստիտուտների կայացմանը նպաստող քաղաքականությունը, ինչպես, օրինակ, պրոֆեսիոնալ և ազատ մեդիայի զարգացումն է, փորձագիտական հանրույթների հզորացումը, հասարակական գիտությունների զարգացումը, այլև կոնկրետ տեղեկատվության հետ գործ ունենալու հմտությունների և գիտելիքների տարածումը:

Այս առումով, ուսանելի են հաճախակի կիրառվող տեղեկատվական գրոհների ձևերի ուսումնասիրությունը, այդ նպատակով հետազոտման մեթոդաբանության մշակումը և արդյունքների մասին հասարակության իրազեկելը: Հատկապես կարևոր է հակահայկական բնույթի տեղեկատվական գրոհների մասին պատկերացումների ձևավորումը, ինչն էլ կփորձենք իրականացնել ստորև:

2. Հակահայկական ինֆոքաղաքականությունն Ադրբեջանի օրինակով

Տեղեկատվական գրոհների ուսումնասիրության նպատակահարմար օրինակ է Ադրբեջանի հակահայկական ինֆոքաղաքականությունը, որը հատկապես ակտիվացել է վերջին տասնամյակում: Չանդրադառնալով հակահայկականության զարգացման դինամիկային՝ դիտարկենք, թե ինչ հիմնական մոտեցումներ են վերջին շրջանում կիրառում հարևան երկրի հակահայկականություն մշակողները:

Ադրբեջանական հակահայկականությունն ուսումնասիրելիս նպատակահարմար ենք համարում այն իրականացնել վերլուծության երկու՝ 1. ընդհանուր ինֆոքաղաքականության համակարգի և 2. կոնկրետ տեղեկատվական գործողությունների հարթություններում:

1. Ադրբեջանի հակահայկական ինֆոքաղաքականության համակարգը

Առաջին հարթությունում նկատում ենք, որ Ադրբեջանի հակահայկական ինֆոքաղաքականությունը պետական քաղաքականության անբաժանելի մասն է և միտված է հայկական սուբյեկտների (ՀՀ, ԼՂՀ և Հայություն) բազմակողմանի վարկաբեկմանը՝ ուղղված տարբեր լսարանների վրա ազդեցությանը: Նման քաղաքականությունը միաժամանակ ուղեկցվում է սեփական երկրի և ժողովրդի նկատմամբ բարենպաստ կերպարի ձևավորմամբ և վիճելի հարցերի վերաբերյալ ադրբեջանական մեկնաբանությունների տարածմամբ: Այդ երկու զուգահեռ գործընթացներն այնքան են սերտաճել, որ Ադրբեջանի ժամանակակից ինքնաներկայացման բաղադրիչ է հանդիսանում Հայաստա-

նին ու Հայությանը հակադրվելը, որը նաև դարձել է ադրբեջանական հասարակության նոր ինքնության մեջ ներդրվող նշանակալի գործոններից: Այսպիսով, հակահայկական ինֆոքաղաքականությունն այսօր Ադրբեջանի քաղաքական ռազմավարության կարևոր ուղեգծերից մեկն է, որի գլխավոր սկզբունքներն են.

- Հայաստանի և Հայության մասին տեղեկատվության լիարժեք հավաքագրումը, ներքին խնդիրների տիրապետումը, հայի սոցիալ-հոգեբանական, մշակութային կերպարի ուսումնասիրությունը:
- Հակահայկական տեղեկատվական քաղաքականության նպատակադրումը և մշակումը՝ հիմնված այլ երկրների, հատկապես Թուրքիայի փորձի վրա:
- Հակահայկական քաղաքականության ուղեկցումը սեփական երկրի նկատմամբ դրական կերպարի ձևավորմամբ և վիճելի հարցերի վերաբերյալ ադրբեջանական տեսակետի տարածմամբ:
- Հակահայկական քաղաքականության մեջ բազմավեկտոր նախահարձակ դիրքորոշումը, ինչպես նաև հայամետ տեղեկատվական հոսքերի հակազդումը օպերատիվ-մարտավարական և ռազմավարական հարթություններում:
- Հակահայկական տեղեկատվության տարածումը դիֆերենցված և թիրախային լսարաններին (ադրբեջանական հանրությանը, հայկական հանրությանը, իսլամական աշխարհին, ռուսաստանյան և ԱՊՀ հանրությանը, արևմտյան և միջազգային հանրությանը՝ թիրախ ընտրելով հատկապես երիտասարդությանը և անգամ երեխաներին, ինչպես նաև աշխարհաքաղաքական իմաստով նշանակալի երկրներում ու միջազգային կառույցներում որոշումներ կայացնողներին):
- Յուրաքանչյուր լսարանի նկատմամբ ուրույն մոտեցումների և դիսկուրսի կիրառումը՝ տվյալ լսարանի առանձնահատկություններին համապատասխան:
- Հակահայկական ինֆոքաղաքականության ինտեգրումը պետական քաղաքականության բոլոր ոլորտներում և դրա ամբողջական համակարգային գործառումը:

Որպես ինֆոքաղաքականության համակարգի բաղադրիչներ և ադրբեջանական տեղեկատվական գործողությունների իրականացման փոխկապակցված հարթակներ հանդես են գալիս հետևյալ բաղադրիչները.

- պատմամշակութային բաղադրիչը,
- իրավական բաղադրիչը,
- ժողովրդական դիվանագիտության բաղադրիչը,

- լոբբինգային բաղադրիչը,
- ներքաղաքական բաղադրիչը,
- մեդիա բաղադրիչը,
- տեխնոլոգիական բաղադրիչը։

Պատմամշակութային բաղադրիչ: Պայքարը պատմամշակութային դաշտում Ադրբեջանի հակահայկական ինֆոքաղաքականության առավել ավանդական բաղադրիչներից է, որն սկիզբ է առել նախորդ դարի 30-ականներին, հատկապես զարգացել 60-ականներին՝ Զ.Բունիաթովի կողմից, և արդիականացվել 2000 թվականից։ Պատմական փաստերի խեղաթյուրման աշխատանքը հիմնականում վարում է Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիան՝ Պատմության, Մարդու իրավունքների և այլ ինստիտուտներով։ Այդ հաստատությունների գործունեության հիմքում ընկած է Հայաստանի, հայ ժողովրդի և Ադրբեջանի պատմության կեղծումը՝ «ադրբեջանցի» և «Ադրբեջան» տերմինների նույնականության ամրապնդման, կովկասյան աղվանների ադրբեջանականացման, տարածաշրջանում և հատկապես պատմական Արցախում «թյուրքերի բնիկ» և «հայերի եկվոր» լինելու հիմնավորման նպատակներով։ Հատկապես ուշագրավ է Արևելյան Անդրկովկասի բնիկ ժողովուրդների (հայեր, դաղստանալեզու և իրանալեզու ազգություններ) պատմամշակութային ժառանգության և տարածքների ալբանական-նախաադրբեջանական պատկանելության մասին հակագիտական պատմաքաղաքական հայեցակարգի հորինումն ու տարածումը։ Վերջին 20 տարիների նորամուծություններից են նաև ՀՀ-ի նկատմամբ պահանջատիրական նկրտումները, ինչն իրականացվում է «Արևմտյան Ադրբեջան» հասկացության ներմուծմամբ և շրջանառմամբ։ Արցախի և, առհասարակ, պատմական Հայաստանի քաղաքական պատմության կեղծումը հիմք է ծառայում ԼՂՀ-ի հարցում ադրբեջանական դիրքորոշումներն առաջ մղելու, ինչպես նաև ՀՀ-ի և ԼՂՀ-ի նկատմամբ Ադրբեջանի հնարավոր ագրեսիան արդարացնելու համար։ Պատմության վերաշարադրման են ենթարկվում նաև ոչ վաղ անցյալի փաստերը։ Սրբագրվում է 20-րդ դարի սկզբում Ադրբեջանի հանրապետության ձևավորման շրջանում հայերի ունեցած դերակատարումը, փոխարենը նրանց վերագրվում են բազում հանցանքներ։ Ենթագիտվում է 1988-1990թթ. Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում հայ բնակչության նկատմամբ ադրբեջանական ղեկավարության իրականացրած ցեղասպանական գործողությունները՝ դրանք ներկայացնելով որպես «հայկական սադրանքներ»։

Պատմության սրբագրման աշխատանքները տեղի են ունենում ինչպես տարածաշրջանում բնակվող բնիկ ժողովուրդների էթնոազգային պատմությունը նկարագրող տեքստերի կեղծման ու վերաշարադրման, այնպես էլ

դրանց վկայությունը հանդիսացող պատմամշակութային ժառանգության, հուշակոթողների վերացման և նորերի կառուցման միջոցով: Ժամանակակից Ադրբեջանում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության նմուշները կա՛մ ֆիզիկապես ոչնչացվում են, ինչպես դա 2005-2006թթ. տեղի ունեցավ Նոր Ջուղայի գերեզմանատան խաչքարերի հետ, կա՛մ էլ հռչակվում են «բուն ադրբեջանական»: Նույնիսկ ՀՀ և ԼՂՀ սահմաններում գտնվող հայկական եկեղեցիները, քրիստոնեական ու զուտ հայկական մշակույթին բնորոշ հուշարձանները վերագրվում են Կովկասյան Աղվանքի ժողովրդին՝ դրանց հետագա ադրբեջանականացումը հիմնավորելու համար: Ադրբեջանականացման ռազմավարությանն է ծառայում նաև ժամանակակից ադրբեջանական դրոշմանիշների և դրամների վրա հայկական մշակութային հուշակոթողների պատկերումը[1]:

Ադրբեջանական քարոզչության ոգով ստեղծվում են նաև նոր հիշողության վայրեր, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով հանցանքներ են վերագրում հայկական կողմին:

Իրավական բաղադրիչ: Ադրբեջանի իշխանությունն իրականացնում է հետևողական քաղաքականություն ինչպես իր ներքին, այնպես էլ միջազգային իրավաօրենսդրական դաշտում սեփական շահերն ու տեսանկյուններն արտացոլելու և դրանք հետագայում կիրառելու ուղղությամբ: Նման գործողությունները դրսևորվում են սկսած դեռևս 1991-ից ԼՂՀ հայկական տեղանունների վերանվանման նախաձեռնություններից, մինչև 2008թ. Եվրախորհրդի և ՄԱԿ բանաձևերում Լեռնային Ղարաբաղի հարցում ադրբեջանամետ դիրքորոշումների ամրագրումը:

Միջազգային իրավաքաղաքական փաստաթղթերում ցանկալի դրույթների ամրագրման հարցում տեղեկատվական ազդեցության նշանակությունն ընդգծելու համար նշենք, որ ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի կողմից 2008թ. մարտի 14-ին ընդունված *A/62/L.42* բանաձևը[2], որը պատրաստվել էր Ադրբեջանի կողմից և միանշանակ արտահայտում է ԼՂՀ խնդրի նկատմամբ ադրբեջանամետ դիրքորոշումը, ընդունվել է ՄԱԿ անդամ 192 երկրներից միայն 39-ի «կողմ» քվեարկությամբ (100 երկիր «ձեռնպահ» է քվեարկել): Միևնույն ժամանակ, «կողմ» քվեարկած երկրների մի մասն ակնհայտ քաղաքական շարժառիթ չուներ նման դիրքորոշման համար, և նրանց «կողմ» կամ «դեմ» որոշումը կարող էր պայմանավորվել կողմերի տեղեկատվական գործողություններով:

[1] Մանրամասն տե՛ս *Դեմոյան Հ.,* «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին», http://www.noravank.am/file/article/76_am.pdf):

[2] http://www.un.org/russian/ga/62/docs/62res3.shtml

Իրավական հարթության մեջ հակահայկական ինֆոքաղաքականության քայլերից է նաև 1998թ. նախագահ Հ.Ալիևի հրամանով մարտի 31-ը ադրբեջանցիների «ցեղասպանության» օր հռչակելը, որի իրականացման մեջ պաշտոնապես մեղադրվում են հայերը: Այդ հրամանագրով պետական մակարդակով իրավական հիմք ստեղծվեց հակահայկական հատուկ քարոզչության համար, որն էլ առայսօր ակտիվորեն իրականացվում է: Նույն կերպ 1992թ. Ադրբեջանի իշխանության կողմից Խոջալուի բնակչության անհաջող տարհանման և հետագայում ադրբեջանական զինվորների կրակահերթերի հետևանքով զոհված մարդիկ Ադրբեջանում համարվում են ցեղասպանության զոհ, որը վերագրում են հայ զինվորականներին, և քայլեր են ձեռնարկվում այն միջազգայնորեն ցեղասպանության իրավական գնահատականի հասցնելու ուղղությամբ:

Հակահայկական քարոզչության իրավական բաղադրիչի հիմքում դրված են նաև ԽՍՀՄ հիմնադրմանը և հատկապես փլուզմանը զուգորդող իրավաքաղաքական ու միջազգային պայմանագրերի, ԼՂՀ անկախացման իրավաքաղաքական հիմքերի մեկնաբանությունների խնդիրները: Կարևոր մանիպուլյացիոն քայլեր են նաև ՄԱԿ-ի կողմից ժամանակակից Ադրբեջանը՝ Ադր. ԽՍՀ տարածքային սահմաններով ճանաչելու փաստի շահարկված ներկայացումն ու դրա իրավապարտադրականության նորմի գերագնահատումը:

Ժողովրդական դիվանագիտության բաղադրիչ: Այս ոլորտին են վերաբերում տարածաշրջանային և միջազգային ձևաչափերով ոչ կառավարական հասարակական կազմակերպությունների (ՀԿ) միջոցառումներին Ադրբեջանից գործուղվող անձանց միջոցով տարվող աշխատանքները: Նման հանդիպումներին հաճախ մասնակցում են նաև ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցները կամ պետական մարմինների կողմից հրահանգավորված անձինք, որոնք պետական քարոզչական աշխատանք են վարում: Ըստ հայաստանյան փորձագետների դիտարկումների, ՀԿ-ների ադրբեջանցի ներկայացուցիչներն իրենց ձեռքի տակ, որպես կանոն, ունենում են կոնկրետ հարցերի շուրջ պատրաստի հակահայկական պատասխաններով նյութեր: Հայտնի են դեպքեր, երբ միջազգային հանդիպումներին ադրբեջանական կողմից գործուղվող այդպիսի «շրջիկ ինֆորմատորները» ներկայանում են իբրև հայկական «ագրեսիայից» տուժածներ:

Ժողովրդական դիվանագիտության շրջանակներում տարվող քաղաքականության մաս է կազմում նաև Ադրբեջանում և արտասահմանում գործող ՀԿ-ների (ադրբեջանական *GONGO*[1]-ների), ինչպես նաև արտասահմանում ապրող կամ սովորող ադրբեջանցիներից կազմվող համայնքների գործունեու-

[1] Անգլերեն *Government-operated Non-governmental organization*-ից:

թյունը: Ադրբեջանի ներսում այդպիսի GONGO-ների ձևավորումը համակարգված կերպով խրախուսվում է նախագահին կից գործող *Հասարակական կազմակերպությունների պետական աջակցության խորհրդի* կողմից, որը ՀԿ-ներին դրամաշնորհներ է տրամադրում «առաջնահերթ» ոլորտներում գործունեության համար, ինչպիսիք են, օրինակ, *Ադրբեջանի տարածքային ամբողջականության և փախստականների ու հարկադրված տեղահանվածների իրավունքների* հետ կապված ծրագրերը: Այդ մեխանիզմով Ադրբեջանում գործում են նաև «քվազի» իրավապաշտպանական ուղղվածությամբ ՀԿ-ներ, որոնց գործունեությունը ծառայում է ոչ թե Ադրբեջանի քաղաքացիների իրավունքների ազատ իրացմանը, այլ պետական քարոզչական քաղաքականությանը (օրինակ՝ «Ընտրության իրավունք» ՀԿ-ն): Այնուամենայնիվ, ադրբեջանական *GONGO*-ների ամենավառ օրինակն է հանդիսանում Հեյդար Ալիևի անվան հիմնադրամը, որը լինելով ոչ պետական կազմակերպություն՝ ձևավորման օրից կառավարվում է անմիջականորեն Ալիևների ընտանիքի կողմից: Հիմնադրամի նախագահն է ակտիվ գործիչ Մեհրիբան Ալիևան՝ նախագահ Ի.Ալիևի կինը, իսկ Ռուսաստանի Դաշնությունում հիմնադրամի ներկայացուցչությունը գլխավորում է նրանց դուստր Լեյլա Ալիևան:

Հիմնադրամը, սերտորեն համագործակցելով պետական և այլ կառույցների հետ (նախագահի աշխատակազմ, Ազգային անվտանգության նախարարություն, Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիա և օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչություններ), սպասարկում է Ադրբեջանի քաղաքականության հիմնական ուղղությունները, այդ թվում՝ հակահայկական քարոզչությունը: Հիմնադրամը ֆինանսավորում է բազմալեզու գրականության՝ գրքերի, ամսագրերի ու բրոշյուրների հրատարակումը, տարբեր երկրներում դրանց տարածումը, Ադրբեջանում և արտերկրում միջոցառումների անցկացումը, ֆոտոցուցադրությունների կազմակերպումը, վավերագրական ֆիլմերի նկարահանումն ու ցուցադրումը, երիտասարդական քարոզարշավների համակարգումը, ինչպես նաև ինտերնետային էջերի գործարկումը: Հիմնադրամը, լավագույնս համադրելով իր հասարակական կարգավիճակը և կառավարական մանդատը, հնարավորություն ունի մասնակցել միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների ցանցերին և ակտիվորեն համագործակցել աշխարհի տարբեր երկրների հասարակական կառույցների հետ:

Ադրբեջանական կառավարությունը լուրջ ջանքեր է ներդնում նաև տարբեր երկրներում նոր, հատկապես երիտասարդական հասարակական կառույցների ստեղծման ուղղությամբ ու դրանց գործունեությունը պաշտոնական քարոզչական աշխատանքներին ուղղորդելու նպատակով: Վերջիններիս շարքում է *Ռուսաստանի ադրբեջանական երիտասարդական կազմակերպու-*

թյունը, որի 2009թ. ապրիլի 19-ին կայացած հիմնադիր կոնֆերանսում նախագահ ընտրվեց Լեյլա Ալիևան:

Ինչ վերաբերում է արտասահմանում ապրող ադրբեջանցիների մոբիլիզացմանը, նրանց միջև համայնքային կապերի ձևավորմանը և ադրբեջանական սփյուռքի ստեղծմանը, ապա վերոնշյալ հիմնադրամից բացի՝ այդ աշխատանքները հիմնականում տարվում են *Սփյուռքի հետ աշխատանքների պետական կոմիտե* և *Աշխարհի ադրբեջանցիների համակարգման խորհուրդ* կոչվող կառույցների միջոցով, ինչպես նաև տարբեր երկրներում Ադրբեջանի դեսպանատների անմիջական մասնակցությամբ: Համայնքային կառույցներն ադրբեջանական պետական քարոզչական շահերին ծառայեցվում են հակահայկական ակցիաներ կազմակերպելով և հրատարակչական գործունեությամբ: Ընդ որում՝ գրականությունը տարածվում է աշխարհի գրադարաններում, միջազգային կառույցներում, երրորդ երկրների բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում և միջազգային լրատվամիջոցներում:

Այսօր ադրբեջանական համայնքային կազմակերպություններ են գործում ԱՄՆ-ում, Իսրայելում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Թուրքիայում, Վրաստանում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Բելգիայում, Գերմանիայում, Հոլանդիայում և այլուր:

Ժողովրդական դիվանագիտության ճակատը լայնացնելու նպատակով ադրբեջանական կողմը սերտորեն համագործակցում է նաև արևմտյան երկրների իսլամական կամ թուրքալեզու այլ ժողովուրդների համայնքների, հատկապես թուրքական՝ շատ ավելի մոբիլիզացված սփյուռքի հետ, որոնց գործողությունները համատեղվում են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի դեմ և ԼՂՀ հարցում ադրբեջանամետ տեսակետների տարածման հարցերում: Այսպես, 2007-ի նոյեմբերին Ի.Ալիևի նախաձեռնությամբ Բաքվում կայացավ թուրքական պետությունների և համայնքների բարեկամության, եղբայրության և համագործակցության XI նիստը: Նույն տարի, դեռևս մարտի 9-ին, Բաքվում տեղի էր ունեցել ադրբեջանական և թուրքական սփյուռքյան կազմակերպությունների ղեկավարների առաջին ֆորումը, որի արդյունքում ընդունվել էին «Ադրբեջանական և թուրքական սփյուռքյան կազմակերպությունների համատեղ գործունեության ռազմավարություն» և «Բաքվի հռչակագիր» կոչվող փաստաթղթերը: Իսկ արդեն 2008թ. մարտի 27-ին Բեռլինում կայացավ Ադրբեջանական և թուրքական սփյուռքյան կազմակերպությունների համակարգման խորհրդի նիստը, որն այդուհետ որոշվեց գումարել ամեն տարի:

Այսպիսով, ադրբեջանական ՀԿ-ները, արտասահմանում ապրող ադրբեջանցիները և այլ թուրքալեզու միգրանտները, թուրքական համայնքային միավորումները համակարգված տեղեկատվական ցանց են կազմում ժողովր-

դական դիվանագիտության ճանապարհով Հայաստանի և Հայության դեմ մղվող տեղեկատվական պատերազմում: Այդ ցանցն ապահովում է ոչ միայն ցանկալի տեղեկատվական հոսքերը, այլև կազմակերպում է «քաղաքացիական ակցիաներ»՝ փորձելով այդպիսով ազդել միջազգային հանրային կարծիքի վրա:

Ժողովրդական դիվանագիտության հարթությունում նորամուծություն է նաև ամերիկացի ռեփ-երաժիշտ Թոնի Բլեքմանի ներքաշումն ադրբեջանական քարոզչության մեջ: Այս նախագծի շրջանակներում Թոնին ադրբեջանական մի խմբի հետ համատեղ պետք է հանդես գա հակահայկական կատարմամբ:

Լոբբինգային գործունեություն: Այս բնագավառում Ադրբեջանն օգտագործում է և՛ դիվանագիտական խողովակները, և՛ տվյալ երկրի իր համայնքային ռեսուրսներն ու ՀԿ-ները: Այս հարթությունում տարվող աշխատանքներից է զանազան ճանապարհներով օտարերկրյա դիվանագետների ներքաշումն ադրբեջանամետ դիրքեր, ինչպես նաև հակահայկական գործողություններով աչքի ընկած անձանց առաջխաղացման աջակցությունը տարբեր երկրների քաղաքական ասպարեզներում:

Լոբբինգային գործունեությամբ հատկապես աչքի է ընկնում Իսրայելում 2007թ. հիմնադրված «Իսրայել-Ադրբեջան» միջազգային ասոցիացիան (կրճատ՝ «ԱզԻզ»): Այն հիմնադրվել է ծնունդով բաքվեցի, Իսրայելի 17-րդ գումարման Քնեսեթի պատգամավոր Յոսեֆ Շագալի[1] և Արտասահմանում ապրող ադրբեջանցիների հետ աշխատանքների պետական կոմիտեի[2] համատեղ ջանքերով և միավորում է 80-110 հազար անդամ ողջ Իսրայելից (այդ թվում՝ Ադրբեջանից տեղափոխված իսրայելցիների բոլոր նախկին համայնքային կառույցները և նրանց անդամներին): Կառույցում ներգրավված են հասարակական կշիռ ունեցող նախկինում ադրբեջանաբնակ հրեաներ՝ 30 գործող լրագրող Իսրայելի ռուսալեզու ԶԼՄ-ից, շուրջ 15 պրոֆեսոր իսրայելական 6 համալսարանից, 150 բժիշկ և այլն: Այս կառույցի գործունեությունն ուղղված է Ադրբեջանի և Իսրայելի, ինչպես նաև Ադրբեջանի և ԱՄՆ-ում հրեական լոբբիի միջև կապերի հաստատմանն ու զարգացմանը, հակահայկական և ադրբեջանամետ քաղաքականության աջակցմանը: Կարճատև գործունեության ընթացքում «ԱզԻզ»-ը հասցրել է անմիջական դերակատարում ունենալ Իսրայելի և Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումների կազմակերպման, Ամերիկայի հրեական կոմիտեի և Ադրբեջանի

[1] Հատկանշական է, որ «ԱզԻզ»-ի նախագահ Յոսեֆ Շագալն այլևս տեղ չի զբաղեցնում 2009թ. 18-րդ գումարման Քնեսեթում, ինչի հետ կարող է կապված լինել կազմակերպության ակտիվության նվազեցումը: Կառույցի ֆորումում 2009թ. մարտին նույնիսկ նշվում է գումարների սղության մասին (http://www.druzya.com/forum/showthread.php?t=50572):

[2] 2008-ից այն վերանվանվել է Սփյուռքի հետ աշխատանքների պետական կոմիտե:

իշխանությունների միջև կապերի հաստատման[1], ինչպես նաև 2008թ. Քնեսեթում Հայոց ցեղասպանության ճանաչումը մերժելու, հրեաների կոտորածներում հայերին մեղադրող ադրբեջանական քարոզչական գրականությունն Իսրայելում հրատարակելու և տարածելու աշխատանքներում: «ԱզԻզ»-ի գործադիր տնօրեն Լև Սպիվակը Ռովշան Մուսթաֆաևի[2] 2008թ. փետրվարին Մոսկվայում լույս տեսած «Մահվան տանգո» գրքի գլխավոր խորհրդատուն էր, 2008թ. աշնանը Երուսաղեմում եբրայերեն և անգլերեն լեզուներով լույս տեսած «Մահվան երթ» հերթական հակահայկական քարոզչական աշխատության գրախոսը: Այդ «աշխատություններում» հեղինակը հայկական ծագում է որոնում Հոլոքոստի առաջնորդների շրջանում՝ միաժամանակ հայերին մեղադրելով 1918-1919թթ. ադրբեջանական Ղուբա քաղաքում հրեաներին կոտորելու մեջ[3]: «ԱզԻզ»-ի ջանքերով «Մահվան երթը» բաժանվել է Քնեսեթի անդամներին և Իսրայելի գրադարաններին, տարածվել այլ երկրներում: Կարևոր հանգամանք է այն, որ չնայած «Իսրայել-Ադրբեջան» միջազգային ընկերակցության ծավալուն աշխատանքներին՝ նրանց գործողություններն իրականում համընդհանուր թուրքական ավանդական քաղաքականության դրսևորումներն են[4]:

Լոբբինգային բաղադրիչում շահարկվում է նաև «մարդու իրավունքների» գաղափարը: Օրինակ, Ադրբեջանի Մարդու իրավունքների պաշտպան Էլմիրա Սուլեյմանովան նպատակային հակահայկականություն է քարոզում միջազգային կառույցների շրջանակներում՝ մեղադրելով հայերին բազմաթիվ հանցանքներում, այդ թվում՝ միանգամից 3 ցեղասպանությունների կատարման մեջ՝ «Քյարքիջահանի, Ղարադաղլիի և Խոջալուի»[5]:

[1] 2007թ. «ԱզԻզ»-ի նախագահ Յոսեֆ Շագալի ակտիվ մասնակցությամբ տեղի ունեցավ ԱՄՆ հրեական կառույցների հետ Նազիմ Իբրահիմովի (Արտասահմանում ապրող ադրբեջանցիների հետ աշխատանքների պետական կոմիտեի ղեկավար) առաջին հանդիպումը, որի ժամանակ ամերիկացի ազդեցիկ հրեաներին «ապշեցրին իրական տեղեկություններն այն մասին, որ Ադրբեջանն աշխարհի միակ երկիրն է, որտեղ հակասեմիթականության ոչ մի դեպք երբևէ չի դրսևորվել» (http://day.az/news/politics/98646.html): Իսկ արդեն հաջորդ տարի Ամերիկայի հրեական կոմիտեի գործադիր տնօրեն Դեյվիդ Հարիսը եռօրյա այցով հյուրընկալվեց Բաքվում, հանդիպում ունեցավ Ի.Ալիևի հետ և մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ իր կազմակերպությունը ԱՄՆ-ում ներկայացնելու է Ադրբեջանի շահերը (http://ayekikan.wordpress.com/2008/08/19/american-jewish-committee-to-lobby-for-azeri-interests-announces-director/):

[2] Այժմ հանգուցյալ Ռովշան Մուսթաֆաևը Ադրբեջանի ԳԱԱ Մարդու իրավունքների ինստիտուտի տնօրենն էր և երկրում համարվում է «տեղեկատվական պատերազմի ինքնամոռաց մասնակից» (http://www.xalqqazeti.com/index.php?lngs=aze&cats=12&ids=26654):

[3] Ռովշան Մուսթաֆաևը 2002թ. *Преступления армянских террористических и бандитских формирований против человечества (XIX-XXI вв.), Баку - элм – 2002* հրատարակությունում մեղադրում է հայերին էթնոազգային տարբեր խմբերի անմարդկային, գազանաբար ոչնչացման մեջ, ընդ որում՝ հղում է կատարում *հակասեմիթականությամբ* և *հայատյացությամբ* հայտնի ծայրահեղ նացիոնալիստ Վասիլի Լվովիչ Վելիչկոյի վկայություններին (http://www.kitab.az/cgi-bin/catlib2/item.cgi?lang=az&item=20060619060511499):

[4] 2009թ. փետրվարին Թուրքիայի արտգործնախարարի Իսրայել այցելության և նրա կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի հակազդման աշխատանքների մասին տեղեկանում ենք Թոմ Սեգևի *«Mozart and the Armenian genocide»* հոդվածից (http://www.haaretz.com/hasen/spages/914602.html):

[5] http://www.regnum.ru/news/1056691.html

Ադրբեջանական լոբբինգային գործունեության ամենացցուն արդյունքը կարելի է համարել Նևադայի նահանգապետ Ջիմ Գիբոնսի կողմից մարտի 31-ը իբրև «ադրբեջանցիների հիշատակի օր» հռչակելը[1]: Այս ձեռքբերումը ԱՄՆ-ում կազմավորված ԱՄՆ ադրբեջանցիների ցանց *(US Azeri's Network՝ USAN)* կազմակերպության և նրա գործադիր տնօրեն Ադիլ Բաղիրովի[2] ջանքերի հետևանքն է: Կազմակերպության շնորհիվ է, որ ԱՄՆ Կոնգրեսի նիստերի արձանագրություններում ներառված են ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի մի շարք անդամների ելույթները՝ նվիրված Խոջալուի ողբերգությանը: Ակնհայտ է, որ *USAN-ը* (այն սովորաբար անվանում են «թանկարժեք լոբբիստներ») այս արդյունքով չի սահմանափակվելու: Ադիլ Բաղիրովի խոսքերով. «...քաղաքական գործունեության շնորհիվ հնարավոր է շատ բան անել... Մենք կարող ենք շատ բանի հասնել և մրցել նույնիսկ այնպիսի ուժեղ մրցակցի հետ, ինչպիսին է հայկական սփյուռքն ու իր լոբբին»[3]:

Ներքաղաքական բաղադրիչ: Ադրբեջանի ներքաղաքական կյանքում հակահայկական տրամադրությունների ձևավորումը միանշանակ և այլընտրանք չունեցող ուղեգիծ է: Իշխանությունների ռազմատենչ հռետորաբանությունը, ռազմական բյուջեի ցուցադրական ուռճացումը, ԶԼՄ կառավարումը և իշխանական տեղեկատվական հոսքերին հակասող դիրքորոշումների լռեցումը ծառայում են հակահայկական ինֆոքաղաքականությանն ու ադրբեջանական հանրության շրջանում հայի կերպարի նկատմամբ անհանդուրժողականության սերմանմանը: Այսօրինակ ռազմավարության արդյունքում հակահայկականությունը դարձել է Ադրբեջանի հասարակության առօրեականության մաս: Դրան են ծառայում հայերի կողմից հրադադարի ռեժիմի խախտման կեղծ տեղեկատվությունների և հակահայկական նյութերի գրեթե ամենօրյա հրապարակումներն ադրբեջանական ԶԼՄ-ում, ինչպես նաև պետական տոնացույցում մի շարք տոների և սգո օրերի սահմանումը, ինչպիսիք են, օրինակ, հունվարի 20-ին «համազգային սգո օրը», փետրվարի 26-ին «Խոջալուի ցեղասպանության և համազգային սգո օրը», մարտի 31-ին «ադրբեջանցիների ցեղասպանության օրը» և հունիսի 15-ին «ազգային փրկության օրը»:

ԼՂՀ գոյության մերժումը և նրա՝ որպես Ադրբեջանի մաս ընկալումը ևս ներմուծվում է առօրեականություն՝ քարտեզագրության, եղանակի տեսության և նպատակահարմար ռակուրսով լրատվության հաղորդման միջոցով:

[1] http://www.panarmenian.net/news/eng/?nid=32022&date=2009-05-21

[2] Ադիլ Բաղիրովը 2009թ. փետրվարին Ադրբեջանի նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Շոխրեթ» շքանշանով՝ պետական ծառայության մեջ արդյունավետ գործունեության համար: Նա *USAN-ի* գործադիր տնօրենի պաշտոնը համատեղում է Ռազմավարական հետազոտությունների միջազգային կենտրոնի փոխնախագահի պաշտոնի հետ:

[3] http://www.eurasianet.org/russian/departments/insight/articles/eav050809aru.shtml

Այսպես, օրինակ. ԼՂՀ քաղաքների եղանակի տեսությունը ներկայացվում է Ադրբեջանի համատեքստում, կամ՝ «Ղարաբաղ» անունով ադրբեջանական ֆուտբոլային թիմը մշտապես հաջողություններ է արձանագրում:

Կրթական քաղաքականությունը ևս մեծ դեր ունի տեղեկատվական գործողություններում. Ադրբեջանում երեխաների սոցիալացումն ընթանում է պատմության կեղծարարության և հայերի միանշանակ դիվայնացման (դեմոնիզացիայի) ու ապամարդկայնացման (դեհումանիզացիայի) համատեքստում: Դրա վկայությունն է դպրոցական դասագրքերում հայերին վերագրվող «սարսափների քարոզչությունը», որն առնչվում է մեծ մասամբ Խոջալուի դեպքերի մեկնաբանությանը և հայերի անմարդկային թուրքատյացության մասին ինֆոլոգեմներին[1]: Արդյունքում՝ հատկապես Ադրբեջանի երիտասարդության շրջանում հայի՝ իբրև ագրեսորի և թշնամու, ընկալումը վերածվում է ազգային հոգեկերտվածքի:

Ներքին հակահայկականությունը ինքնավերարտադրվող քաղաքականություն է. մեկ անգամ նպատակային ձևով ներմուծվելով և մշտապես խրախուսվելով (նախագահի կողմից տրվող շքանշանների կամ գումարային մրցանակների տեսքով, ինչպիսին է, օրինակ, Ազգային անվտանգության նախարարության կողմից Սամիր Ասկերխանովի անվանական մրցանակաբաշխությունը)[2]՝ այն պարարտ հող է դառնում բազմաթիվ ինքնաբուխ նախաձեռնությունների համար:

Մեդիա բաղադրիչ: Ադրբեջանի իշխանությունների տեսանկյունն օպերատիվ կերպով տարածելու և ադրբեջանամետ դիրքորոշումներ ձևավորելու համար Ադրբեջանը ռազմավարական նշանակություն է տալիս մեդիա դաշտին և մեծ ռեսուրսներ է ներդնում այս ոլորտում: Մեդիան այն հիմնական բաղադրիչն է, որի միջոցով ընթանում է տեղեկատվական ազդեցությունը

[1] «Ինֆոլոգեմը» ինֆորմացիոն միֆոլոգեմի համադրությունն արտահայտող հասկացություն է և նշանակում է իրական փաստերը դուրս մղող կեղծ տեղեկատվություն: Ինֆոլոգեմները ձևավորվում են չգիտակցված մոլորությունների կամ էլ գիտակցված և նպատակաուղղված մանիպուլյացիաների ազդեցությամբ: Դրանց բնորոշ է ինքնավերարտադրումը, լայն տարածումը և ներթափանցումը համակարգում: Ինֆոլոգեմներն ազդում են անձի վրա փաստացիորեն անսահմանափակ ժամանակահատվածում, քանի որ հեշտորեն են հայտնվում տեղեկատվական ֆոնդերում, գրքերում, արխիվային նյութերում, դառնում են դրանց տարրը և այդ կերպ մասնակցում մարդկանց գիտակցության մեջ խեղված պատկերի ձևավորմանը: Դրանք ձևավորում են անհատական և սոցիալական վարքի կայուն կարծրատիպեր և ունակ են ապակողմնորոշել ամբողջ սերունդներ (*Коган В.З.,* «Качество информации и мир инфологем (фрагменты теории). - Проблемы информационного взаимодействия», Новосибирск, 1993):

[2] Այս մրցանակաբաշխության հայտարարվող նպատակներից է «ադրբեջանական իրականությունը միջազգային հանրությանը ներկայացնելը», իսկ «լրագրողական աշխատանք», «գիտական հետազոտություն», «ժամանակակից տեղեկատվական քարոզչություն», «կինո և կերպարվեստ» անվանակարգերում հաղթողների աշխատանքներն ավանդաբար հակահայկական բնույթ ունեն (մանրամասն տե՛ս *Դեմոյան Հ.,* «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին», էջ 69, http://www.noravank.am/file/article/76_am.pdf):

հայկական լսարանների ուղղությամբ և ոչ միայն միջնորդավորված, այլ երկրների ԶԼՄ-ով, այլև ուղղակիորեն՝ ինտերնետի օգնությամբ: Համացանցի բոլոր հնարավորությունները լայնորեն օգտագործվում են ադրբեջանական քարոզչամեքենայի կողմից. ներկայումս գործում են Ադրբեջանում և այլ երկրներում գրանցված հակահայկական բովանդակությամբ հարյուրավոր կայքեր: Վերջին շրջանում ակտիվացած այդպիսի մի ձեռնարկ է «Արդարություն Խոջալուի հարցում» միջազգային քարոզարշավի շրջանակներում *www.justiceforkhojaly.org* կայքի գործարկումը և դրա շնորհանդեսի կազմակերպումը աշխարհի տարբեր խոշոր քաղաքներում: Նախաձեռնողը կրկին Լեյլա Ալիևան է, այս անգամ, սակայն, այլ կարգավիճակով՝ իբրև Իսլամական կոնֆերանսի երիտասարդական ֆորում կազմակերպության Մշակույթների և քաղաքակրթությունների երկխոսության հարցերի գլխավոր համակարգող:

Համաշխարհային ավանդական մեդիա դաշտում նպաստավոր դիրքեր գրավելու նպատակով Ադրբեջանն իրականացնում է մի շարք քայլեր՝ սկսած հեղինակավոր զանգվածային լրատվամիջոցներում նյութեր պատվիրելուց ու նրանց հետ համագործակցություն հաստատելուց, մինչև դրանց բաժնետոմսերի փաթեթների ձեռքբերումը: Վերջերս կայացած համագործակցության օրինակ է *«Trend»* ադրբեջանական լրատվական գործակալության և իտալական *«Adnkronos International» (AKI)* լրատվական ծառայության միջև կնքված համաձայնագիրը, որը ենթադրում է լրատվական և վերլուծական նյութերի փոխանակություն, ինչպես նաև էքսկլյուզիվ նյութերի պատրաստում: *AKI* մեդիա գործակալությունն այն 11 կազմակերպություններից է, որոնք միավորվել են *«The GMC Group»* մուլտիլրատվական հրատարակչական խմբում և համագործակցում են «*Reuters International»-ի, «Scripps Howard News Service»-ի, «Los Angeles Times»-ի, «Washington Post News Service»-ի, «Deutsche Presse Agentur»-ի, «The New China News Agency»-ի* և այլոց հետ[1]: *«Trend»-ի* նոր գործընկերների շարքում է նաև *«Укринформ»* ուկրաինական պետական գործակալությունը:

ՌԴ մեդիա դաշտում Ադրբեջանն օգտագործում է նաև դեռևս խորհրդային ժամանակներից ռուսական լրատվականներում դիրքեր զբաղեցնող ադրբեջանցիներին: Օրինակ, հակահայկական նյութերով աչքի ընկնող *«Комерсантъ»* օրաթերթի փոխխմբագիրն էր Ազեր Մուրսալիևը, որը 2009թ. հունվարի 13-ին դարձավ գլխավոր խմբագիր[2]:

Արտերկրում ադրբեջանական լրատվական պարբերականները և կայքերը ծառայում են ինչպես տվյալ համայնքների համախմբման գործին, այնպես էլ հյուրընկալող երկրներում կատարվող հակահայկական քարոզչությանը: ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում ադրբեջանցիների գլխավորությամբ լույս է տեսնում երկու ռուսալեզու թերթ «Ազեռռոս» և «Ադրբեջանական կոնգրես», վերլու-

[1] http://www.day.az/news/society/152559.html

[2] http://www.gazeta.ru/news/lastnews/2009/01/13/n_1316901.shtml

ծական ամսագրեր՝ *«Вестник Аналитики»* և այլն, որոնք թե՛ ակտուալ, թե՛ պոտենցիալ հակահայկական հարթակներ են: Միաժամանակ Մոսկվայում և Բաքվում՝ Մուսա Մարջանլիի խմբագրությամբ, 3 լեզվով հրատարակվում և տարածվում է *«IRS Наследия»* պարբերականը, որի էջերը ծառայում են հակահայկական քարոզչությանը: Օրինակ՝ 2008թ. 5-րդ համարի բոլոր հոդվածներն առնչվում էին Հայաստանին և Հայությանը: Մասնավորապես, «Նրանք չպետք է անպատիժ մնան» խորագրով հոդվածում ներկայացված են ՀՀ գործող և երկրորդ նախագահների, ՊՆ գործող նախարարի և 38 անձանց անուններ, որոնք մեղադրվում են պատերազմական գործողությունների ժամանակ «Խոջալուում խաղաղ բնակչության սպանության մեջ»:

Այլ երկրների ԶԼՄ դաշտում ադրբեջանական քաղաքականությունն առաջնորդվում է նաև հայկական կողմի հետ մրցակցության տրամաբանությամբ: Այսպես, օրինակ, Մոսկվայում և ՌԴ այլ քաղաքներում, ինչպես նաև հայաստանյան ռուսալեզու հանրության շրջանում հաջողություն ունեցող *«Ереван»* ամսագրի նմանությամբ 2008-ից Մոսկվայում լույս է տեսնում *«Баку»* ժամանցային ամսագիրը, որի գլխավոր խմբագիրը և հրատարակիչը նույն Լեյլա Ալիևան է:

Ադրբեջանական իշխանությունները վարում են կոշտ տեղեկատվական քաղաքականություն ներքին դաշտում, մասնավորապես՝ 2009թ. հունվարի 1-ից երկրի տարածքում (ազգային ռադիոալիքների հաճախության վրա) կասեցնելով արևմտյան այնպիսի լրատվամիջոցների հեռարձակումը, ինչպիսիք են *«Radio Liberty»-ն, «Voice of America»-ն և «BBC»-ն:* Բաքուն հայտարարեց, թե արտասահմանյան ալիքների բացը լրացնելու նպատակով պլանավորում է մոտ ապագայում (նախատեսվում էր 2009թ. մայիսին), միջազգային բազմալեզու՝ անգլերեն, ռուսերեն, պարսկերեն, թուրքերեն և հայերեն, հեռուստաընկերություն գործարկել *(«ATV İnternational»),* որը ժամը մեկ լրատվություն կհաղորդի նշված բոլոր լեզուներով: Հետագայում պարզ դարձավ, որ *«ATV International»-ը* նախատեսված չէ Ադրբեջանի ներքին լսարանի համար: Այն գործարկվեց 2009թ. հոկտեմբերի 5-ին՝ արբանյակային հեռարձակմամբ սփռվելով հարևան երկրների, այդ թվում՝ Իրանի և, իհարկե, ՀՀ ու ԼՂՀ տարածքում: Հայերեն հեռարձակումները նախաձեռնության հեղինակների կողմից դիտարկվում են որպես «հայկական լսարանին Ադրբեջանի մասին ճշմարտությունը հասցնելու» և «Լեռնային Ղարաբաղի հայերին ուղղակիորեն դիմելու» հնարավորություն: Հայերենի իմացությամբ մասնագետներ պատրաստելու և հայերեն հեռուստահաղորդումների պատրաստմանն աջակցելու նպատակով գործում ներգրավված է նաև Գաֆար Չախմաղլիի գլխավորած Հայկական հետազոտությունների կենտրոնը[1]:

[1] «ЦАИ может помочь в подготовке телепередач на армянском языке», 2009.03.06, http://www.1news.az/society/20090306062649397.html

Ադրբեջանական իշխանությունների կողմից ԶԼՄ ամբողջական վերահսկմանն ուղղված քայլերից է 2009թ. ապրիլի 3-ին Ադրբեջանի նախագահին կից Մամուլի կառավարական աջակցության հիմնադրամի ստեղծումը: Երկրի վարչապետին հանձնարարված էր մեկ ամսվա ընթացքում հիմնադրամին տրամադրել շենք, հարմարություններ և հոգալ պետական բյուջեից հիմնադրամի համար միջոցներ հայթայթելու մասին: Մամուլի խորհուրդը պատրաստել է Հիմնադրամի վերստուգիչ հանձնաժողովի անդամների ցուցակը, որում ընդգրկվել են Ադրբեջանի առաջատար լրատվամիջոցների *(Day.az, APA, Ayna, Zerkalo, 525, Turan)* ղեկավարները[1]:

Տեխնոլոգիական բաղադրիչ: Ադրբեջանը, ոչ առանց թուրքական աջակցության, փորձում է Հայաստանի նկատմամբ գերազանցության հասնել նաև տեխնոլոգիական, մասնավորապես՝ հաքերային կիբեռպատերազմների ոլորտում: Ադրբեջանական հաքերական գործողությունները հայկական ինտերնետային ռեսուրսների նկատմամբ առաջին անգամ փորձարկվել են 2000թ.՝ պարբերաբար ինտենսիվանալով: Հայաստանյան փորձագետների կարծիքով՝ հաքերային դաշտում ադրբեջանական վերջին հարձակումները «զինավարժությունների» տպավորություն են թողնում, ինչը վկայում է այն վարկածի օգտին, որ դրանք իրագործվում են պետական համակարգի, թերևս՝ Ազգային անվտանգության նախարարության Քարոզչության և ինֆորմացիայի վարչության կողմից: Եթե նախկինում նման գործողությունները նպատակ ունեին խախտել հայկական կայքերի հասանելիությունը, հոգեբանորեն ներգործել դրանցից օգտվողների վրա, ինչպես նաև սեփական հանրությանը հոգեբանական հաղթանակի բերկրանք պարգևել, ապա այժմ դրանք առավելապես ուղղված են տեղեկատվական գաղտնիության համակարգերի խաթարմանը, դրանցում խոցելի հանգույցների բացահայտմանը և տեղեկատվական բազաների ձեռքբերմանը:

Հաղորդակցական և տեղեկատվական տեխնոլոգիաների հանդեպ Ադրբեջանի իշխանությունների լուրջ մոտեցման մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ 2006թ. Ի.Ալիևի հրամանով դեկտեմբերի 6-ը հռչակվել է Ադրբեջանի Կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակիցների մասնագիտական օր: Նշված նախարարության գործունեությունն ուղղված է ինտերնետում պետական քաղաքականության մոտեցումների մշակմանը, ինտերնետ-դոմեյնների անուններին առնչվող հարցերի լուծմանը (հավանաբար, նաև դրանց ձեռքբերմանը և պահպանմանը) և հեռահաղորդակցության դաշտում Ադրբեջանի տարածաշրջանային գերակայության ապահովմանը: Այդ նպատակով Ադրբեջանն արդեն սեփականության իրա-

[1] «Օբյեկտիվ» ստերի հերթական երամը», http://www.armtown.com/news/am/aza/20090421/7497/, 2009.04.21

վունքով ձեռք է բերել 3 ուղեծրային դիրք և նախատեսում է առաջին կապի արբանյակը բաց թողնել 2010թ., իսկ երկրորդը՝ 2011թ.՝ դառնալով տիեզերական կապի ծառայություններ մատուցող երկիր: Կարելի է համոզված լինել, որ նման հնարավորությունները կօգտագործվեն հակահայկական տեղեկատվական գործողություններն ակտիվացնելու նպատակով:

2. Հակահայկականությունը տեղեկատվական գործողությունների հարթությունում

Արդեն կոնկրետ տեղեկատվական գործողությունների հարթությունում ուսումնասիրությունները հարկ է կատարել՝ հաշվի առնելով, որ վերջիններս իրենց էությամբ հաղորդակցական համակարգեր են: Ըստ այդմ, տեղեկատվական գործողությունների կառուցվածքային տարրերն են.

1. սոցիալական համատեքստը,
2. տեղեկատվական աղբյուրը,
3. հաղորդակցման միջոցը,
4. հաղորդագրությունը,
5. լսարանը,
6. հիմնանպատակը:

Մեթոդաբանական տեսանկյունից այս տարրերից յուրաքանչյուրի առանձին բնութագրիչները, ինչպես նաև դրանց համադրությունը, խիստ կարևոր են տեղեկատվական գործողության հաջողության և ազդեցության առումներով: Հետևաբար՝ տեսնենք, թե ադրբեջանական նախաձեռնություններում ինչպես են կիրառվում հաղորդակցական համակարգի տարրերը, և հակահայկական տեղեկատվական գործողությունների ինչպիսի մեխանիզմներ ու մեթոդներ են նկատվել դրանցից յուրաքանչյուրում:

Սոցիալական համատեքստ: Սոցիալական համատեքստը լայն իմաստով այն տարածական և ժամանակագրական միջավայրն է, որտեղ կայանում է հաղորդակցումը կամ տեղեկատվական գործողությունը: Ադրբեջանական կողմը, հաշվի առնելով համատեքստի նշանակությունը հակահայկական տեղեկատվական գործողություններում, փորձում է հօգուտ իրեն օգտագործել բարենպաստ իրավիճակները, իսկ անբարենպաստ գործոնները ձգտում է հավասարակշռել կամ չեզոքացնել օպերատիվ և մարտավարական-ռազմավարական հարթություններում: Այսպես, օրինակ, սոցիալական համատեքստի *անբարենպաստ գործոնների հավասարակշռման կամ չեզոքացման մարտավարական-ռազմավարական* նպատակով էր պայմանավորված 2004թ. օգոստոսին Հունգարիայում Ադրբեջանի դեսպանատան բացումը: Դրա նպատակն

էր համակարգել ադրբեջանցի սպա Ռամիլ Սաֆարովի դատավարության հետ կապված տեղեկատվական և այլ բնույթի գործողությունները[1]:

Հատկանշական է, որ Հունգարիայում Ադրբեջանի դիրքերի ամրապնդմանն ուղղված տեղեկատվական գործողությունները շարունակվում են մինչև օրս. 2008թ. նոյեմբերին Բուդապեշտում կայացավ արդեն ավանդական դարձած «Հունգարիա-Ադրբեջան. մշակութային երկխոսություն» III միջազգային գիտական կոնֆերանսը, որի քննարկումները նվիրված էին նաև ժամանակակից հունգարական պատմագրության մեջ Ադրբեջանի պատմության հարցերին[2]:

Անբարենպաստ գործոնները հավասարակշռվում են նաև *օպերատիվ* տեղեկատվական գործողությունների միջոցով: Այսպես, օրինակ. եթե Հայաստանում հարևան Վրաստանի նախագահ Մ.Սահակաշվիլին այցելել է Հայոց ցեղասպանության հուշահամալիր, ապա ադրբեջանական տեղեկատվական դաշտում անպայման հայտնվում են 1-2 վրացի պատմաբանների հետ հարցազրույցներ, որոնք իրենց խոսքում ժխտում են Հայոց ցեղասպանությունը, արժեզրկում հայ-վրացական հարաբերությունները, պիտակավորում և մեղադրանքներ ներկայացնում Հայությանը[3]:

Ադրբեջանի կողմից սոցիալական համատեքստի *նպաստավոր գործոնների օգտագործման* առումով հատկանշական է 2008 թ. մարտի 1-ից հետո ՀՀ-ում ստեղծված քաղաքական դրության օգտագործումը իրավական, արտաքին քաղաքական, ներքաղաքական և այլ հարթություններում: Այդ համատեքստում էր, որ 2008թ. մարտի 14-ին Ադրբեջանին հաջողվեց ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 62-րդ նստաշրջանի օրակարգ ներառել իր կողմից պատրաստված «Իրադրությունը Ադրբեջանի գրավյալ տարածքներում» բանաձևը և հասնել դրա ընդունմանը ՄԱԿ անդամ 192 երկրներից ընդամենը 39-ի «կողմ» քվեարկությամբ:

Այսպիսով, և՛ միջազգային, և՛ հայաստանյան մասշտաբներով *սոցիալական համատեքստի մոնիթորինգը* և դրանում ցանկացած *նոր գործոնների հաշվարկումը* նպաստում են ադրբեջանական տեղեկատվական գործողությունների նպատակադրմանը և արդյունավետ կիրառմանը:

---

[1] Ադրբեջանի ԶՈՒ սպա Ռամիլ Սաֆարովը 2004թ. ձմռանը, երբ մասնակցում էր Բուդապեշտում ՆԱՏՕ «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրին, քնած ժամանակ կացնահարել էր նույն ծրագրի մասնակից, ՀՀ ԶՈՒ սպա Գուրգեն Մարգարյանին: Դատաքննության ժամանակ Ռ.Սաֆարովն իր արարքը էթնիկ ատելության պատճառաբանություններով էր պայմանավորել, որից դատական լսումների ժամանակ հրաժարվել էր:
http://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%B0%D1%84%D0%B0%D1%80%D0%BE%D0%B2,_%D0%A0%D0%B0%D0%BC%D0%B8%D0%BB%D1%8C_%D0%A1%D0%B0%D0%B3%D0%B8%D0%B1_%D0%BE%D0%B3%D0%BB%D1%8B

[2] «Венгерским ученым предложено организовать научные экспедиции в Азербайджан», 2008.11.21, http://www.media-v.hu/index.php?page=news&set=month&id=4142

[3] Грузинский историк: «У армян так заведено: где бы они не жили, эту местность считают армянской территорией», 2009.06.27, http://1news.az/analytics/20090627044431735.html

Ադրբեջանական կողմը, սակայն, չի բավարարվում սոցիալական համատեքստի օբյեկտիվորեն տրված իրավիճակներով և *նախահարձակ գործողություններով ներմուծելով արհեստական գործոններ* (օրինակ, հայերին ադրբեջանցիների կոտորածներում մեղադրող օրացուցային սգո օրերի հռչակումը)՝ փորձում է իրականացնել *սոցիալական համատեքստի սուբյեկտիվ ձևավորում*: Դա թույլ է տալիս փոխակերպել հաղորդակցության տրամաբանությունը և հայկական կողմին թողնել միայն պաշտպանության դիրքերը: Նման մեթոդներով ստեղծված սոցիալական համատեքստը դառնում է նաև որոշակիորեն կայուն միջավայր, որտեղ ադրբեջանական քարոզչությունն իրականացվում է *նախապես պատրաստված շաբլոնների կիրառմամբ*: Վերջիններս օգտագործվում են նաև սպասվող օրացուցային իրադարձությունների (ինչպես, օրինակ, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրն է՝ ապրիլի 24-ը) և այլ կանխատեսելի իրավիճակների դեպքերում:

Տեղեկատվության աղբյուր: Տեղեկատվական աղբյուրի գլխավոր բնութագրիչներն են դրա նկատմամբ *վստահությունը, հեղինակությունը, աղբյուրների բազմազանությունը և աղբյուրի «լեգիտիմությունը»*: Այդ իսկ պատճառով հակահայկական տեղեկատվություն տարածող աղբյուրի ընտրության հարցում ադրբեջանական կողմը նախապատրաստված մոտեցումներ է ցուցաբերում: Այն նախ փորձում է ադրբեջանական քարոզչական աղբյուրներին *հեղինակավորություն* հաղորդել և դրանց նկատմամբ *բարձր վստահություն ձևավորել*՝ դրանք բնութագրելով *դրական իմիջավորման պիտակներով*: Այսպես, օրինակ, ադրբեջանական «Ազերթաջ» պաշտոնական լրատվական գործակալության վերլուծաբան Վուգար Սեիդովը ներկայացվում է իբրև «հայտնի քաղաքագետ», որն իր նյութերը ստորագրում է մե՛կ Բուդապեշտից, մե՛կ Բեռլինից՝ թողնելով միջազգային փորձագետի տպավորություն: Համանման սկզբունքով բոլոր հակահայ քարոզչական գործիչները «հայտնի գիտնականներ» և «ճանաչված գործիչներ» են հռչակվում:

Աղբյուրի հարցում երկրորդ մեթոդաբանական մարտավարությունը *աղբյուրների դիվերսիֆիկացման պատրանք ձևավորելն է*՝ հակահայկական գործողություններում ոչ միայն տեղական, այլև օտարերկրյա հետազոտող գիտնականների ու լրագրողների ներգրավման միջոցով: Ընդ որում՝ կեղծչեզոք օտարերկրացիների (ինչպիսիք են, օրինակ, Էրիխ Ֆայգլը և Յուրի Պոմպեևը) ընդգրկումն օգտագործվում է նաև իբրև հակահայկական տեղեկատվական գործողությունների *լեգիտիմացման* միջոց: Խիստ կարևորվում են նաև օտարերկրյա դիվանագետների և քաղաքական գործիչների ադրբեջանամետ հայտարարությունները՝ դրանք ներկայացվելով իբրև միջազգային հանրության օբյեկտիվ կարծիք:

Ադրբեջանական կողմը սեփական ապատեղեկատվության *լեգիտիմացման* համար մշտապես փորձում է *հղում կատարել հայկական կամ հայկական թվացող աղբյուրներին*: Այս նպատակով երբեմն քարոզչական տեքստերի տակ *հայկական ազգանուններով՝ գոյություն չունեցող անձինք* են ստորագրում, հայտնի *հայ գործիչներին հորինված նախադասություններ են վերագրվում,* կամ էլ՝ *նրանց մտքերը ներկայացվում են համատեքստից դուրս՝ իմաստափոխված ձևով*: Հայ գործիչներին հորինված մտքեր վերագրելու առումով տիպիկ օրինակ է իբր Զորի Բալայանի հեղինակած գրքի ինֆոլոգեմը: Այսպես, Ռովշան Նովրուզօղլին, որը «Բանկ-տեղեկատվություն» կենտրոնի տնօրենն էր, 2006թ. հունիսի 2-ին *«Зеркало»* թերթում «հայերի՝ ադրբեջանցիների նկատմամբ իրականացրած գազանությունների» մասին «մեջբերումներ» է կատարում Զորի Բալայանի «Հարություն» գրքից: Նշվում է անգամ, որ գիրքը լույս է տեսել 1996թ. Վանաձորում, մինչդեռ ո՛չ Զ.Բալայանը, ո՛չ էլ որևէ այլ հեղինակ երբևէ նման գիրք չի հրատարակել[1]: Հատկանշական է, որ Եվրախորհրդի 2009թ. ամառային նստաշրջանում Ադրբեջանի Միլի մեջլիսի պատգամավոր Գանիրա Փաշաևան (Մեհրիբան Ալիևայի քույրը) իր ելույթում կրկին «մեջբերումներ» է կատարել միֆական գրքից (այս անգամ այն կոչվել է «Մեր ոգու վերակենդանացումը»)՝ թարմացնելով հակահայկական ապատեղեկատվությունը միջազգային հանրության առջև[2]:

Լեգիտիմացման նպատակին էին ծառայում նաև *«am»* դոմեյնային տարածության մեջ գրանցված *(xronika.am, versiya.am)* և իբրև հայկական ներկայացող ադրբեջանական քարոզչակայքերը: *versiya.am–ը* համեմատաբար կարճատև կյանք ունեցավ և առաջին իսկ կեղծ-հայամետ տեղեկատվությունից բացահայտվեց՝ արժանանալով հայկական ինտերնետային հանրության մանրազնին դիտարկմանը[3], և արգելափակվեց ՀՀ նախագահի աշխատակազմի Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության կենտրոնի ջանքերով[4]: Առավել երկարակյաց *xronika.am*-ը փորձեց ներազդել հայ-վրացական հարաբերությունների վրա, 2008թ. օգոստոսին Հարավային Օսիայի շուրջ հակամարտության ընթացքում հակավրացական ապատեղեկատվություն տարածելով «Ջավախքի հայրենասերների» անունից[5]: Այս դոմեյնի գործունեության պայմանագիրը հետագայում, հասկանալի պատճառներով, չթարմացվեց:

[1] «Армянский тележурналист: В Азербайджане дезинформация превращается в индустрию», 2008.06.17, http://www.regnum.ru/news/1015850.html

[2] 2009.06.27, http://www.golos.am/index.php?option=com_content&task=view&id=47435

[3] «Как стряпаются "дезы". Или - о бедном Вусале замолвите слово…», 2009.02.19, http://karabah88.ru/press2009/02/0219_striapnya.html

[4] www.nv.am/2008/5mart/tema.htm

[5] *Мартиросян С.,* «Выводы из последней атаки на армянские сайты со стороны азербайджанских хакеров», «Գլոբուս. տեղեկատվական անվտանգություն» # 3, սեպտեմբեր, 2008թ.:

Հատկանշական է, որ ադրբեջանական հակահայկական տեղեկատվական գործողությունները միտված են ոչ միայն սեփական աղբյուրների նկատմամբ վստահությունը բարձրացնելուն, դիվերսիֆիկացնելուն և լեգիտիմացնելուն, այլև նպատակաուղղված են *հայամետ կամ հայկական աղբյուրների վարկաբեկմանը* և *ապալեգիտիմացմանը*: Այս նպատակով հեղինակազրկվում են ոչ միայն հայկական աղբյուրները՝ *պիտակավորվելով* իբրև *քարոզչական, ապատեղեկատվական, հանցավոր, երբեմն էլ ահաբեկչական*, այլև բոլոր այն օտարերկրյա աղբյուրները, որոնց տեսակետները բախվում են հակահայկական քարոզչական նպատակներին: Այս հարցում ադրբեջանցիները կիրառում են թուրքական հայտնի մեթոդաբանությունը, որի ամենավառ օրինակն է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հայտնի պատմական վեպի արժեզրկումը: Այդ նպատակով թուրքերը դեռևս 1989թ.՝ Հայոց ցեղասպանության 75-ամյակի նախաշեմին, ստեղծել են *ինֆոլոգեմ*, համաձայն որի՝ Վերֆելը կյանքի վերջին տարիներին «բացահայտել է, որ իր ստեղծագործությունը պատմական հիմքեր չունի»: Ընդ որում՝ թուրքական կողմը, հաշվի առնելով Վերֆելի հրեական ծագումը և, ուրեմն, նրա ստեղծագործության նշանակությունը հրեաների շրջանում, *աղբյուրի հավաստիության հավասարակշռման* նպատակով այս ինֆոլոգեմի տարածման աղբյուր է ընտրել կրկին հրեական ծագումով ամերիկացի ռաբբի Ալբերթ Ամաթեուին (ներկայացվում է նաև Աբրահամ Սաբար, Աբրահամ Սոն Սևեր անուններով): Ինչևէ, Ամաթեուն, որը երիտասարդ տարիքում Թուրքիայից ներգաղթել էր ԱՄՆ, իր այդ բացահայտումը կատարել է 101 տարեկանում՝ Ֆրանց Վերֆելի մահից շատ ավելի ուշ[1]: Այս աղբյուրի խոսքերին են հետագայում հղումներ կատարում դասական հակահայ Էրիխ Ֆայգլը և այլ հակահայ քարոզիչներ:

Հաղորդակցության միջոցներ: Այս հարցում կարևոր բնութագրիչ են միջոցների *բազմազանությունը* և *բազմաքանակությունը*, որոնց շնորհիվ ապահովվում են *տեղեկատվության սփռվածությունը* և *հավաստիության պատրանքի ձևավորումը:* Ադրբեջանը հաղորդակցական միջոցների բազմազանությանը հասնում է բոլոր հնարավոր ֆորմալ (պետական մարմիններ, ԶԼՄ, դիվանագիտական միջոցներ, *GONGO*-ներ) և ոչ ֆորմալ (շրջիկ ինֆորմատորներ, ինտերնետային ռեսուրսներ, սոցիալական ցանցեր) ուղիների ու հաղորդակցական ցանցերի կիրառմամբ՝ թիրախային լսարաններին ուղղված տեղեկատվությունը հնարավորինս լայն սփռելու և այդպիսով *առավելագույնս հասանելի* դարձնելու նպատակով: Ադրբեջանական կողմը լայնորեն կիրառում է *փոխհղումների*[2] մեխանիզմը, երբ միևնույն տեղեկությունը, միմյանց վրա հղումներ

[1] «Взгляд с вершины Муса-дага», 2009.02.26, http://www.golos.am/index.php?option=com_content&task=view&id=43129&Itemid=41

[2] *Մովսիսյան Ս.,* «Ադրբեջանական ԶԼՄ ազդեցության գործոնները տեղեկատվական պատերազմի համատեքստում», «Գլոբուս. տեղեկատվական անվտանգություն» # 2, հունիս, 2008թ.:

կատարելով, տարածվում է բազմաթիվ աղբյուրների կողմից: Այս մեխանիզմը ոչ միայն բազմապատկում է հաղորդակցական միջոցները և այդպիսով տարբեր լսարանների համար առավելագույն հասանելիություն է ապահովում, այլև նպաստում է *բազմաքանակության էֆեկտի ստեղծմանը*: Երբ տարբեր հաղորդակցական միջոցներով՝ անձնական կապեր, ԶԼՄ, գրքեր, տեսաֆիլմեր, միևնույն տեղեկատվությունն է հաղորդվում, ընկալման մակարդակում հաղորդակցական միջոցների *քանակական բազմապատկման տպավորություն* է ստեղծվում, ինչն էլ հավաստիության պատրանք է ձևավորում:

Փոխհոդումային եղանակով միևնույն հաղորդագրության արտատպումը նաև լրացուցիչ հնարք է ինտերնետային կայքերի համար՝ վարկանիշի բարձրացման և որոնման համակարգերում դրանք առաջնահերթ հասանելի դարձնելու առումով:

Հաղորդագրություն: Բուն հաղորդագրությունը հաղորդակցման ամենաբազմաշերտ բաղադրիչն է, որի բնութագրիչներն են *հաղորդագրության բովանդակությունը՝ թեման, օբյեկտը, դիսկուրսը, տեքստային ազդեցության հնարքները, փաստարկումը, հուզական ծանրաբեռնվածությունը, պատկերավորումը՝ սիմվոլիկան, հաղորդագրության կրկնման հաճախությունը, բազմաժանրությունը:*

Հաղորդագրության *հաճախակի կրկնությունը* առաջին հերթին այն լսարանին *հասանելի դարձնելու* և դրա նկատմամբ *ուշադրություն բևեռացնելու* նպատակ է հետապնդում: Բացի այդ, այն առավել խորքային հետևանք է ունենում. ընկալման և հիշողության մեխանիզմների օրինաչափության շնորհիվ հաճախակի կրկնվող հաղորդագրությունն *արդյունավետ ամրագրվում է* հանրային գիտակցության մեջ: Եթե նույնիսկ հաղորդագրության բովանդակությունն ընդունելի չի դառնում, ապա առնվազն առօրեական բնույթ է ստանում և սոցիալական իրականության մաս դառնում: Այս մեխանիզմը քարոզչությունը նաև *հիմնավորված* դարձնելու ձև է. նույնիսկ չփաստարկված հաղորդագրությունը հիմնավորված է դառնում նախկին նույնական հաղորդագրություններով: Ադրբեջանական քարոզչությունը դիմում է նաև միևնույն հաղորդագրության *բազմաժանր փաթեթավորմանը* (ցանկալի տեղեկատվությունն արտահայտվում է ոչ միայն քաղաքական, այլև մշակութային, սպորտային և այլ բնույթի տեքստերի միջոցով), *տեսողական արտահայտչականությանը* կամ *վիզուալացմանը* (տարածում են գտել մոնտաժված «վավերագրական» ֆիլմերը, կեղծված լուսանկարները, քարտեզները, անիմացիաները և այլն): Ուշադրություն է դարձվում *տեքստային վերնագրերի գրավչությանը,* ինչպես նաև *սիմվոլիկ* և *էմոցիոնալ հագեցվածությանը:*

Ադրբեջանական տեղեկատվական տեքստերում քննարկման, իսկ առավել հաճախ՝ *հարձակման օբյեկտ* է հանդիսանում Հայության համար ***արժեքային և սիմվոլիկ ծանրաբեռնվածություն ունեցող ցանկացած սուբյեկտ***՝ սկսած սովորական հայ մարդուց, մինչև պատմական հերոսներ, պետական, հասարակական, կրոնական գործիչներ և հայոց քաղաքական պատմություն: Հակահայկական տեղեկատվական առավել հաճախակի հարձակումների շարքում առանձնանում են մի շարք *թեժ թեմաներ,* ինչպիսիք են.

- Հայկական պետականության ու հայ ժողովրդի պատմությունը, հատկապես Արցախի քաղաքական պատմությունը, հայերի ծագման ու բնիկության հարցերը:
- Ադրբեջանական պետության կազմավորման, ժողովրդի ծագման և ձևավորման հարցերի նպատակահարմար մեկնությունը և նրանց բնիկության ամրապնդումը:
- 1915թ. Հայոց ցեղասպանության հերքումն ու հանցանքի պրոյեկտումը:
- 20-րդ դարի ընթացքում «ադրբեջանցիների ցեղասպանություն» իրականացնելու մեջ հայկական կողմին ուղղված մեղադրանքները.
  - ◊ 1918թ. Բաքվի կոմունայի և մահմեդականների միջև տեղի ունեցած բախումները՝ իբրև հայերի կողմից «ադրբեջանցիների ցեղասպանության» «հանցագործ պլանի» իրագործում,
  - ◊ 1990թ. Բաքվում խորհրդային բանակի գործողությունների արդյունքում զոհված ադրբեջանցիներին իբրև հայկական սադրանքների զոհեր ներկայացնելը,
  - ◊ 1992թ. Խոջալուի բնակչության զոհվածներին իբրև հայկական զինվորականության կողմից միտումնավոր սպանություն, և ուրեմն «ցեղասպանություն» ներկայացնելը:
- Այլ ժողովուրդների դեմ «կատարած հանցանքներում» Հայությանն ուղղված մեղադրանքները, համատարած թուրքատյացության և հակասեմիթիզմի վերագրումը, «միջազգային հայկական սպառնալիքի» ինֆոլոգեմը:
- Նպատակային էկոլոգիական ցեղասպանության և իսլամական մշակութային շերտերի վերացմանն ուղղված մեղադրանքները:
- Հայ ժողովրդի բարոյահոգեբանական նկարագրի և արժեքային համակարգի խեղաթյուրումը:
- ՀՀ-ում և ԼՂՀ-ում առկա ներքին սոցիալ-տնտեսական, քաղաքական խնդիրների շահարկումը և մտացածին խնդիրների վերագրումը:
- Հայկական բանակի խնդիրների շահարկումը, վարկաբեկող ինֆոլոգեմների տարածումը:

Դիտարկելով վերոնշյալ թեմատիկ հաղորդագրություններում առկա ընդհանրությունները՝ նկատում ենք, որ ադրբեջանական քարոզչամեքենան հակահայկական տեքստերում կիրառում է հիմնականում 4 մեխանիզմ.

- Հայ-թուրքական տեղեկատվական հարաբերություններում հայկական կողմի ձեռնարկած և հաջողված տեղեկատվական գործողությունների հայելային արտատպման մեխանիզմը:
- Թուրք-ադրբեջանական կողմին առնչվող խոցելի կետերի և բացասական տեղեկատվության ուղղակի պրոյեկտման մեխանիզմը:
- Հակասեմիթականության սխեմաների հակահայկական ուղղվածությամբ կիրառման մեխանիզմը:
- «հակառասիստական ռասիզմի» սկզբունքի կիրառման մեխանիզմը:

Հայելային արտատպման ամենավառ օրինակ է ներկայումս լայն շրջանառության մեջ դրված *«Արևմտյան Ադրբեջան»* հասկացությունը (Արևմտյան Հայաստանի նմանությամբ), որի տակ ենթադրվում են ոչ միայն ԼՂՀ, այլև արդի ՀՀ և որոշ չափով Վրաստանի տարածքները: *Ուղղակի պրոյեկտման* արդյունք է ոչ միայն ցեղասպանական գործողությունների վերագրումը հայկական կողմին, այլև Հայ Առաքելական եկեղեցուն իսլամական աշխարհում առկա ծայրահեղական ահաբեկչական հոսանքների նպատակների և գործունեության մեջ մեղադրելը: Հայելային արտատպման մեխանիզմով թուրք-ադրբեջանական համատեղ քարոզչությունը սիմետրիկ պատասխան է տալիս Հայոց ցեղասպանության թեմայով բոլոր հայկական տեղեկատվական հոսքերին՝ միաժամանակ թուրք-ադրբեջանական հայտնի խնդիրները և կնճռոտ իրադարձություններն ուղղակիորեն պրոյեկտելով հայկական կողմի վրա:

Հակասեմիթականության սխեմաները կիրառվում են կրկին հիմնականում Ցեղասպանությանն առնչվող թեմաներում, ինչպես նաև Հայության արժեհամակարգի, հայ մարդու բարոյական կերպարի վարկաբեկման հարցերում: Նույն սկզբունքով, ինչ և հակասեմիթները մեղադրում են հրեա ժողովրդին սեփական նպատակներին հասնելու համար Հոլոքոստի «առասպելի» հորինման, դրա հրահրման կամ կազմակերպման մեջ, այնպես էլ ադրբեջանա-թուրքական քարոզիչները հայերին մեղադրում են Ցեղասպանության և այլ կոտորածների «առասպելների» ստեղծման, հրահրման կամ էլ կազմակերպման մեջ: Հայ մարդու կերպարի նկատմամբ լայնորեն կիրառվում են նաև հակասեմիթական պիտակավորման ձևերը («նենգ», «դավաճան», «ագահ», «խաբեբա»):

Ինչ վերաբերում է *«հակառասիստական ռասիզմի» սկզբունքի* կիրառմանը, ապա այն դրսևորվում է Հայությանը հակաթուրքականության և հակասեմիթիզմի մեջ մեղադրանքների հիման վրա հակահայկականության տարած-

ման ձևով: Այնպես, ինչպես սպիտակամորթների նկատմամբ ռասիզմը հիմնավորվում է վերջիններիս ռասիզմով սևամորթների նկատմամբ, որն, ըստ էության, նույն ռասիզմն է, այդպես էլ ադրբեջանա-թուրքական հակահայկականությունը փորձում է հիմնավորվել Հայությանը համատարած թուրքատյացություն և հակասեմիթիզմ վերագրելով:

Բոլոր վերոնշյալ թեմատիկ հաղորդագրությունների ծանրակշիռ մասն են կազմում *պատմական, իրավական, կրոնական-մշակութային* ու *առօրեականության դիսկուրսի ձևերը*: Դրանք բոլորը միավորվում են իրենց առանցքային՝ հակահայկականության տարածման նպատակի շուրջ: Ընդհանուր առմամբ դրանցում առավել հաճախ հանդիպում են *տրամաբանական սխալների* և *սեմանտիկ մանիպուլյացիաների մեթոդների* վրա հիմնված տեքստային ազդեցության այնպիսի հնարքներ, ինչպիսիք են.

- *պարզ ապատեղեկատվության, կեղծիքի, ինֆոլոգեմի պնդումը,*
- *ճշմարտանման ստերի կիրառումը,*
- *չափազանցությունը կամ ծայրահեղացումը,*
- *կես-ճշմարտությունների կամ ընտրովի ինֆորմացիայի մատուցումը,*
- *հակագիտական ինդուկցիան՝ անհիմն կերպով մասնավորից ընդհանրացումը,*
- *ասիմետրիկ համեմատությունների անցկացումը,*
- *արքետիպային ու կարծրատիպային պիտակավորումը, ծաղրը, հեգնանքը, բացասական հատկանիշների վերագրումը,*
- *«մութ էջերի բացահայտումը»:*

Լսարան: Տեղեկատվական գործողության արդյունավետությունը կապված է լսարանի քաղաքակրթական, կրոնական և մշակութային առանձնահատկությունների հետ: Այս իմաստով ադրբեջանական տեղեկատվական-քարոզչական նախաձեռնությունները հստակ *տարանջատում են թիրախային լսարանները* և դրանց ուղղված *հաղորդագրությունների դիսկուրսը*: Այսպիսով, իրագործվում է առանձին *լսարաններին համապատասխան դիֆերենցված մոտեցում.*

- Իսլամական հանրություններում Հայաստանը ներկայացվում է իբրև ահաբեկչական քրիստոնեական պետություն, իսլամական մշակույթի թշնամի կամ համաշխարհային սիոնիզմի ու քրիստոնեական պետությունների կամակատար:
- Հրեաների շրջանում՝ իբրև հակասեմիթական երկիր:
- Արևմտյան երկրներում՝ իբրև հակաժողովրդավարական տարր և տարածաշրջանային զարգացման արգելակ:

- Միջազգային կառույցներում Ադրբեջանը սեփական պահանջները բխեցնում է իբր միջազգային իրավական նորմերին դրանց լիարժեք համապատասխանությունից:
- Իսկ սեփական հանրության ներսում՝ նաև պատմամշակութային կեղծ հիմնավորումներից և ձևավորվող «թշնամի հայի» կերպարի նկատմամբ ռևանշիստական նկրտումներից:

Հիմնանպատակ: Ադրբեջանական տեղեկատվական գործողությունների հիմնանպատակներն են.

1. Հայաստանին և Հայությանն առնչվող հոգևոր, մշակութային և նյութական արժեքների նսեմացումը, «ոչնչացումը»՝ ի հակադրություն ադրբեջանականի ձևավորման, արժևորման և համաշխարհայնացման:
2. Հայության բարոյալքումը, պարտվողականության զգացման ձևավորումը, թուլացումը՝ ի հակադրություն ընդհանուր թշնամու (հայերի) նկատմամբ ադրբեջանցիների միասնական ինքնության ձևավորման, համախմբվածության և ռևանշիզմի զարգացման:

Առաջինն ավելի լայն ուղղորդում ունի և միտված է բոլոր թիրախային լսարանների, այդ թվում՝ Հայության շրջանում *վարկաբեկման* ու *անմարդկային հանցանքների մեջ մեղադրանքի* մեխանիզմների կիրառմամբ համապատասխան դիրքորոշումների ձևավորմանը: Թեև հայկական լսարանի վրա դրա ազդեցության արդյունավետությունն ավելի քան վիճելի է՝ այն միտված է Հայության մեջ *թերարժեքություն ձևավորելուն,* ինչը նաև հիմք է երկրորդ հիմնանպատակի համար:

Երկրորդի ուղղվածությունը կոնկրետ հայկական և ադրբեջանական լսարաններն են: Այս դեպքում կիրառվում են ոչ միայն Հայության նսեմացման ու մեղադրանքի, այլև պատերազմի վերսկսման և շրջափակման միջոցով ՀՀ-ն և ԼՂՀ-ն տնտեսապես «շնչահեղձ» անելու *սպառնալիքի,* ինչպես նաև Հայության մեջ ծագումնաբանական կամ այլ տարբերակումների ներմուծմամբ՝ *ջլատման-պառակտման* մեխանիզմները: Այն, ինչ հայկական լսարաններում աշխատում է իբրև պարտվողականության ձևավորման և բարոյալքման գործոն, ադրբեջանական հանրությունում առաջացնում է հպարտության զգացում և հավատ «Հայության դեմ» հաղթանակի նկատմամբ:

Այսպիսով, Ադրբեջանի կողմից տարվող հակահայկական ինֆոքաղաքականությունը հետազոտելով և այդ նպատակով վերլուծության մեթոդաբանություն մշակելով՝ կարելի է ոչ միայն համապատասխան պատկերացում կազմել նրանց կողմից տարվող հարձակումների բնույթի մասին, այլև հիմք ունենալ առհասարակ տեղեկատվական պաշտպանության մեխանիզմների

մշակման համար: Բացի այդ, տեղեկատվական հոսքերի ուսումնասիրությունները կնպաստեն հայաստանյան հասարակությունում տեղեկատվական հոսքերի նկատմամբ քննադատական հայացք մշակելուն և հաղորդակցման մասին գիտելիքների մակարդակը բարձրացնելուն, որոնք, իրենց հերթին, էականորեն կնպաստեն Հայաստանի հանրության տեղեկատվական անվտանգության ապահովմանը:

Սեպտեմբեր, 2009թ.

ИНФОРМАЦИОННЫЕ ПОТОКИ И ИНФОБЕЗОПАСНОСТЬ АРМЕНИИ

Анна Жамакочян

Резюме

В статье рассматривается антиармянская политика Азербайджана на двух аналитических уровнях – на уровне *системы инфополитики* и на уровне конкретных *информационных действий*. В них выявляются большой арсенал, ключевые формы, механизмы и «инфраструктуры» азербайджанской инфополитики.

На примере информационных атак Азербайджана указывается важность изучения информационных потоков, необходимого для выявления информационных угроз против Армении, разработки соответствующих механизмов противодействия, а также развития навыков осознанного восприятия информации вообще.

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԹՈՒՐՔԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռուբեն Մելքոնյան[*]

Հոդվածում անդրադարձ է կատարվում Թուրքիայում պետական քաղաքականության հիմնական տարրերից մեկին՝ տեղանունների փոփոխմանը: Առկա փաստերը թույլ են տալիս պնդել, որ ոչ թուրքական տեղանունների փոփոխությունը եղել է համատարած թուրքացման քաղաքականության կարևոր բաղկացուցիչներից մեկը և իրականացվել համակարգված, որի հետևանքով այսօրվա Թուրքիան ներկայանում է որպես գերազանցապես թուրքական տեղանուններով պետություն: Այս ամենում քողարկված և բացահայտ քաղաքական նպատակներ կան, այն է՝ հնարավոր բոլոր մեթոդներով ժխտել բնիկ ոչ մուսուլման ժողովուրդների ներկայությունը և պատկանելությունն այս տարածաշրջանին:

Վերլուծելով Թուրքիայի Հանրապետության ներքին քաղաքականության որոշակի դրսևորումները՝ կարող ենք նշել, որ դրանք, մեծ մասամբ, կրում են համատարած թուրքացման բնույթ: 1920-ականներին դեռևս նորաստեղծ Թուրքիայում տեղի էին ունենում գործընթացներ, որոնք միտված էին միատարր թուրքական պետության ստեղծմանը: Ահա հենց այս նպատակով համատարած թուրքացման քաղաքականությունը սկսեց կիրառվել լայն թափով և տարբեր ոլորտներում: Գործընթացն անխուսափելիորեն պետք է անդրադառնար նաև տեղանուններին, քանի որ Օսմանյան կայսրության տարածքում բազմաթիվ էին բնիկ ժողովուրդների լեզուներով անվանակոչված վայրերը, որոնք ուղղակի ապացույցն էին նրանց ներկայության: Տեղանունները, միևնույն ժամանակ, ցույց են տալիս պատմական անցյալը, այդտեղ բնակված ժողովրդի պատմության, մտածելակերպի մի շարք մանրամասներ: Այդ է պատճառը, որ միատարր Թուրքիայի Հանրապետության կայացման գործընթացում տեղանունների թուրքացմանը վերապահվել էր կարևոր գործառույթ:

Ինչպես իրավացիորեն նշում է թուրքագետ Լուսինե Սահակյանը. *«Տեղանունները, լեզվական համեմատաբար կայուն փաստ լինելուց բացի, ունեն պատմագիտական և քաղաքական արժեք»* [1]: Տեղանունների թուրքացման իրական նպատակների լավագույն բացատրությունը ներկայացնում է թուրք

[*] «Նորավանք» ԳԿՀ «Հայագիտական» կենտրոնի ղեկավար, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի փոխդեկան, բանասիրական գիտությունների թեկնածու:

զինվորական Հուսեյին Ավնի բեյը. *«Եթե մենք ուզում ենք մեր երկրի տերը դառնալ, ապա ամենափոքր գյուղի անունն անգամ պետք է թուրքերեն դարձնենք, այլ ոչ թե թողնենք հայերեն, հունարեն, արաբերեն: Այսպիսով մեր երկրիրը կներկենք մեր գույներով»* [1]:

Ինչպես ընդհանրապես թուրքացման քաղաքականությունը, այնպես էլ դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող տեղանունների թուրքացումը նոր երևույթ չեն և սկսվել են օտար, այն է՝ թյուրքական, տարրի տարածաշրջան ներթափանցմանը զուգահեռ, սակայն այդ քաղաքականությունն ավելի ընդգծված և համակարգված բնույթ է ստացել 19-րդ դարի կեսերից, որն ավելի է խորացել երիտթուրքերի տիրապետության ժամանակ, իսկ հանրապետական Թուրքիայում գտել վերջնական լուծում: Այս ուղղությամբ օսմանյան պետության ձեռնարկած կոնկրետ իրավական քայլերից արժե հիշատակել 1915թ. հունվարի 5-ին ռազմական նախարար Էնվեր փաշայի հրամանը, որը թարգմանաբար տեղ է գտել Լ.Սահակյանի վերոնշյալ հոդվածում: Հրամանագրի առաջին կետում հստակ նշվում է. *«Անհրաժեշտ է թուրքերենի վերածել Օսմանյան երկրում հայկական, հունական, բուլղարական և այլ ոչ մուսուլման ժողովուրդներին պատկանող նահանգի, գավառի, գյուղաքաղաքի, գյուղի, սարի, գետի…և այլ բոլոր անունները»* [1; 2, s. 21-22]:

Անշուշտ, տեղանունների թուրքացումը հարկ է տեղավորել թուրքական ազգայնամոլության դրսևորումների շրջանակում, որոնց աճին զուգահեռ՝ նկատվել են նաև զարգացումներ այդ ուղղությամբ ևս: Թուրքիայի Հանրապետության առաջին իսկ տարիներից ոչ թուրքական տեղանունները սկսեցին անվանափոխվել: Այս քաղաքականությունը տարբեր ուժգնությամբ շարունակվեց տարբեր քաղաքական ռեժիմների ժամանակ: Հանրապետական Թուրքիայում տեղանունների թուրքացման քաղաքականության մանրակրկիտ ուսումնասիրություն է անցկացրել թուրք հետազոտող, «Եփրատ» համալսարանի աշխարհագրության ամբիոնի դոցենտ Հարուն Թունչելը, ըստ որի՝ Թուրքիայի Հանրապետությունում տեղանունների փոփոխության հետ կապված առաջին պաշտոնական արձանագրությունը կատարվել է 1925թ., երբ Արդվինի նահանգային խորհրդարանի որոշմամբ անվանափոխվել են հիմնականում վրացերեն որոշ տեղանուններ [3, s. 27]: Սակայն տեղանունների փոփոխության առաջարկներ արվել են դեռևս 20-ականների սկզբներին, իսկ 1922թ. անվանափոխվել են որոշ հայկական տեղանուններ, որոնք մինչ այդ էլ աղավաղվել էին, մասնավորապես՝ Մուքյուս անվանակոչված պատմական Մոկսը վերանվանվել և այսօր կոչվում է Բահչեսարայ, Ստամբուլի Սան Ստեֆանո թաղամասն անվանակոչվել է Յեշիլքյոյ և այլն: 1928թ. անվանափոխվել, թուրքացվել են Էգեյան ավազանի հունական և հարավարևելյան շրջանների որոշ հայկական ու քրդական տեղանուններ, իսկ 1934-36թթ. Թուրքիայում

փոխվել է 834 գյուղերի անվանում [4]: Թուրք հեղինակ Մուսթաֆա Արմաղանը նշում է, որ հանրապետական Թուրքիայի արխիվներում աշխատելիս հանդիպել է 1930-ականներին գրված մի շարք դիմումներ, որոնցով պահանջվում էր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի և Իսմեթ Ինենյուի անվամբ մեկական նահանգ, քաղաք անվանակոչել: Ըստ այդ դիմումներից մեկի՝ առաջարկվում էր Անկարան անվանափոխվել Աթաթուրքքենթիի [5]:

Սակայն անվանափոխության գործընթացն ավելի խորացավ 1940թ. սկսած. Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը հրապարակեց թիվ 8589 շրջաբերականը, որտեղ հստակ նշվում էր *«օտար լեզուներից ու արմատներից ծագող և գործածման մեջ թյուրընկալումների պատճառ հանդիսացող բնակավայրերը և տեղանունները»* թուրքերեն անվանումներով փոփոխելու անհրաժեշտության մասին [3, s. 27]: Դրանից հետո նահանգապետարանների կողմից պատրաստվել և նախարարություն են ուղարկվել «օտարալեզու» տեղանունները: Ուշագրավ է նաև այս գործընթացի ժամանակաշրջանը, երբ Թուրքիայում պետական մակարդակով վերելք էին ապրում պանթուրքիստական տրամադրությունները, տեղի էր ունենում թուրքացման լայնածավալ և բազմոլորտ գործընթաց, ոչ մուսուլման բնակչության հանդեպ մեծ խտրականություն էր կիրառվում:

Տեղանունների փոփոխությունը կոնկրետ կիրառություն է ստանում 1957թ., երբ հատուկ դրա համար ստեղծվում է «Տեղանունների փոփոխության մասնագիտական հանձնաժողով», որտեղ ընդգրկվում են գլխավոր սպայակույտի, ներքին գործերի, պաշտպանության, կրթության նախարարությունների, Անկարայի համալսարանի լեզվական, պատմաաշխարհագրական ֆակուլտետների և Թուրքական լեզվական ընկերության ներկայացուցիչներ: Այստեղ ևս մի ուշագրավ նրբություն կա. չնայած Թուրքիայում փոխվել էր իշխանությունը և ղեկավարությունն ստանձնել էր այլ քաղաքական ուժ, սակայն թուրքացման քաղաքականությունը չէր փոխվել, ընդհակառակը, այն ավելի էր խորացել: Հիշյալ հանձնաժողովն աշխատել է մինչև 1978թ., որի ընթացքում ուսումնասիրվել է շուրջ 75 հազար տեղանուն, անվանափոխվել է 28 հազարը [3, s. 27]: Կարծիքներ կան, որ տեղանունների թուրքացումը հատկապես մեծ թափ է ստացել 1960թ. մայիսի 27-ին Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո [6]: Թուրք հետազոտող Հարուն Թունչելը պնդում է, որ հանձնաժողովի գործունեության ընթացքում անվանափոխվել է ավելի քան 12 հազար գյուղանուն՝ Թուրքիայի գյուղերի շուրջ 35%-ը: Թունչելը պատրաստել է նաև անվանափոխված գյուղերի ցուցակը և դրանց քանակական բաշխումն ըստ նահանգների, որը ներկայացնում ենք ստորև [3, s. 28].

Նահանգի անունը	Գյուղերի թիվը	Նահանգի անունը	Գյուղերի թիվը
Ադանա	169	Իզմիր	68
Ադըյաման	224	Կարս	398
Աֆիոն	88	Կաստամոնու	295
Աղրը	374	Կեսարիա	86
Ամասիա	99	Քըրքլարելի	35
Անկարա	193	Քըրշեհիր	39
Անթալիա	168	Քոջաելի	26
Արդվին	101	Կոնիա	236
Այդըն	69	Քյութահիա	93
Բալըքեսիր	110	Մալաթիա	217
Բիլեջիք	32	Մանիսա	83
Բինգյոլ(Ճապաղջուր)	247	Մարաշ	105
Բիթլիս (Բաղեշ)	236	Մարդին	647
Բոլու	182	Մուղլա	70
Բուրդուր	49	Մուշ	297
Բուրսա	136	Նևշեհիր	24
Չանաքքալե	53	Նիղդե	48
Չանքըրը	76	Օրդու	134
Չորում	103	Ռիզե	105
Դենիզլի	53	Սաքարիա	117
Դիարբեքիր	555	Սամսուն	185
Էդիրնե	20	Սիիրթ (Սղերթ)	392
Էյլազիգ (Խարբերդ)	383	Սինոպ	59
Էրզինջան (Երզնկա)	366	Սեբաստիա	406
Էրզրում (Կարին)	653	Թեքիրդաղ	19
Էսքիշեհիր	70	Թոքաթ (Եվդոկիա)	245
Գազիանթեփ	279	Տրապիզոն	390
Գիրեսուն	167	Թունջելի (Դերսիմ)	273
Գյումուշհանե	343	Ուրֆա	389
Հաքքարի	128	Ուշաք	47
Հաթայ	117	Վան	415
Սպարտա	46	Յոզղաթ	90
Իչել	112	Զոնգուլդաք	156
Ստամբուլ	21	***Ընդամենը՝***	12211

Ներկայացված ցուցակից ակնհայտ է դառնում, որ ամենից շատ տեղանուններ փոխվել են Թուրքիայի արևելյան, հարավարևելյան և Սևծովյան շրջաններում, այսինքն՝ հիմնականում պատմական Հայաստանում, ինչպես նաև հունական տարածքներում: Նշենք նաև, որ Սև ծովի հարավարևելյան շրջաններում բավական թիվ են կազմում նաև հայկական տեղանունները,

քանի որ հիմնականում հենց այնտեղ են գտնվում համշենահայ բնակավայրերը: Թունչելի գնահատմամբ՝ հանձնաժողովն ուշադրություն է դարձրել, որ պարտադիր փոփոխվեն այն տեղանունները, որոնց բաղադրիչներից մեկը *կարմիր, գանգ, եկեղեցի* բառերն են եղել, որոնք բացահայտ ցույց են տալիս դրանց ոչ թուրքական կամ ոչ մուսուլմանական ծագումը, իսկ կարմիր բառն ուներ նաև կոմունիստական երանգ [3, s. 28]: Ի դեպ, Թուրքիայի վարչապետ Էրդողանը նույնպես ծնունդով Ռիզեի նահանգից է, նրա ծննդավայրը ներկայումս անվանափոխված է Գյունեյսու, սակայն մինչև այժմ էլ ժողովրդի մեջ կիրառվում է դրա նախկին ակնհայտ ոչ թուրքական անունը՝ Պոտոմիա [7]:

Ներկայումս Թուրքիայում ընթանում է մի գործընթաց, որը, որոշ վերապահումներով, կարելի է անվանել թաբուների ճեղքում: Եվ այդ ամենի համատեքստում սկսում են քննարկվել այնպիսի թեմաներ, որոնք մինչ այդ փակ էին կամ արգելված: Այդ թեմաների շարքում, կարելի է ասել, վերջերս բավական ակտիվ քննարկվում է տեղանունների փոփոխման գործընթացը: Քննարկումներին մասնակցում են Թուրքիայի բարձրագույն ղեկավարության ներկայացուցիչները ևս, իհարկե՝ փորձելով այս ամենի մեջ տեսնել իրենց քաղաքական հաշվարկներն ու շահերը: Այսպես, բոլորովին վերջերս Թուրքիայի նախագահ Գյուլը արևելյան շրջաններից մեկում, մի հանդիպման ժամանակ հայտարարել է, որ ներկայումս Գյուրջյամաք անվանված գավառի անունը իրականում Նորշեն է[1]: Հետ չի մնացել նաև վարչապետ Էրդողանը՝ նշելով, որ Մանազկերտը հայերեն բառ է: Այս ամենը դարձել է նաև ներքաղաքական խնդիր և ընդդիմությանը իշխանություններին քննադատելու առիթ տվել: Այս հարցում, ինչպես միշտ, ակտիվ է ազգայնամոլական կողմնորոշում ունեցող Ազգայնական շարժում կուսակցությունը, որի նախագահ Դևլեթ Բահչելիի և վարչապետ Էրդողանի միջև սկիզբ է առել հեռակա բանավեճ: Մասնավորապես, մեղադրելով իշխանություններին՝ Դևլեթ Բահչելին հեգնել է, թե միգուցե փոխեն նաև Ստամբուլի անունը և այն կոչեն Կուստանդնուպոլիս: Ի պատասխան այս հայտարարության, Էրդողանը նշել է. *«1071թ. Ալփարսլանը Մանազկերտը գրավելուց հետո դրա անվանը չկպավ, այնինչ Մանազկերտը հայկական անուն է, ի՞նչ է՝ դուք Ալփարսլանից ավելի ազգայնական ե՞ք»* [8]:

Հարկ է նշել, որ տեղանունների թուրքացման քաղաքականությունն անդրադարձել է նաև Ստամբուլի հայկական և հունական փողոցներին, թաղամասերին: Ստամբուլում փողոցների անվանումների թուրքացումը սկսվել է 1927 թվականից [4]: Հիմնական թիրախներն են եղել հունական, հայկական թաղամասերը: Նշենք, որ ներկայումս աշխատանքներ են տարվում նաև փո-

[1] Ի դեպ, արձագանքելով նախագահ Գյուլի հայտարարությանը՝ հոկտեմբերի սկզբին Բիթլիսի նահանգի Գյուրջյամաք գավառի ավագանիների խորհուրդը միաձայն որոշում է ընդունել գավառը կրկին կոչել Նորշին:

ղոցների անվանափոխության ուսումնասիրման ուղղությամբ: Օրինակ, թուրքական *TESEV* հիմնադրամը վերջերս նախաձեռնել է մի հետազոտություն, որի նպատակն է պարզել Ստամբուլի հայաբնակ և հունաբնակ թաղամասերի, պողոտաների և փողոցների անունների փոփոխությունները: Ուսումնասիրությունն ընդգրկում է Բաքըրքյոյ, Շիշլի, Ֆաթիհ, Բեյօղլու և Քադըքյոյ թաղամասերը: Արդեն ի հայտ են եկել առաջին արդյունքները, համաձայն որոնց՝ Ստամբուլում մինչև 1954թ. անվանափոխվել է 100-ից ավելի փողոցի, թաղամասի անուն [9]: Պետք է ասել, որ հատկապես Ստամբուլում տեղի ունեցած անվանափոխությունների մեջ որոշակի միտումներ առավել ցայտուն են. մասնավորապես այն թաղամասերում, որտեղ ավելի հոծ ապրում են հայեր, հույներ, նոր անվանումների մեջ գերիշխում են ազգայնամոլական կամ, այսպես կոչված, «սիմվոլիկ սպառնալիք» պարունակող անվանումներ: Մեջբերենք մի պոլսահայի պատմածը. «Ես ապրում եմ *Քուրթուլուշում,* տունս *Էրգենեքոն* թաղամասում է, *Թուրքբեյ* փողոցում: Քվեարկելու համար գնում եմ *Թալեաթ փաշայի* անվան դպրոց» [10]: Ժամանակին հունաբնակ Թաթավլա թաղամասն անվանափոխվել է Քուրթուլուշ, որը թարգմանաբար նշանակում է ազատագրում: Այս անունը ևս սիմվոլիկ բնույթ է կրում, քանի որ, ըստ թուրքական պետական հռետորաբանության, քեմալական շարժման տարիներին Թուրքիան ազատագրվել է «օկուպանտներից», այդ թվում և հույներից: Կարծում ենք, որ պատահականություն չպետք է համարել հատկապես փոքրամասնություններով բնակեցված թաղամասերի և փողոցների ակնհայտ «սիմվոլիկ սպառնալիք» պարունակող անվանումները:

Նկատելի է նաև, որ անվանափոխումների ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվել, որպեսզի տեղանունների ոչ մուսուլմանական ծագման որևէ հիշողություն կամ ակնարկ չպահպանվի: Օրինակ՝ Ստամբուլում կատարված մի քանի անվանափոխումներում դա հստակ երևում է. Ֆերիքյոյ թաղամասի *Էրմենի Քիլիսե* (հայկական եկեղեցի) կոչված փողոցը անվանափոխվել է *Ֆըրըն Սոքաղը* (փռի փողոց) *Քեշիշ* (քահանա) փողոցը՝ *Էֆե* (ավազակ) փողոցի, *Փափազ Քյոփրուսու-ն* (քահանայի կամուրջ) անվանափոխվել է *Յայա Քյոփրուսու* (հետիոտնի կամուրջ) [4]:

Հարկ է նշել, սակայն, որ չնայած պետության գործադրած ջանքերին, մինչև օրս էլ որոշ հայկական տեղանուններ տեղի բնակչության կողմից շարունակում են գործածվել՝ թեկուզ և աղճատված ձևերով: Սա ցույց է տալիս, որ հասարակ ժողովուրդը դեռևս լիովին չի յուրացրել նոր տեղանունները: Օրինակ, Մուշի Ցրոնք գյուղն անվանափոխված է Քըրքյոյի, սակայն մինչև հիմա էլ ժողովուրդն այն կոչում է Սրոնք, Հացեկացը՝ Հասիկ և այլն: Թուրքիայում բնակվող համշենահայ մանկավարժ Մահիր Օզքանը նշում է, որ այդ փոփոխու-

թյունները պատճառ են դարձել նաև շփոթմունքների: Օրինակ՝ ինքը սովորել ու տիրապետել է իրենց շրջապատի տեղանունների մի քանի տարբերակ՝ պաշտոնականը և ժողովրդի մեջ գործածվողը [11]: Հին հայկական տեղանունների գործածությունը հասարակ ժողովրդի կողմից, միևնույն ժամանակ, վկայում է այդ ամենի մեջ պատմական հիշողության տարրերի մասին:

Տարբեր ոլորտներում հանդիպող ոչ թուրքական կամ ոչ մուսուլմանական անվանումներն անհանգստություն են պատճառում թուրք որոշ ղեկավարների, և ամեն ինչ թուրքացնելու մղումը հաճախ հանգեցնում է ծիծաղելի վիճակների: Օրինակ՝ 2005թ. Թուրքիայի շրջակա միջավայրի նախարարությունը Թուրքիայի միատարր կառուցվածքին իբր վնաս լինելու պատրվակով թուրքացրել է անգամ որոշ կենդանիների անուններ, որոնք համաշխարհային գրականության մեջ հիշատակվում են այլ կերպ: Օրինակ՝ *"Ovis armeniana", "Vulpes vulpes kurdistanica"* անվանումներով կենդանիների անվանումները փոխվել են, դրանցից հանվել են *armeniana* ու *kurdistanica* «վտանգավոր» բառերը: Ուշագրավ է նաև այդ նախարարության բնության պաշտպանության և ազգային պարկերի տնօրեն, դոկտոր, պրոֆեսոր Մուսթաֆա Քեմալ Յալընքըլըչի մեկնաբանությունն այս առիթով. «Թուրքիայի գլխին տարատեսակ խաղեր են խաղում, և այս անվանումները հատկապես գործածվում են, որպեսզի կարծիք ստեղծեն, թե այստեղ հայեր կամ քրդեր են եղել» [10]: Անգամ անասունները Թուրքիայում դասակարգվում են «նորմալ»-ի և «սեպարատիստ»-ի, որոնց դեմ պետք է պայքարել:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ տարբեր ժամանակաշրջաններում թուրքացման քաղաքականությունը կրել է համատարած բնույթ և անդրադարձել տարբեր ոլորտների: Կոնկրետ տեղանունների թուրքացումը եղել է թուրքացման քաղաքականության կարևոր տարրերից մեկը, որը նպատակ է ունեցել ստեղծել զուտ թուրքական կամ մուսուլմանական բնույթ ունեցող աշխարհագրություն:

Նոյեմբեր, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Սահակյան Լ.,* Հայկական տեղանունների եղեռնը Թուրքիայում, Երկիր, 29.09.2009:
2. *Yüksel A.,* Doğu Karadeniz Araştırmaları, İstanbul, 2005.
3. *Harun T.,* Türkiyede ismi değiştirilen köyler, Fırat Üniversitesi Sosyal Bilimleri Dergisi, Elazığ, 2000, cilt: 10, sayı: 2.
4. *Hür A.,* Pangaltı ve Kurtuluşta milliyetçi sokak isimleri, Agos, 22.05.2009.
5. *Armağan M.,* Ankara'nın adı "Atatürkkent" olacakmış!, Zaman, 23.8.2009.

6. *Çalışlar O.,* Köy adlarının "ulusallaştırılması", Agos, 22.05.2009.
7. 12 bin 211 köyün adı değiştirilmiş, Radikal, 13.5.2009.
8. Ankara'nın nesi Türkçe Taraf, 18.8.2009.
9. TESEV'den sokak açılımı, Sabah, 28.9.2009.
10. *Yumul A.,* Adlandırılmayan Türkiye, Star, 23.08.2009.
11. *Özkan M.,* "Momilerimizin bildiği isimler resmen kabul görmeli", Agos, 22.05.2009.

ИЗМЕНЕНИЕ ТОПОНИМОВ КАК ПОЛИТИКА ОТУРЕЧИВАНИЯ

Рубен Мелконян

Резюме

В 1920-х гг. в тогда еще недавно созданной Турецкой Республике происходили разнообразные процессы, нацеленные на формирование монолитного турецкого государства. Именно с этой целью в самых разных сферах стала проводиться широкомасштабная политика тотального отуречивания. Этот процесс неминуемо должен был затронуть и топонимы, поскольку на территории Османской империи существовало множество населенных пунктов с названиями на языках автохтонных народов, что напрямую доказывало сам факт присутствия последних. Существующие факты позволяют утверждать, что изменение нетурецких топонимов было одним из важных элементов политики отуречивания и осуществлялось систематизированно, вследствие чего современная Турция предстает государством с преимущественно турецкими топонимами. Во всем этом есть скрытые и явные политические цели, направленные на то, чтобы всеми возможными методами отрицать присутствие и принадлежность к этому региону автохтонных немусульманских народов.

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Վլադիմիր Վարդանյան[*]

XXդ. վերջին տասնամյակը բեկումնային էր հայերի դեմ իրագործված ցեղասպանության հիմնախնդրին առնչվող հարցերի վերիմաստավորման և նորովի ընկալման տեսանկյունից: Եթե 1980-ականների երկրորդ կեսին կարելի էր խոսել հայերի դեմ իրագործված ցեղասպանության հիմնախնդիրն իրավական դաշտ տեղափոխելու որոշ միտումների մասին, 1990-ականները նշանավորվեցին դրա իրավական հարթությանն առնչվող հիմնախնդիրների ակտիվ լուսաբանմամբ, երրորդ հազարամյակի սկզբին հայերի դեմ իրագործված ցեղասպանության հիմնական բաղկացուցիչը դարձան հենց իրավական հարթության հիմնահարցերը: Հայերի դեմ իրագործված ցեղասպանության հիմնախնդրի իրավական դաշտ տեղափոխումը, փաստորեն, վերակենդանացրեց այդ հանցագործության համար միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու՝ դեռևս XXդ. 20-ական թթ. վերջից «սառեցված» գործընթացը: Ինքնին հասկանալի է, որ ավելի քան 70 տարի սառեցված լինելուց հետո, մեր օրերում, տվյալ հարցի արծարծումը չէր կարող նույն բովանդակությունն ու ծավալն ունենալ, ինչ 1920-ականներին: Այդուհանդերձ և բարեբախտաբար, դեռ պահպանվում է հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար պատասխանատվության առավել գործուն և արդյունավետ ձևի՝ պետության պատասխանատվության իրագործման հնարավորությունը: Ահա հենց այս համատեքստում էլ նպատակահարմար ենք գտել ուսումնասիրել հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար պատասխանատվության ենթարկելու հարցը:

Հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար պետություններին միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու հիմնախնդիրն անհնարին է քննել առանց տվյալ հանցագործության դեմ պայքարի հիմնական միջազգային իրավական գործիքի՝ Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի դրույթների և հայերի դեմ իրագործված ցեղասպանության նկատմամբ դրանց հավանական կիրառելիության վերլուծության:

[*] ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավախորհրդատվական ծառայության (վարչության) միջազգային պայմանագրերի բաժնի վարիչ, ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու (միջազգային հանրային իրավունք):

Թեև Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիան կարելի է դիտել որպես մարդու իրավունքների ոլորտում ընդունված առաջին ժամանակակից միջազգային ունիվերսալ փաստաթուղթ (այն ընդունվել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից մեկ օր առաջ), այդուհանդերձ, մոտ կես դար այն գործնականում գրեթե չի կիրառվել: Այս կապակցությամբ անհնարին է չհիշատակել հայտնի իրավաբան, միջազգայնագետ Գ.Շվարցենբերգերի այն միտքը, թե *«Կոնվենցիան անհրաժեշտ չէ, երբ այն կիրառելի է, կիրառելի չէ, երբ անհրաժեշտ է»* [1]:

Ահա այսպիսին էր Ցեղասպանության մասին կոնվենցիային տրված ընդհանուր միջազգային իրավական գնահատականն ընդհուպ մինչև սառը պատերազմի ավարտը, երբ նախկին Հարավսլավիայում և Ռուանդայում ծավալված իրադարձությունները ՄԱԿ Անվտանգության խորհրդին ստիպեցին 827 և 955 բանաձևերն ընդունելու միջոցով նախաձեռնել երկու միջազգային քրեական *ad hoc* տրիբունալների ստեղծումը, որոնց առարկայական իրավազորությունը տարածվում էր նաև ցեղասպանության հանցագործության վրա: Գրեթե նույն ժամանակահատվածից սկսվեցին նաև ցեղասպանության համար պետություններին միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու փորձերը: Այսպես, 1990-ական թթ.մի քանի դատավարություն նախաձեռնվեց ՄԱԿ Միջազգային դատարանում (Բոսնիան և Հերցեգովինան ընդդեմ Հարավսլավիայի (1993թ.) [2], Հարավսլավիան ընդդեմ ՆԱՏՕ-ի (1999թ.), [3] Խորվաթիան ընդդեմ Հարավսլավիայի (1999թ.) [4]: Ահա, կարելի է ասել, հենց 1990-ական թթ. սկզբնավորվեց Ցեղասպանության մասին կոնվենցիայի գործնական կիրառումը, և նոր մակարդակի բարձրացվեց ցեղասպանության համար պետությունների միջազգային իրավական պատասխանատվության հիմնախնդիրը:

1. Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի դրույթների ընդհանուր վերլուծությունը

Ցեղասպանության մասին կոնվենցիան ընդունվել է 1948թ. դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ մտել 1951թ. հունվարի 12-ին: Ժամանակակից չափանիշներով Ցեղասպանության մասին կոնվենցիան փոքրածավալ փաստաթուղթ է: Այն բաղկացած է ընդամենը 19 հոդվածից: Ընդ որում, դրանցից «բովանդակային» կարելի է համարել միայն I-IX հոդվածները, քանի որ մնացած տասն առավելապես տեխնիկական բնույթ են կրում և կարգավորում են Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու, այն վերանայելու, ուժի մեջ մնալու ժամկետի, տարածքային կիրառելիության և այլ հարցեր: Տվյալ կոնվենցիայի հիմնական նպատակներից

էր հաստատել այն փաստը, որ ցեղասպանությունը դիտվում է որպես հանցագործություն՝ համաձայն միջազգային իրավունքի, և մեկընդմիշտ ճանաչել ցեղասպանությունն արգելող ընդհանուր միջազգային իրավունքի նորմի գոյության փաստն ու սահմանել Կոնվենցիայի բուն էությունը՝ հստակեցնել և մանրամասնել ընդհանուր միջազգային իրավունքի նորմերով արդեն երկար ժամանակ արգելված արարքը:

Սա էր պատճառը, որ 1948թ. Ցեղասպանության հանցագործության մասին կոնվենցիան ընդունելիս ՄԱԿ անդամ երկրներն առաջին հոդվածում ամրագրեցին հետևյալը. *«Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար»*[1]:

Փաստորեն, տվյալ եզրահանգումը Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուն պես հաստատվեց նաև 1951թ. ՄԱԿ Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացության մեջ: Դրանում նշվում էր, որ *«Կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները բոլոր քաղաքակիրթ պետությունների կողմից ճանաչվում են որպես պարտադիր՝ նույնիսկ առանց որևէ կոնվենցիոնալ ամրագրման»* [5]:

Կոնվենցիայի II հոդվածն առանցքային նշանակություն ունի. այն սահմանում է ցեղասպանության հանցագործության հասկացությունը: Այդ հոդվածի տրամաբանական շարունակություն կարելի է համարել նաև հոդված III-ը, որում ցեղասպանության հանցագործության հետ մեկտեղ սահմանված են պատժելի արարքները (ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը, ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը, ցեղասպանություն կատարելու փորձը և ցեղասպանության կատարման մեջ հանցակցությունը):

Կոնվենցիայի IV-VII հոդվածները նվիրված են ցեղասպանություն կամ III հոդվածում թվարկված որևէ արարք կատարած անձանց պատասխանատվության սկզբունքներին, ցեղասպանության դեմ արդյունավետ պայքարի համար համապատասխան օրենսդրության ընդունմանը և այդ հանցանքի համար արդյունավետ պատժամիջոցների սահմանմանը, ցեղասպանություն կամ Կոնվենցիայի III հոդվածում թվարկված որևէ արարք կատարած անձանց դատելու համար իրավազորությանը և նրանց հանձնմանը:

Կոնվենցիայի VIII հոդվածը նվիրված է ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժելու ոլորտում Կոնվենցիայի մասնակից պետությունների լիազորություններին: Այսպես, Կոնվենցիայի VIII հոդվածի համաձայն. *«Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ կարող է դիմել Միավորված*

[1] Մասնավորապես, անգլերեն բնօրինակում օգտագործվում է *confirm* (հաստատել), իսկ ռուսերենում՝ *подтверждают* (հաստատում են) եզրույթները:

Ազգերի Կազմակերպության իրավասու մարմիններին՝ Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան՝ ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք նրանք անհրաժեշտ են համարում ցեղասպանությունը և III հոդվածում թվարկված որևէ այլ արարք կանխարգելելու ու կանխելու համար»:

Եվ, վերջապես, Կոնվենցիայի IX հոդվածի հիմնական առաքելությունը մասնակիցների միջև առկա վեճերը լուծելու համար անհրաժեշտ կառուցակարգի ապահովումն է: Նշված հոդվածում, մասնավորապես, սահմանվում է, որ *«Պայմանավորվող կողմերի միջև վեճերը՝ կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման և կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանություն կամ III հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը, հանձնվում են Միջազգային դատարանի քննարկմանը՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով»:*

Ահա այսպիսին է Կոնվենցիայի դրույթների բովանդակության համառոտ նկարագրությունը, որի վերլուծությունն ավելի շատ հարցեր է առաջացնում, քան պատասխաններ տալիս: Եվ առավել խրթին հարցերից է մնում Կոնվենցիայի շրջանակներում պետությունների պատասխանատվության խնդիրը, որը Կոնվենցիայում բավարար մակարդակով մանրամասնված չէ: Ահա հենց այս հարցերի պատասխանները կփորձենք ներկայացնել սույն հոդվածի շրջանակներում:

2. Ցեղասպանության համար պետությունների միջազգային իրավական պատասխանատվության հիմնախնդիրը

Միջազգային իրավունքի յուրահատկությունների խորության մեջ չթափանցած անձանց գուցեն զարմանալի թվա այն դրույթը, որ ցայսօր միջազգային իրավունքում գոյություն չունի պետությունների միջազգային իրավական պատասխանատվության սկզբունքներն ու կանոնները սահմանող որևէ պարտադիր իրավաբանական բնույթ ունեցող գրավոր փաստաթուղթ: Այդուհանդերձ, դա ճշմարտություն է, քանզի գոյություն չունի որևէ միջազգային պայմանագիր, որը պարտավորություն կդներ պետությունների վրա՝ միջազգային հակահիրավական արարքներ թույլ տված պետությունների նկատմամբ կիրառելու որոշակի ընդհանուր նորմեր և սկզբունքներ: Այլ կերպ ասած՝ պետությունների պատասխանատվության, այսպես կոչված, «երկրորդային» նորմերն ու սկզբունքները պայմանագրային ամրագրում գրեթե չունեն, բացառությամբ առանձին փաստաթղթերում որոշ կցկտուր հիշատակումների: Նման պայմանագրային փաստաթղթի ընդունումը, անշուշտ, ձեռնտու չէ և ոչ մի պետության, քանի որ մշտապես գերադասելի է միջազգային իրավական պատաս-

խանատվության հարցերը կարգավորել ոչ թե կոշտ պայմանագրային ամրագրում ստացած նորմերի, այլ ճկուն սովորութային միջազգային իրավական նորմերի միջոցով:

Ինչևիցե, այս հարցում որոշակի պարզություն մտցրեց ՄԱԿ Գլխավոր ասամբլեան՝ 2001թ. դեկտեմբերի 12-ին ընդունելով Միջազգային հակահիրավական արարքների համար պետությունների պատասխանատվության վերաբերյալ 56/83 բանաձևը [6]: Դրան հավելվածի տեսքով կցված էր նույն վերտառությամբ մի փաստաթուղթ, որը ՄԱԿ Միջազգային իրավունքի հանձնաժողովի ավելի քան 50 տարվա աշխատանքի արդյունքն էր և, ըստ էության, պետությունների միջազգային իրավական պատասխանատվության ոլորտում սովորութային նորմերի գոյությունը հավաստող եզակի փաստաթուղթ:

Այդ փաստաթղթում, *inter alia*, որոշակի լուծում ստացավ նաև ցեղասպանության և միջազգային հանցագործություն համարվող այլ հակահիրավական արարքների համար պատասխանատվության հարցը: Այսպես, տվյալ փաստաթղթում նախատեսվեց III բաժինը՝ «Ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից բխող պարտավորությունների լուրջ խախտումներ» վերտառությամբ (40, 41 հոդվածներ), որում ամրագրվեցին հենց միջազգային հանցագործությունների համար պետությունների պատասխանատվության վերաբերյալ դրույթները: Տվյալ փաստաթուղթը նախապատրաստողները հրաժարվեցին «միջազգային հանցագործություններ» եզրույթից՝ այն փոխարինելով *ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից բխող պարտավորությունների լուրջ խախտումներ* արտահայտությամբ, որը թեև ավելի խրթին է թվում, սակայն առավել հստակ է արտահայտում նշված երևույթի էությունը՝ այն տարբերելով ֆիզիկական անձանց կողմից կատարվող հանցավոր արարքներից: Թեև փաստաթղթում ուղղակի չի խոսվում այն մասին, որ ցեղասպանությունը դիտվում է որպես ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից բխող պարտավորությունների լուրջ խախտում, հոդված 40-ի մաս 2-ում ընդամենը սահմանելով, որ *«Նման պարտավորության խախտումը լուրջ է, եթե այն զուգորդված է պատասխանատու պետության պարտավորության կոպիտ կամ սիստեմատիկ չկատարման հետ»,* այդուհանդերձ, ՄԱԿ Միջազգային իրավունքի հանձնաժողովի կողմից այդ փաստաթղթի վերաբերյալ արված մեկնաբանություններում նշվում է, որ ցեղասպանությունը պետք է դիտվի որպես ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից բխող պարտավորությունների լուրջ խախտում [7]:

Ընդհանրացնելով ասվածը՝ կարող ենք եզրակացնել, որ տվյալ փաստաթուղթը վերջ դրեց միջազգային իրավունքում հաճախակի արտահայտվող այն կարծիքներին, թե պետությունը չի կարող պատասխանատվության ենթարկվել «միջազգային հանցագործություններ» կատարելու համար, իսկ պետության պատասխանատվությունն առավելապես կրում է քաղաքական և ոչ թե

իրավական բնույթ: Այսպիսով, վերջ դրվեց նաև ցեղասպանության համար պետությունների միջազգային իրավական պատասխանատվության անհնարինության վերաբերյալ ասեկոսեներին:

Այնուամենայնիվ, մեր խորին համոզմամբ, նշված զարգացումներն անպատասխան թողեցին այն հարցը, թե ցեղասպանության համար պետությունների պատասխանատվության խնդիրը կարող է իրագործվել Ցեղասպանության մասին կոնվենցիայի IX հոդվածի հիման վրա: Այլ կերպ ասած՝ նախագծվա՞ծ է, արդյոք, Ցեղասպանության մասին կոնվենցիան պետություններին պատասխանատվության կանչելու համար, թե՞ միայն ֆիզիկական անձանց քրեաիրավական պատասխանատվության ենթարկելու առաքելություն է իրականացնում:

3. Ցեղասպանության մասին կոնվենցիայի հիման վրա պետություններին միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը

Ահա հենց այս հարցը հիմնական դարձավ ՄԱԿ Միջազգային դատարանի համար՝ Բոսնիան և Հերցեգովինան ընդդեմ Հարավսլավիայի գործի քննության ժամանակ: Դատարանի իրավազորությանն առնչվող հիմնական խնդիրը վերաբերում էր այն հանգամանքին, թե Ցեղասպանության մասին կոնվենցիան ինչ պարտավորություններ կարող է դնել կողմերի վրա: Դատարանը մասնավորապես արձանագրեց, որ կողմերի միջև *«առկա է»* Կոնվենցիայի IX հոդվածի իմաստի և իրավական շրջանակների կապակցությամբ վեճ առ այն, թե վերջինս սահմանափակում է Պայմանավորվող կողմերի պարտավորություններն իրավաստեղծմամբ և քրեորեն հետապնդելով կամ հանձնելով, թե մասնակից պետությունների պարտավորությունները ներառում են ցեղասպանություն և Կոնվենցիայի III հոդվածում թվարկված արարքներ չկատարելու պարտավորությունը [8, p. 58, para. 152]:

Դատարանը նշեց, որ Կոնվենցիայով կողմերի վրա դրվող պարտավորությունները պետք է դիտարկել դրանում ամրագրված հասկացությունների սովորական իմաստով՝ դրա օբյեկտի և նպատակի համատեքստում և դրանց լույսի ներքո [8, p. 60, para. 160]: Այն վերիմաստավորեց Կոնվենցիայի հոդված 1-ի ձևակերպումները, որում *inter alia* նախատեսվում էր հետևյալը. *«Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար»:*

Դատարանը գտավ, որ «Կոնվենցիայի I հոդվածը, մասնավորապես, կոչված լինելով կանխարգելմանը, ստեղծում է պարտավորություններ, որոնք

տարբերվում են նրանցից, որոնք բխում են հաջորդ հոդվածներից: Այս եզրակացությունը հաստատվում է նաև Կոնվենցիայի զուտ մարդասիրական և քաղաքակրթական նպատակով» [8, p. 60, para. 160]:

Դատարանն այնուհետև քննության առավ այն հարցը, թե կրում են, արդյոք, Պայմանավորվող կողմերը ցեղասպանություն չկատարելու պարտավորություն, քանզի նման պարտականությունը հստակ սահմանված չէ Կոնվենցիայի դրույթներում: Դատարանը հանգեց այն դիրքորոշմանը, որ I հոդվածի իրավական բովանդակությունն արգելում է պետություններին ցեղասպանություն կատարել: Նման արգելքը բխում է նախ՝ այն փաստից, որ վերջինս ցեղասպանությունը բնորոշում է որպես «հանցագործություն ըստ միջազգային իրավունքի»: Համաձայնելով նշված սահմանման հետ՝ մասնակից պետությունները պետք է տրամաբանորեն ձեռնամուխ լինեն չկատարելու դրանում նկարագրված արարքները: Երկրորդ՝ դա բխում է ցեղասպանության ակտերը կանխարգելելու՝ հստակորեն սահմանված պարտավորությունից: Անհեթեթ կլիներ, եթե պետությունները պարտավորություն ստանձնեին կանխարգելելու ցեղասպանությունը, սակայն նրանց չարգելվեր կատարել նման արարքներ իրենց սեփական մարմինների միջոցով կամ այն անձանց կողմից, որոնց նկատմամբ նրանք ունեն այնպիսի հստակ վերահսկողություն, որ նրանց արարքները, ըստ միջազգային իրավունքի, վերագրելի են համապատասխան պետությանը [8, p. 63, para. 166]: Այլ կերպ ասած՝ ցեղասպանությունը կանխարգելելու պարտավորությունն անպայմանորեն ենթադրում է ցեղասպանության կատարման արգելքը: Դատարանը նշել է նաև, որ իր եզրակացությունն ամրապնդվում է նաև IX հոդվածի ձևակերպման մի հատուկ առանձնահատկությամբ, մասնավորապես, *«ներառյալ նաև ցեղասպանություն կամ III հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը»* արտահայտությամբ: Կոնվենցիայի անգլերեն և ռուսերեն բնօրինակների տեքստերի ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ քննարկվող պատասխանատվությունը պատասխանատվություն է *ցեղասպանության համար* և ոչ թե պատասխանատվություն՝ *ցեղասպանությունը չկանխարգելելու կամ չպատժելու համար:* Դատարանն արդյունքում հանգեց այն եզրակացության, որ նշված արտահայտության առանձին եզրույթներ՝ որպես այդպիսին, հաստատում են, որ Պայմանավորվող կողմերը կարող են պատասխանատվության ենթարկվել ցեղասպանություն կամ III հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար [8, p. 64, para. 168]:

Վերջնականապես հաստատելով այն կանխադրույթը, որ պետությունը կարող է պատասխանատվության ենթարկվել ցեղասպանության համար՝ ՄԱԿ Միջազգային դատարանը վերջակետ դրեց այն հարցին, որ Ցեղասպանության մասին կոնվենցիան նախագծված չէ պետությանը պատասխանա-

տվության կանչելու համար: Սա, մեր կարծիքով, մարտավարական հաղթանակ կարելի է համարել հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետությանը միջազգային իրավական պատասխանատվության կանչելու համար, քանի որ Դատարանը, մեր կարծիքով, միանգամից երկու խնդիր լուծեց. նախ՝ ճանաչեց Կոնվենցիայի հիման վրա պետությանը պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը, և հաստատեց տվյալ հարցի առնչությամբ առկա իրավազորությունը:

4. Ցեղասպանության համար պետություններին միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ պայմանները

4.1. Պատասխանատվություն պետական մարմինների և պաշտոնատար անձանց արարքների համար

Բավարար չէ արձանագրել այն փաստը, որ պետությունը կարող է Ցեղասպանության մասին կոնվենցիայի հիման վրա պատասխանատվության ենթարկվել ցեղասպանություն կատարելու համար: Անհրաժեշտ է վեր հանել այն պայմանները, որոնց առկայության պարագայում այն կարող է հնարավոր լինել:

Ընդհանրապես խոսելով պետության պատասխանատվության մասին՝ պետք է պարզենք, թե որ արարքների համար այն կարող է պատասխանատվության ենթարկվել: Պետությունը, ըստ էության, կարող է գործել միայն պետական ապարատի և իր վերահսկողության ներքո գտնվող կառույցների ու անձանց միջոցով: Այդ իսկ պատճառով պետությունների պատասխանատվության անկյունաքարային դրույթներից մեկն այն է, որ պետության յուրաքանչյուր մարմնի արարք պետք է դիտել որպես այդ պետության արարք՝ ըստ միջազգային իրավունքի և, հետևաբար, եթե այն պետության միջազգային պարտավորության խախտում է, ապա պետության պատասխանատվության հարց է առաջացնում:

Այս խնդիրն առաջին հայացքից միգուցե կթվա երկրորդական և ոչ անհրաժեշտ, սակայն կարևորագույն նշանակություն ունի հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետությանը պատասխանատվության ենթարկելու համար, քանի որ դրա համար բավարար չէ սոսկ ցեղասպանության եղելության փաստի ապացուցումը: Պետք է նաև ապացուցել, որ այն իրագործվել է Օսմանյան կայսրության պետական մարմինների կողմից, դրանց մասնակցությամբ կամ թողտվությամբ: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է որոշել (ընդ որում՝ ցեղասպանության յուրաքանչյուր դրվագի համար առանձին), թե 1915-1923թթ. տեղի ունեցած ցեղասպանության մաս կազմող արարքներն արդյոք այդ ժամանակ Օսմանյան կայսրության գործող

մարմինների կարգավիճակ ունեցող անձանց կամ կազմավորումների կողմից են կատարվել, թե ոչ: Մեզ համար ըմբռնելի է այն զգացմունքը, որը կարող է արթնանալ ցանկացած ընթերցողի մեջ՝ այս բառերն ընթերցելուց հետո: Իհարկե, կասկածի տակ չենք առնում ո՛չ հայերի դեմ իրագործված ցեղասպանության եղելության, ո՛չ էլ այն կազմակերպելու համար Օսմանյան կայսրության պատասխանատվության փաստը, այդուհանդերձ, տվյալ հարցը ՄԱԿ Միջազգային դատարան տեղափոխելու պարագայում *inter alia* անպայմանորեն պետք է ներկայացվի նաև ցեղասպանության փաստական կողմը կամ, այլ կերպ ասած՝ վեր հանվեն այն արարքները, որոնց միջոցով իրագործվել է ցեղասպանությունը *(actus reus),* և այն իրագործելու հատուկ մտադրությունը *(dolus specialis),* ինչից հետո միայն հնարավոր կլինի անդրադառնալ այդ արարքների համար Օսմանյան կայսրության պատասխանատվության հիմնախնդրին:

Ինչպես արդեն նշեցինք, պետությունը պատասխանատվություն է կրում իր բոլոր մարմինների, ներառյալ՝ բանակի, արարքների համար, սակայն հայտնի է, որ հայերի դեմ իրագործված ցեղասպանությանը մասնակցել են նաև բազում այլ, այսպես կոչված, կիսապետական կամ իբր-պետական կազմավորումներ, որոնցից կարելի է մատնանշել, մասնավորապես, քրդական ռազմականացված խմբավորումները: Կարո՞ղ են, արդյոք, դրանց արարքները վերագրվել Օսմանյան պետությանը, և եթե այո, ապա ի՞նչ պայմանների ապահովման պարագայում: Նման խնդրի առաջ, մասնավորապես, կանգնեց ՄԱԿ Միջազգային դատարանը Բոսնիան և Հերցեգովինան ընդդեմ Հարավսլավիայի գործով որոշում կայացնելիս, քանի որ անհրաժեշտ էր պարզել, թե կարող է, արդյոք, Սերբիան պատասխանատվություն կրել Սրեբրենիցայի տարածքում *«Սկորպիոններ»* անունով հայտնի ռազմականացված միլիցիայի արարքների համար:

Այս հարցում դատարանը հավատարիմ մնաց իր՝ դեռևս 1986թ. Նիկարագուայում և դրա շուրջ ռազմական և կիսառազմական գործողությունների վերաբերյալ գործով *(Նիկարագուան ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների) որոշման* մեջ ամրագրված դիրքորոշմանը, համաձայն որի՝ անձինք, անձանց խմբերը կամ կազմավորումները կարող են միջազգային պատասխանատվության իմաստով հավասարեցվել պետության մարմիններին, եթե նույնիսկ նման կարգավիճակը չի բխում ներպետական իրավունքից, պայմանով, որ այդ անձինք, անձանց խմբերը կամ կազմավորումները փաստացի գործել են պետությունից *«լիակատար կախվածությամբ»* [8, pp. 140-141, para. 392]*:*

Ներկայացված փաստերը գնահատելիս, հիմք ընդունելով այս մոտեցումը, Դատարանը հանգեց այն եզրակացության, որ «Սկորպիոնները» չեն հանդիսացել *«Սերբիայի ներքին գործերի նախարարության ստորաբաժանում»* և 1995թ. կեսերին չեն դիտվել որպես պատասխանողի *de jure* մարմիններ: Ուստիև, Դատարանը գտավ, որ Սրեբրենիցայում տեղի ունեցած ցեղա-

սպանության ակտերը չեն կարող վերագրվել պատասխանողին՝ իր մարմինների կամ նրանից ամբողջովին կախված անհատների և կազմավորումների կողմից կատարված լինելու հիմքով և, հետևաբար, չեն կարող հանգեցնել պատասխանողի միջազգային պատասխանատվությանը:

Գտնում ենք, որ տվյալ առումով հայերի դեմ իրագործված ցեղասպանության և Սրեբրենիցայում տեղի ունեցած ցեղասպանության փաստական հանգամանքները, անշուշտ, զգալիորեն տարբերվում են, և Օսմանյան կայսրության մարմինների ներգրավվածության աստիճանը շատ ավելի բարձր է եղել: Սակայն եթե նույնիսկ հիպոթետիկ ենթադրենք, որ միջազգային իրավունքի տեսանկյունից հնարավոր չի լինի ապացուցել Օսմանյան կայսրության մարմինների մասնակցությունը հայերի դեմ իրագործված ցեղասպանության մաս կազմող արարքներին (ինչն ինքնին անհեթեթ է), դա որևէ կերպ չի կարող ազդել Օսմանյան կայսրության իրավահաջորդի պատասխանատվության վրա, քանի որ պետական մարմինների արարքների համար պատասխանատվությունը թեև պետությունների միջազգային իրավական պատասխանատվության առանցքային, բայց ոչ միակ հիմքն է:

4.2. Պատասխանատվություն պետության ցուցումներով, ուղղորդմամբ կամ նրա վերահսկողությամբ կատարված միջազգային հակահիրավական արարքների համար

Միջազգային հակահիրավական արարքների, այդ թվում՝ ցեղասպանության համար պետությունների պատասխանատվության ժամանակակից սկզբունքները նախատեսում են պատասխանատվության ևս մեկ կարևոր հիմք: Պետությունը պատասխանատվության է ենթարկվում նաև այն պարագայում, երբ ուղղորդում է այլ կազմավորումների կամ անձանց միջազգային հակահիրավական արարքները կամ վերահսկողություն է իրականացնում դրանց նկատմամբ: Այս հարցը, մեր կարծիքով, կարող է սկզբունքային նշանակություն ունենալ հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետությանը պատասխանատվության ենթարկելու առումով, քանզի, ինչպես արդեն նշել ենք, հայերի դեմ իրագործված ցեղասպանության մաս կազմող արարքների մի ստվար խումբ կատարվել է այնպիսի կառույցների կողմից, որոնք կա՛մ իբր-պետական կամ կիսապետական բնույթ են կրել, կա՛մ անմիջականորեն ուղղորդվել կամ վերահսկվել են պետական մարմինների կողմից: Այս տեսանկյունից դատարանի քննության առնվող որոշումը որոշակի լույս կարող է սփռել, քանի որ Դատարանը քննության է առել այն հարցը, թե արդյոք Սրեբրենիցայի կոտորածները կատարվել են անձանց կողմից, որոնք, թեև պատասխանողի մարմինների կարգավիճակ չեն ունեցել, սակայն գործել են դրանց ցուցումներով, ուղղորդմամբ կամ վերահսկողության ներքո:

Դատարանը, վկայակոչելով ՄԱԿ Միջազգային իրավունքի հանձնաժողովի «Պատասխանատվության վերաբերյալ հոդվածների» հոդված 8-ում ամրագրված դրույթը, արձանագրեց, որ միջազգային պատասխանատվության սովորութային իրավունքի կիրառելի նորմն այն է, որ անձանց կամ անձանց խմբերի արարքը պետք է դիտվի որպես պետության արարք՝ ըստ միջազգային իրավունքի, եթե անձինք կամ անձանց խումբն արարքն իրագործելիս փաստացի գործում են տվյալ պետության ցուցումներով կամ ուղղորդմամբ, կամ նրա վերահսկողության ներքո: Ըստ Դատարանի՝ այս դրույթը պետք է ընկալվի տվյալ խնդրի վերաբերյալ Դատարանի պրակտիկայի, մասնավորապես, Նիկարագուայում և դրա շուրջ ռազմական և կիսառազմական գործողությունների վերաբերյալ գործով 1986թ. որոշման (Նիկարագուան ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների) [9] լույսի ներքո [8, pp. 142-143, para. 392]:

Անշուշտ, հավատարիմ մնալով այս հարցում իր դիրքորոշմանը՝ Դատարանը, մեր կարծիքով, բավական դժվարացրեց այդ հիմքով հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետությանը պատասխանատվության ենթարկելու խնդիրը, քանի որ այսօր՝ դեպքերից ավելի քան 90 տարի անց, բավական դժվար կլինի բացահայտել յուրաքանչյուր առանձին դրվագում ցեղասպանություն իրագործող կազմավորումների կամ անձանց արարքների նկատմամբ Օսմանյան կայսրության պետական մարմինների անմիջական վերահսկողությունը, ցուցումները կամ ուղղորդումը: Բավական դժվար, սակայն իրականանալի, քանի որ այդ թվականների հարուստ պաշտոնական նամակագրությունը և առկա այլ պաշտոնական փաստաթղթերը, մեր կարծիքով, թույլ են տալիս այս հարցին էլ դրական պատասխան տալ: Այդուհանդերձ, եթե տեսականորեն ենթադրենք, որ այստեղ ևս կարելի է ձախողվել, ապա նույնիսկ դա Թուրքիայի Հանրապետությանը թույլ չի տա խուսափելու պատասխանատվությունից, քանի որ, ինչպես հայտնի է, պետությունը պատասխանատվության է ենթարկվում ոչ միայն գործողությունների, այլ նաև անգործության համար:

5. Հայերի դեմ իրագործված ցեղասպանության հարցը ՄԱԿ Միջազգային դատարանի քննությանը՝ Ցեղասպանության մասին կոնվենցիայի IX հոդվածի հիման վրա, հանձնելու հնարավորությունը

Ինչպես արդեն նշել ենք, Ցեղասպանության մասին կոնվենցիան IX հոդվածում նախատեսում է, որ *«Պայմանավորվող կողմերի միջև վեճերը՝ կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման կամ կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանության կամ սույն Կոնվենցիայի III հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը, հանձնվում են Արդարադատության միջազգային դատարանի քննությանը՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով»:*

Ինչպես հայտնի է, և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ Թուրքիայի Հանրապետությունը համապատասխանաբար՝ 1993թ. հունիսի 23-ից և 1950թ. հուլիսի 31-ից միացել են Ցեղասպանության մասին կոնվենցիային[1]: Ավելին, ինչպես Հայաստանը, այնպես էլ Թուրքիան որևէ վերապահում չեն արել հիշատակված Կոնվենցիայի IX կամ այլ հոդվածների կապակցությամբ: Հետևաբար, հայերի դեմ իրագործված ցեղասպանության հարցը ՄԱԿ Միջազգային դատարանի քննության առարկա հիպոթետիկ կերպով կարող էր դառնալ արդեն 1951թ. հունվարի 12-ից (Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ամսաթվից): Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԽՍՀՄ կազմում Հայկական ԽՍՀ միջազգային իրավասուբյեկտությունը, ինչպես նշել ենք, սոսկ ձևական բնույթ էր կրում, նման գործի հարուցումը գործնականում անհնարին էր:

Հայերի դեմ իրագործված ցեղասպանության հարցի քննությունը Միջազգային դատարանում ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում անհնարին էր նաև Կոնվենցիայի IX հոդվածի վերաբերյալ ԽՍՀՄ վերապահման առկայության պատճառով, որը խոչընդոտում էր այդպիսի հնարավորությունը:

Սակայն Հայաստանի՝ միջազգային հանրության լիիրավ անդամ և Ցեղասպանության մասին կոնվենցիայի մասնակից դառնալուց հետո այդպիսի հնարավորությունն իրականություն դարձավ: Հետևաբար, Հայաստանի Հանրապետությունն արդեն ավելի քան 15 տարի օժտված է հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության պատասխանատվության հարցը ՄԱԿ Միջազգային դատարանի քննությանը միակողմանիորեն՝ Կոնվենցիայի IX հոդվածի հիման վրա փոխանցելու իրավունքով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիայի Հանրապետությունը Ցեղասպանության մասին կոնվենցիայի վավերացմամբ ճանաչել է Դատարանի իրավազորությունն այդ հարցի կապակցությամբ: Պետք է նշել, որ ցեղասպանությունը՝ որպես *erga omnes* իմպերատիվ միջազգային պարտավորության խախտում, հնարավորություն է ընձեռում ոչ միայն ցեղասպանությունից անմիջականորեն տուժած, այլ նաև ցանկացած այլ պետության Ցեղասպանության մասին կոնվենցիայի IX հոդվածի հիման վրա դատավարություն նախաձեռնել ՄԱԿ Միջազգային դատարանում: Անշուշտ, ոչ տուժող պետության կողմից նման դատավարության նախաձեռնումը փոքր-ինչ սահմանափակում է դիմողի իրավունքների շրջանակը, քանի որ վերջինս կարող է պահանջներ ներկայացնել, որոնք բացառապես ուղղված են այդ հանցագործության արդյունքում տուժած անձանց իրավունքների վերականգնմանը և նրանց պատճառված վնասի հատուցմանը:

Սակայն հանուն ճշմարտության պետք է ասել, որ նշված հիմքով ՄԱԿ Միջազգային դատարանում դատավարություն նախաձեռնելու դեպքում կա-

[1] http://www2.ohchr.org/english/bodies/ratification/1.htm 02.05.2008

րող ենք բախվել բազմաթիվ «ստորջրյա խութերի», որոնցից կարելի է հիշատակել Կոնվենցիայի հետադարձության, Թուրքիայի Հանրապետության իրավահաջորդության, Կոնվենցիայի տարածքային կիրառելիության հետ կապված հարցերը և այլն:

Հայերի դեմ իրագործված ցեղասպանության վերաբերյալ գործը Միջազգային դատարան փոխանցելու համար առաջին հերթին անհրաժեշտ է որոշել տվյալ հարցում ՄԱԿ Միջազգային դատարանի իրավազորության հիմքը: Գտնում ենք, որ տվյալ դեպքում Դատարանի իրավազորության հիմքը նույն՝ Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի IX հոդվածն է, որը ենթադրում է Կոնվենցիայի մասնակից պետությունների միջև Կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման կամ կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանություն կատարելու կապակցությամբ վեճ առաջանալու դեպքում Դատարան դիմելու հնարավորությունը:

Հետևաբար, *«պարզելու համար, թե արդյոք Դատարանն օժտված է Ցեղասպանության մասին կոնվենցիայի IX հոդվածի հիման վրա գործը քննելու իրավազորությամբ, Դատարանին անհրաժեշտ է հաստատել, թե գոյություն ունի, արդյոք, կողմերի միջև տվյալ դրույթի գործողության տակ ընկնող վեճ»* [10, para. 27]:

Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության մասին գործով (Բոսնիան և Հերցեգովինան՝ ընդդեմ Հարավսլավիայի) որոշման մեջ Դատարանը, վեճի առկայության հաստատման համար դիտարկելով կողմերի բևեռային ու իրարամերժ դիրքորոշումները և հղում կատարելով նախկինում իր իսկ արտահայտած իրավական դիրքորոշումներին, եզրակացրեց, որ «ձևավորված պրակտիկային համապատասխան… շարունակում է գոյություն ունենալ մի իրավիճակ, որում երկու կողմերն զբաղեցնում են ծայրահեղ հակադիր տեսակետներ՝ որոշակի պայմանագրային պարտավորությունների կատարման կամ չկատարման հարցի վերաբերյալ» *(Interpretation of Peace Treaties with Bulgaria, Hungary and Romania, First Phase, Advisory Opinion, I.C.J. Reports 1950, p. 74)*, և որ Հարավսլավիայի կողմից Բոսնիայի և Հերցեգովինայի ներկայացրած պահանջների ժխտման պատճառով նրանց միջև «առկա է իրավական վեճ *(East Timor (Portugal v. Australia), I.C.J. Reports 1995, p. 100, para. 22)»* [10, para. 29]:

Հիմք ընդունելով դատարանի նշված իրավական դիրքորոշումը՝ կարելի է վստահ հայտարարել, որ հայերի դեմ իրագործված ցեղասպանության հարցում Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը որոշակի միջազգային իրավական պարտավորությունների կատարման կամ չկատարման վերաբերյալ ունեն հստակ արտահայտված ծայրահեղ հակադիր դիրքորոշումներ, որոնք մասնավորապես շարադրված են 1948թ. դեկտեմբերի

9-ի Ցեղասպանության մասին կոնվենցիայում: Հետևաբար, հղում կատարելով ՄԱԿ Միջազգային դատարանի պրակտիկային՝ կարելի է ենթադրել, որ հայերի դեմ իրագործված ցեղասպանության հիմնախնդիրը միջազգային իրավունքի տեսանկյունից, իրավաբանական բնույթի միջազգային վեճ է:

Ելնելով վերոհիշյալից՝ կարելի է հայտարարել, որ տվյալ հարցում Միջազգային դատարանի *ratione materiae* իրավազորությունը որևիցե էական առարկություն առաջացնել չի կարող:

Ավելի բարդ է Դատարանի *ratione temporis* իրավազորության հարցը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վեճի առարկա կազմող արարքները տեղի են ունեցել Ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց շատ ավելի վաղ: Այլ կերպ ասած՝ դատարանում նշված հիմքով դատավարություն նախաձեռնելու պարագայում մենք անխուսափելիորեն բախվում ենք Կոնվենցիայի հետադարձ կիրառելիության՝ բավական վիճահարույց հիմնախնդրին:

Այդ հարցի վրա որոշակի լույս սփռելու համար ստիպված ենք կրկին վկայակոչել Ցեղասպանության մասին կոնվենցիայի նույն IX հոդվածը: Այն նշում է, որ Կոնվենցիայի մեկնաբանության հետ կապված վեճերը փոխանցվում են Միջազգային դատարանի քննությանը: Կոնվենցիայի դրույթներին հետադարձ ուժ տալու կամ չտալու հարցն ուղղակիորեն արծարծված չէ Կոնվենցիայի տեքստում: Սա տարակարծությունների տեղիք է տալիս: Այսպես, 2002թ. Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի համար պատրաստված իրավաբանական վերլուծության հեղինակները, վերլուծելով հայերի դեմ իրագործված ցեղասպանության նկատմամբ Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության հարցը, հանգել էին բացասական եզրակացության՝ նշելով, որ միջազգային իրավունքը, որպես կանոն, արգելում է պայմանագրերին հետադարձ ուժ տրամադրելը, *«եթե պայմանագրից այլ մտադրություն չի հետևում կամ այլ կերպ չի հաստատված»* [11]:

Ըստ վերլուծության հեղինակների՝ Կոնվենցիայի նախապատրաստման ամբողջ գործընթացը և դրա դրույթների ճնշող մեծամասնությունն ուղղակի վկայում են, որ Կոնվենցիան ստեղծողներն ապագային ուղղված (ակտիվ), այլ ոչ թե հետադարձ ուժ ունեցող (ռետրոսպեկտիվ) պարտավորություններ են դնում այն պետությունների վրա, որոնց նրանք ներկայացնում են՝ ներառելով «հանցագործությունների հետագա կանխարգելումը» [12, p. 7]: Վկայակոչելով Ցեղասպանության մասին կոնվենցիայի XIII հոդվածը՝ Հուշագրի հեղինակները հանգել էին այն եզրակացությանը, որ այն ուժի մեջ է մտել 1951թ. հունվարի 12-ին, ուստիև չի կարող առաջացնել ֆիզիկական անձանց քրեական կամ պետությունների միջազգային իրավական պատասխանատվություն այն իրադարձությունների համար, որոնք տեղի են ունեցել XXդ. սկզբին կամ ցանկացած այլ ժամանակ՝ մինչև 1951թ. հունվարի 12-ը [12, pp. 7-8]:

Մյուս կողմից, հեղինակների մեկ այլ խումբ, մասնավորապես, Ալֆրեդ դը Զայասը [13], գտնում է, որ Ցեղասպանության մասին կոնվենցիան կարող է կիրառվել հետադարձ ուժով, քանի որ այն նախապես գոյություն ունեցած միջազգային իրավունքի ամրագրումն է: Այսպես, օրինակ, Ա. դը Զայասը նշում է, որ *«Ցեղասպանության մասին կոնվենցիայի ձևակերպումները ո՛չ բացառում, ո՛չ էլ նախատեսում են դրա հետադարձ կիրառությունը: Այլ կերպ ասած՝ Կոնվենցիայի շարադրանքի մեջ չկա ոչինչ, ինչը կարգելեր դրա հետադարձ կիրառությունը: Ի տարբերություն դրա՝ գոյություն ունեն բազմաթիվ միջազգային պայմանագրեր, որոնք ուղղակիորեն ամրագրում են, որ դրանք չեն կիրառվում հետադարձորեն: Օրինակ, 1998թ. Միջազգային քրեական դատարանի կանոնադրության հոդված 11–ը սահմանում է, որ «Դատարանին ընդդատյա են միայն սույն Կանոնադրության ուժի մեջ մտնելուց հետո կատարված հանցագործությունները»* [13]: Ըստ Ա. դը Զայասի՝ *«Հատկանշական է, որ Ցեղասպանության մասին կոնվենցիան մշակողները չեն սահմանել, որ այն կիրառվելու է միայն ապագայի համար, թեև նրանք հեշտորեն կարող էին դա անել, եթե մտադրություն ունենային սահմանափակել դրա կիրառման շրջանակը»* [14]:

Քննադատության չենթարկելով նշված երկու դիրքորոշումներից ոչ մեկը՝ հարկադրված ենք ընդգծել, որ դրանք ոչ այլ ինչ են, քան Ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձ կիրառելիության վերաբերյալ դոկտրինալ մոտեցումներ, և որևէ իրավական ուժ ունենալ չեն կարող: Քանի որ Ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձ կիրառելիության հիմնահարցը Կոնվենցիայի դրույթների մեկնաբանման խնդիր է, ինչը դրա IX հոդվածի համաձայն՝ ՄԱԿ Միջազգային դատարանի բացառիկ իրավասության ոլորտի մեջ մտնող հարց է: Հետևաբար, Կոնվենցիայի հետադարձ կիրառելիության վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու բացառիկ իրավունքը պատկանում է միայն ՄԱԿ Միջազգային դատարանին, և քանի դեռ տվյալ հարցի առնչությամբ չկա վերջինիս իրավական դիրքորոշումը, ցանկացած դատողություն՝ Կոնվենցիայի հետադարձ կիրառելիության կամ դրա անհնարինության վերաբերյալ, կշարունակի մնալ տեսական դատողությունների մակարդակում:

Ապրիլ, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Островский Я.А.,* Практика Международного уголовного трибунала по Руанде – преступление геноцида. Материалы Международного курса по МГП для государственных служащих и представителей академических кругов. М., 2003 , с. 195.

2. Order on Request for the Indication of Provisional Measures in Case Concerning Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Yugoslavia), 1993 ICJ (April 8).
3. Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Yugoslavia v. NATO), 1999 ICJ (April 29).
4. Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Croatia v. Yugoslavia), 1999 I.C.J. (July 2).
5. Reservations to the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, Advisory Opinion, ICJ Reports (1951), pp. 15-69. See: Diane F. Orentlicher. Genocide. – Crimes of War. Editors: Roy Gutman and David Rieff. New York, 1999, pp. 153-157. Joe Verhoeven. Le Crime de Génocide. – Revue belge de droit international, vol. XXIV, 1991, pp. 5-26.
6. Official Records of the General Assembly: Fifty-sixth Session, Supplement No. 10 and corrigendum (A/56/10 and Corr. 1).
7. Commentaries to the draft articles on Responsibility of States for internationally wrongful acts adopted by the International Law Commission at its fifty-third session (2001), p. 188. Official Records of the General Assembly: Fifty-sixth session, Supplement No. 10 (A/56/10), chp. IV. E.2.
8. Case concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, ICJ http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf
9. Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v. United States of America) Merits, Judgment, ICJ Reports, 1986, p. 62-64.
10. Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), ICJ Judgments – Preliminary Objections – 11 July 1996.
11. Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. մայիսի 23-ի կոնվենցիայի հոդված 28:
12. “The Appllicability of the United Nations Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide to Events which occured durring the Early Twentieth Century”: Legal Analysis Prepared for the International Center for Transitional Justice, p. 5. Available at http://www.armenian-genocide.org/files/ICTJ_Memorandum.pdf
13. Alfred de Zayas. Memorandum on The Genocide against the Armenians 1915-1923 and the Application of the 1948 Genocide Convention. Available at http://www.anca.org/docs/deZayas-fullreport.pdf
14. Alfred de Zayas. The Genocide against the Armenians 1915-1923 and the relevance of the 1948 Genocide Convention. Available at http://alfreddezayas.com/Law_history/armlegopi.shtml

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ И РАЗВИТИЯ МЕЖДУНАРОДНОЙ ПРАВОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ГОСУДАРСТВ ЗА ГЕНОЦИД

Владимир Варданян

Резюме

Последнее десятилетие XXв. было переломным с точки зрения переосмысления и нового восприятия вопросов, связанных с Геноцидом армян. Если во второй половине 1980-х можно было говорить о некоторых тенденциях переведения проблемы Геноцида армян в правовую плоскость, 1990-ые ознаменовались активным освещением проблем, связанных с этой правовой плоскостью, то к началу третьего тысячелетия основным элементом осуществленного в отношении армян геноцида стали именно вопросы правового плана. Фактически, переведение проблемы Геноцида армян в правовую плоскость реанимировало «замороженный» еще в 20-ые годы XX века процесс привлечения к международной правовой ответственности за это преступление. Понятно, что после более чем 70-летнего замораживания сегодня выдвижение данного вопроса не могло иметь те же содержание и объем, что в 1920-ые гг. Тем не менее и к счастью, еще сохраняется возможность использования самой действенной и эффективной формы привлечения к ответственности за осуществленный в отношении армян геноцид – призвание к ответственности государства.

В этом контексте исследовался вопрос привлечения к ответственности за осуществленный в отношении армян геноцид.

«ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ» ԻՍՐԱՅԵԼՈՒՄ. ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մնակ Սարուխանյան[*]

Իսրայելը, որը վերջին մի քանի տասնամյակներին Մերձավոր Արևելքի ամենազարգացած և հզոր պետությունն է, ազգային պետության կերտման և պահպանման բարդ ճանապարհ է անցել։ Որպես ազգային պետության մրցունակության ապահովման մեթոդ՝ Իսրայելը կարողացել է ոչ միայն տեղայնացնել համաշխարհային քաղաքակրթության ձեռքբերումները՝ արևմտյան արժեհամակարգի, կրթական, ֆինանսական, ռազմական ինստիտուտների մասամբ կրկնօրինակման միջոցով, այլև ստեղծել է սեփական, ուրույն ինստիտուտներ և համակարգեր՝ հիմնված ազգային, համայնքային և միջազգային փորձի, շահերի համադրման, ազգային կազմակերպման սկզբունքների վրա։

Այդօրինակ ինստիտուտների օրինակ են «ուղեղային կենտրոնները», որոնք աշխատում են ազգային անվտանգության (ռազմական, քաղաքական, տեղեկատվական, տնտեսական, սոցիալական, մշակութային ոլորտները ներառող) սպասարկման ուղղությամբ։

Իսրայելական գիտական և հետազոտական համակարգի ուրույնությունը միայն այն չէ, որ «անապատային պայմաններում» (*հաշվի առնելով այն, որ հենց Նեգևի անապատում են գտնվում իսրայելական գիտական խոշոր կառույցներից շատերը, այս արտահայտությունը կարելի է նաև ուղղակի իմաստով օգտագործել*) կարճ ժամանակահատվածում[1] ստեղծվել է աշխարհի ամենամրցունակ գիտատեխնիկական համակարգերից մեկը, այլև այն, որ հրեական պետությունը կարողացել է ազգային գիտական համակարգը համաշխարհայինին ինտեգրել այնպիսի մեթոդներով, որ վերջինս սպասարկի առաջինին, այլ ոչ թե հակառակը։ Սա կարևոր հատկություն է, առանց որի՝ հնարավոր չէին լինի այն արդյունքները, որոնք արձանագրել է թե՛ իսրայելական պետությունը և թե՛ իսրայելական գիտակրթական համակարգը։ Այս հատկության կամ ավելի ճիշտ՝ երևույթի մասին մանրամասն կխոսենք իսրայելական «ուղեղային կենտրոնների» օրինակով։ Նշենք, որ իսրայելական

[*] «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, քաղաքական գիտությունների թեկնածու։

[1] Իսրայել պետության ստեղծումից մինչև իսրայելական միջուկային զենքի ստեղծումն անցել է 20 տարուց պակաս ժամանակ։

«ուղեղային կենտրոնների» (լայն իմաստով՝ նաև հետազոտական ինստիտուտների) ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն որպես առանձին տեսական խնդիր, այլև կիրառական հարթությունում անհրաժեշտ և օգտակար է Հայաստանի և Հայության համար: Սա բացատրվում է մի քանի հիմնական հանգամանքով:

Առաջին. գիտական և կրթական համակարգի կազմակերպումն Իսրայելում տեղի է ունենում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իսրայել պետությունում բնակվում է համաշխարհային հրեության միայն փոքր հատվածը: Սա բերում է աշխատանքների կազմակերպման հատուկ մեթոդաբանության, որն ընդգրկում է արտերկրի հրեաների գիտական, մասնագիտական և կազմակերպչական ռեսուրսները, թույլ է տալիս դրանք ուղղել ազգային շահերի սպասարկմանը: Նման խնդրի առաջ է, մասամբ, կանգնած նաև Հայաստանը, որում նույնպես բնակվում է Հայության միայն մեկ հատվածը, որն առանց Հայության ռեսուրսների մոբիլիզացման բավարար միջոցներ չունի ազգային շահերին առնչվող հարցերի ամբողջական ուսումնասիրության, հիմնախնդիրների լուծման եղանակների մշակման և դրանց կիրառման համար:

Երկրորդ. բուն Իսրայելի և արտասահմանում գործող, սակայն Իսրայելի հետ անմիջական կապ ունեցող որոշ «ուղեղային կենտրոնները» նաև իսրայելական շահերի լոբբիզմի կառույցներ են: Ստորև կանդրադառնանք այս խնդրին, իսկ այստեղ նշենք, որ ԱՄՆ-ում իսրայելամետ որոշումների ընդունման գործում բուն համայնքային և լոբբիստական կառույցների կողքին մեծ աշխատանք են տանում կանոնադրորեն անկախ, սակայն միևնույն ժամանակ Իսրայելի հետ անմիջականորեն կապված ամերիկյան «ուղեղային կենտրոնները»: Երևույթ, ինչը բացակայում է հայ համայնքային կյանքում և որի կիրառումը կարող է բարձրացնել, ասենք, ամերիկահայ կառույցների հայանպաստ գործունեության արդյունավետությունը: Վերջինս այսօր ընդհանուր առմամբ կենտրոնացված է ընտրություններում այս կամ այն հայամետ գործչի թեկնածության պաշտպանության և լոբբիստական ընկերությունների ծառայություններից օգտվելու վրա:

Երրորդ. բուն Իսրայելի տարածաշրջանային և ազգային կյանքում հետազոտական հաստատությունների դերը բավական մեծ է: Հենց հետազոտական կառույցներում են մշակվում Իսրայելի ներքին և արտաքին քաղաքականության հիմնադրույթները: Սա կարևոր խնդիր է՝ անմիջականորեն կապված Հայաստանի և Հայության շահերի հետ, քանի որ Իսրայելի «ուղեղային կենտրոններում» է նաև ձևավորվում Իսրայել պետության քաղաքականությունը.

ա) Երուսաղեմի հնարավոր կիսման հարցում, ինչն անմիջականորեն առնչվելու է տեղի հայ բնակչության շահերի և հայոց ազգային հարստությունների պահպանման խնդրին:

բ) Հարավային Կովկասում, որտեղ Իսրայելն ունի սեփական շահեր, շատ հաճախ հակառակ հայկական շահերի:

Չորրորդ. հայ-իսրայելական հարաբերությունները, որոնք այսօր գտնվում են անբավարար վիճակում և չեն կարող գոհացնել ոչ հայկական, ոչ էլ իսրայելական կողմին, օբյեկտիվորեն և, հավանաբար, մոտ ապագայում կարգավորման փուլ են մտնելու: Այս փուլի ընթացքը, բնույթը և արդյունավետությունը կապված են լինելու նաև այն հանգամանքի հետ, թե որքանով դրանցով հետաքրքրված և ընդգրկված կլինեն իսրայելական և նաև հայկական հետազոտական հաստատությունները: Միևնույն ժամանակ, հայ-իսրայելական երկխոսության հնարավոր ակտիվացումը կարող է բերել ամերիկյան «ուղեղային կենտրոնների» հետ հայաստանյան կապերի պոտենցիալ ակտիվացման, ինչը կարող է դրական լիցք հաղորդել Հայաստանին վերաբերող քննարկումներին և որոշումների ընդունման գործընթացին:

1. Իսրայել պետության «ուղեղային կենտրոնները»

Ժամանակակից Իսրայելում գործում է ավելի քան 200 կազմակերպություն, որոնք զբաղվում են ռազմավարական հետազոտություններով: Դրանց գրեթե կեսը հասարակական կազմակերպություններ են, որոնց մեծ մասը կամ քաղաքականապես բավական անգաժավորված է, կամ էլ բաղկացած է երկու կամ երեք աշխատակիցներից: Մնացած կազմակերպությունները հիմնականում գործում են համալսարաններին կից և գաղափարական տեսանկյունից համահունչ են այդ համալսարանների գաղափարախոսությանը: Այսպես, օրինակ, Թել Ավիվի ազատական համալսարանին կից գործող *Մոշե Դայանի Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի ուսումնասիրության կենտրոնը* հիմնականում լիբերալ աշխարհայացք ունեցող հաստատություն է, իսկ Բար-Իլանի պահպանողական համալսարանի *Բեգին-Սադաթի ռազմավարական հետազոտությունների կենտրոնը* պահպանողական և սիոնիստական գաղափարախոսության վրա հիմնված կառույց է:

Այս օրինաչափությունն ընդհանրական է համալսարաններին կից գործող գրեթե բոլոր կենտրոնների համար և ամենևին արհեստածին չէ: Այս օրինաչափությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ համալսարանական «ուղեղային կենտրոնները» ստեղծվում են հենց համալսարանների կողմից, իսկ դրանցում աշխատող հետազոտողները տվյալ բուհի հաստիքային աշխատողներ են, հիմնականում՝ պրոֆեսորներ: Նրանք, փաստորեն, «ուղեղային կենտրոններ» են բերում իրենց բուհերում իշխող և իրենց պաշտպանած քաղաքական և անգամ կրոնական գաղափարները: Իսրայելական որոշ վերլուծաբանների, օրինակ՝ Մայքլ Վայսի կարծիքով, այս երևույթն ինքնըստինքյան բացասաբար է ազդում թե՛ համալսարանների և թե՛ հետազոտական

կենտրոնների գործունեության վրա. «այն ստեղծում է փակ շրջան, որում գաղափարը մտնում է հետազոտական կենտրոն, ավելի է «գաղափարայնացվում» և վերադառնում է ուսումնական գործընթաց՝ այն դարձնելով կամ հետադիմական, կամ էլ, լավագույն դեպքում, անհետաքրքիր»: Փաստորեն, խոսքը հետազոտական կենտրոնների գաղափարական «պահպանողականության» և ոչդինամիկության մասին է. կենտրոնները պահպանում են այն (մի դեպքում՝ ազատականը, մյուսում՝ պահպանողականը կամ կրոնականը), ինչն արդեն առկա է:

Վայսի գնահատականը թեև բավական հնչեղ է և արտացոլում է համալսարանական «ուղեղային կենտրոնների» գործունեության բնույթը, սակայն, մեր խորին համոզմամբ, պարունակում է որոշակի մեթոդաբանական սխալ: Այն է՝ չի կարելի վերը նշված «փակ շրջանը» կամ «գաղափարացումը» ստորադասել դինամիկությանը: Դժվար թե որևէ մեկը կարողանա միանշանակ ասել, թե որն է համալսարանների կամ ազգային պետության համար ավելի կարևոր՝ «պահպանողականությունը» կրթությունում և հումանիտար մտքի գաղափարայնությունը, թե դրանց դինամիկ և որոշ առումներով անկառավարելի զարգացումն ու ձևափոխումը: Երկու տարբերակներն ունեն դրական և բացասական կողմեր: Սակայն իսրայելական մոդելը, մեր կարծիքով, հիմնված է երկու տարբերակների դրական կողմերի օգտագործման վրա: Համալսարանները, չխրախուսելով ընդհանուր գաղափարական գծից շեղվելը, կրթական գործընթացը դարձնում են պահպանողական: Սակայն բուն իսրայելական համալսարանները գաղափարական տեսանկյունից բացարձակ նման չեն միմյանց. Թել Ավիվի համալսարանն ազատական բուհ է, Բար Իլանինը՝ պահպանողական, Երուսաղեմինը՝ «կենտրոնամետ»: *Նրանցից յուրաքանչյուրը, «պահպանելով» իրենը, պահպանում է իսրայելական կրթության, հասարակական մտքի և որպես արդյունք՝ հասարակության գաղափարական բազմազանությունը, այն համարժեք դարձնում աշխարհին և ժամանակակից քաղաքակրթությանը*:

Այս երևույթը, մեր համոզմամբ, դրական կարելի համարել: Սակայն, միևնույն ժամանակ, պետք է նշել, որ այն, իր հերթին, հնարավորություն չի տալիս իսրայելական համալսարաններին կից գործող «ուղեղային կենտրոններին» հանդես գալ որպես «ազատ մտքի» կենտրոններ, ինչն անհրաժեշտ է միջազգային նշանակության և արտերկրում հեղինակություն վայելող հետազոտություններ իրականացնելու համար:

Այդ պատճառով Իսրայելի տարածքում գործող ամենաազդեցիկ «ուղեղային կենտրոնները», բացառությամբ Երուսաղեմի հրեական համալսարանին կից գործող Լեոնարդ Դևիսի անվան Միջազգային հարաբերությունների ինստիտուտի, որը հիմնականում պատրաստում է դիվանագիտական կադրեր

և սպասարկում Իսրայելի արտաքին գործերի նախարարությանը, ինտեգրված չեն բուհական համակարգին:

Իսրայելի ոչհամալսարանական «ուղեղային կենտրոնների» հիմնական նպատակներն ու գործառույթներն են.

1. Ազգային կառույցներին հետազոտական աշխատանքներով ու մշակումներով ապահովելը, ազգային անվտանգության ռազմական և հետախուզական ոլորտներին հետազոտական աշխատանքներով ապահովելը:
2. Իսրայել-հրեական սփյուռք կապերի ամրապնդումը:
3. Տեղեկատվական դաշտում ակտիվ անուղղակի քարոզչությունը:
4. Արտասահմանյան վերլուծական և հետազոտական կառույցների հետ համագործակցության զարգացումը:
5. Հակասեմիթական դրսևորումների աղբյուրների ուսումնասիրությունը, դրանց նկատմամբ տեղեկատվական, ինչպես նաև գործնական քաղաքականության ոլորտում հակաքայլերի մշակումը, դրանք պետական կառույցներին ներկայացնելը և մասամբ իրականացնելը:

Նշենք, որ իսրայելական ազդեցիկ և մեծ կենտրոնները զբաղվում են ոչ թե վերը նշված բոլոր գործառույթներով միաժամանակ, այլ ամեն մեկն ունի իր աշխատանքների հատուկ ուղղվածությունը: Ստորև անդրադառնանք հիմնական իսրայելական «ուղեղային կենտրոններին» և դրանց գործառույթներին:

Ռազմավարական հետազոտությունների ազգային ինստիտուտ - ՌՀԱԻ (Թել Ավիվ). Իսրայելի խոշորագույն «ուղեղային կենտրոնն» է, որը գործունեության գրեթե 20 տարիների ընթացքում հիմնականում զբաղվել և զբաղվում է Իսրայելի ներքին զարգացման հիմնախնդիրներով: Դրանք ներառում են հասարակական-քաղաքական, սոցիալական, սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական գործընթացները: 2006-ին, երբ ինստիտուտի ղեկավարությունը որոշում ընդունեց լայնացնել հետազոտությունների ուղղվածությունը, ինստիտուտը դարձնելով ամերիկյան տիպի ռազմավարական հետազոտությունների կենտրոն՝ ուսումնասիրության տարբեր ոլորտներ ներառելով, *ՌՀԱԻ-ն* փորձ արեց ակտիվացնել իր համար մինչ այդ երկրորդային նշանակություն ունեցող հետազոտությունները տարածաշրջանային անվտանգության հարցերի ոլորտում: Սակայն փորձը հաջողությամբ չավարտվեց, ինչի արդյունքում արդեն 2008-ին երկար բանակցություններից հետո ինստիտուտն իրեն միացրեց Թել Ավիվի համալսարանին կից գործող *Յաֆֆեի անվան ռազմավարական հետազոտությունների կենտրոնը*, որը մասնագիտանում էր տարածաշրջանային ռազմաքաղաքական հարցերի ուսումնասիրության մեջ՝ հրատարակելով *«Մերձավոր Արևելքի ռազմական հավասարակշռությունը»* հայտնի տարեգիրքը: Արդյունքում՝ այսօր *ՌՀԱԻ-ն* դարձել է խոշոր հետազոտական կա-

ռույց, որը զբաղվում է իսրայելական ազգային կառույցներին հետազոտական աշխատանքներով ու մշակումներով ապահովելով, ազգային անվտանգության ռազմական ոլորտներին առնչվող հետազոտություններով:

Մյուս ազդեցիկ իսրայելական «ուղեղային կենտրոնը» Հերցլիայի միջդիսցիպլինար կենտրոնի *Ահաբեկչության դեմ պայքարի ինստիտուտն (ԱԴՊԻ) է:* Այն հետախուզության և ազգային անվտանգության հարցերի ուսումնասիրությամբ զբաղվող կառույց է, որի աշխատակիցների մեծ մասը Մոսադի նախկին սպաներ են: *ԱԴՊԻ* ներկայիս նախագահն է 1989-1996թթ. Մոսադը ղեկավարած գեներալ Շհաբթաի Շավիթը: Ինստիտուտն իր հետազոտություններով սպասարկում է իսրայելական հետախուզությանը, Իսրայելի ազգային անվտանգության խորհրդին, Քնեսետի Արտաքին գործերի և ազգային անվտանգության հանձնաժողովին և անգամ մասնավոր կառույցներին[1]: Այն բավական ակտիվ գործունեություն է ծավալել նաև արտաքին կապերի ուղղությամբ, համագործակցում է մի շարք հեղինակավոր միջազգային կառույցների և փորձագետների հետ, ակտիվորեն կապված լինելով կառավարության հետ՝ կազմակերպված ձևով իրականացնում է նաև *«public diplomacy»* բնույթի գործառույթներ, ապահովում է Իսրայելի կառավարության կապն արտասահմանյան կենտրոնների և մասնագետների հետ: *ԱԴՊԻ*-ն բավական սերտ կապեր ունի թուրքական հետազոտական կենտրոնների հետ, համագործակցում էր թուրքական Գլխավոր շտաբի հետ ակտիվ կապեր ունեցող «Ասան» կենտրոնի հետ, որը փակվել է 2008թ.:

Ազգային անվտանգության գաղափարական ոլորտի ուսումնասիրությամբ և մշակումներով է զբաղվում մեկ այլ խոշոր հաստատություն՝ *Երուսաղեմի հասարակական հետազոտությունների կենտրոնը*: Այն ֆինանսավորվում է մասնավոր հատվածից, ղեկավարվում է Իսրայելի զինված ուժերի պաշտոնաթող սպաների կողմից, անմիջականորեն կապված է Իսրայելի բանակի Գլխավոր շտաբի նախկին ղեկավար Մոշե Յաալոնի հետ, որը դեռ ակտիվ դեր է խաղում իսրայելական հասարակական-քաղաքական կյանքում և մեծ հեղինակություն ունի բնակչության շրջանում: Ինչպես նշված է կենտրոնի պաշտոնական կայքում, «գաղափարների պատերազմի» ժամանակաշրջանում միայն բանակը չէ, որ պետք է ապահովի Իսրայելի՝ որպես հրեական պետության, գոյության իրավունքը: Հակահրեական գործողություններն ընթանում են ոչ թե ռազմի դաշտում, այլ արտասահմանյան համալսարաններում, լրատվամիջոցներում և ՀԿ-ներում: Հենց այս գործողությունների ուսումնասիրությամբ, կանխարգելման մեխանիզմների մշակումներով է զբաղվում *Երուսաղեմի հասարակական հետազոտությունների կենտրոնը:* Նշենք, որ

[1] Խոսքը տարածաշրջանային ներդրումների և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում գործող բիզնես կառույցներին խորհրդատվական ծառայությունների մատուցման մասին է:

այն սերտ կապեր ունի զինված ուժերի ստորաբաժանումների հետ, նրանց սպասարկում է արդի գործընթացներին նվիրված վերլուծություններով:

Տնտեսական և ֆինանսական ոլորտներում ռազմավարական հետազոտություններով է զբաղվում *Իսրայելի ուսումնասիրության Երուսաղեմի կենտրոնը*, որը ստեղծվել է մի շարք իսրայելական բանկերի և ֆինանսական կազմակերպությունների անմիջական մասնակցությամբ (*Bank Hapoalim, Discount Bank, Bank of Jerusalem, Jerusalem Foundation, Tenram Investments*): Կենտրոնի ուսումնասիրությունների հիմնական ուղղություններն են տնտեսական հիմնարար զարգացումը, սոցիալական համակարգի կայունության ապահովման խնդիրը և «ազգային մրցունակության առավելությունների պահպանումը»: Հաստատությունն ակտիվ գործունեություն է ծավալել Իսրայելում, ֆինանսավորում է տարբեր հետազոտական ծրագրեր համալսարաններում, վերլուծություններով է սպասարկում նաև մի շարք միջազգային ֆինանսական հաստատությունների[1]:

Քաղաքական սիոնիզմի, հրեականության և մասամբ պատմափիլիսոփայական հարցերի ուսումնասիրությամբ են զբաղվում երկու այլ մեծ և պահպանողական շրջաններում ազդեցիկ հաստատություններ՝ *Շալեմի կենտրոնը* և *Քաղաքական հետազոտությունների Արիելի կենտրոնը*: Առաջինն ակտիվ գործունեություն է ծավալել Իսրայելի ներսում (կազմակերպում է բարձր մակարդակի կոնֆերանսներ, հրատարակում է գիտական և վերլուծական նյութեր), երկրորդը արմատական դիրքերից հետազոտում և քննադատում է ԱՄՆ, ինչպես կենտրոնն է նշում, «այսպես կոչված իսրայելամետ» կառույցները՝ մեղադրելով նրանց հակաիսրայելական գործունեության մեջ: Քննադատության թիրախ են հանդիսանում նաև ամերիկյան այն «ուղեղային կենտրոնները», որոնք իսրայելամետ քաղաքականություն են որդեգրել՝ կապված լինելով ամերիկյան հրեական համայնքի և իսրայելական կառույցների հետ:

Սրանք են այն հիմնական իսրայելական «ուղեղային կենտրոնները», որոնք լուրջ ազդեցություն ունեն իսրայելյան գործընթացների վրա: Սակայն պետք է նշել, որ այս ազդեցությունը չի կարող համեմատվել ամերիկյան կամ բրիտանական «ուղեղային կենտրոնների»՝ համապատասխանաբար ամերիկյան և բրիտանական գործերի վրա ունեցած ազդեցության հետ: Այս տեսակետից տեղին է բերել երկու մասնագիտական գնահատական՝ տրված իսրայելական «ուղեղային կենտրոններին» իսրայելցի մասնագետների կողմից:

[1] Կենտրոնը ժամանակին զբաղվել է Երուսաղեմի՝ հրեական և արաբական մասերի կիսման հարցով, ուսումնասիրել նման հեռանկարի հնարավոր ազդեցությունը քաղաքի ապագայի վրա: Համաձայն հետազոտության, հայկական թաղամասի՝ արաբական մասում հայտնվելու կամ դրա արաբական և հրեական մասերի միջև արհեստական կիսման դեպքում թաղամասն ամբողջությամբ և հաշված տարիների ընթացքում կհայաթափվի:

Եֆրաիմ Ինբար, Բեգին-Սադաթի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տնօրեն. *«Դժվար թե երբևէ լինենք այնպես հաջողակ և ազդեցիկ, ինչպես ամերիկացիներն են: Մենք չունենք American Enterprise Institute. այն պարզապես չկա: Միգուցե «Շալեմն» ամենամոտն է նրան, սակայն մեկ-մեկ զարմանում ես, թե ինչքան է այն հեռու իսրայելական իրականությունից»*[1]:

Բարի Ռուբին, Հերցլիայի միջդիսցիպլինար կենտրոն. «*Այնպես չէ, որ Լիքուդը կամ Աշխատավորական կուսակցությունը գա հետազոտական կենտրոն և ասի. «Տվեք մեզ խորհուրդ»: Քաղաքական կուսակցություններն «ուղեղային կենտրոնների» հետ չեն խորհրդակցում, սակայն քաղաքացիական ծառայողներն ու պետական այրերը կարող են խորհրդակցել: Մեզ մոտ բրիտանական մոդելի, որտեղ Պահպանողական և Լեյբորիստական կուսակցություններն ունեն իրենց սեփական «ուղեղային կենտրոնները», հակառակ մոդելն է*»:

Այս երկու գնահատականները կարևոր փաստ են արձանագրում. իսրայելական «ուղեղային կենտրոններն» ապակուսակցական են և փորձում են ներքաղաքական պայքարում ակտիվ դերակատարում չունենալ: Դրանք միայն սպասարկում են պետական կառույցներին, անկախ այն հանգամանքից, թե որ կուսակցության կողմից են կոնկրետ պահին սպասարկում: Այս հանգամանքը թյուր տպավորություն է ստեղծում, թե իսրայելական «ուղեղային կենտրոններն» այնքան էլ լուրջ չեն, ինչը պայմանավորված է նրանով, որ քաղաքական կուսակցություններին չսպասարկելով՝ այս կենտրոնները պարզապես հաճախ դուրս են մնում տեղեկատվական դաշտից, որտեղ երևալու հաճախականությունից է մեծ մասամբ կախված, թե հասարակությունն ինչ գնահատական կտա այս կամ այն հաստատության կամ անհատի իրական ազդեցության մակարդակին:

Այս հանգամանքն իսրայելական «ուղեղային կենտրոնները» լրջորեն տարբերում է ամերիկյան նմանատիպ հաստատություններից, որոնք ուղղակի կամ անուղղակի սպասարկում են ամերիկյան երկու հիմնական կուսակցություններին, *կամ էլ այն շրջանակներին, որոնք ցանկանում են ազդել այդ կուսակցությունների և, հետևաբար, ներքաղաքական գործընթացների վրա*: Այս վերջին հանգամանքն է, ըստ մեզ, բերել նրան, որ իսրայելական իշխանությունները մեծ պատ են կառուցել «ուղեղային կենտրոնների» և քաղաքական կուսակցությունների միջև, որով զրկել են «ուղեղային կենտրոնների» իսրայելցի և արտասահմանցի ֆինանսավորողներին քաղաքական կուսակցությունների, այսինքն՝ ազգային անվտանգության կարևորագույն մաս հանդիսացող ներքաղաքական գործընթացների վրա ազդելու հնարավորությունից՝ դրանով իսկ ապահովելով սեփական սուվերենությունը:

[1] *Hannah Elka Meyers,* Does Israel Need Think Tanks? - *Middle East Quarterly* - Winter 2009, p. 41.

2. Հրեական «ուղեղային կենտրոնները»

Որ «ուղեղային կենտրոնները» կարող են ազդեցություն ունենալ ներքաղաքական գործընթացների վրա, Իսրայելի համար ակնհայտ է: Այս սկզբունքը հաշվի առնելով են գործում ամերիկյան «հրեամետ» և «իսրայելամետ» կառույցներն ու խմբերը: Դրանց գործունեության արդյունքում ստեղծվել է «*Իսրայելի շահեր-ամերիկյան ուղեղային կենտրոններ*» ակտիվ կապերի համակարգ, ինչն ապահովում է թե՛ Իսրայելի համար ժամանակակից և մասնագիտական բարձրորակ հետազոտությունների իրականացում ամերիկյան «ուղեղային կենտրոնների» կողմից, թե՛ աջակցություն Իսրայելին ձեռնտու քաղաքական և տնտեսական որոշումների և տեսակետների առաջմղմանը ամերիկյան գործադիր ու օրենսդիր իշխանության օղակներում, լրատվամիջոցներում: Իսրայելի և ԱՄՆ հրեական համայնքի հետ կապ ունեցող ամերիկյան «ուղեղային կենտրոնները» խոշոր լոբբիստական կառույցներ են, առանց որոնց Իսրայելն ամերիկյան քաղաքական և հասարակական դաշտում չէր ունենա այն աջակցությունը, որն այն ունի այսօր:

Իսրայելի հետ անմիջականորեն կապ ունեցող ամենաակտիվ ամերիկյան «ուղեղային կենտրոններն» են.

- Ամերիկյան գործարարության ինստիտուտը – *American Enterprise Institute*
- Հադսոնի ինստիտուտը – *Hudson Institute*
- Անվտանգության քաղաքականության կենտրոնը - *Center for Security Policy*
- Ազգային անվտանգության գործերի հրեական ինստիտուտը - *Jewish Institute for National Security Affairs*
- Մերձավոր Արևելքի ֆորումը – *Middle East Forum*
- Ժողովրդավարությունների պաշտպանության հիմնադրամը - *The Foundation for Defense of Democracies*
- Իսրայելական շահերի պաշտպանության տեսանկյունից ամենակարևոր դեր խաղացող Վաշինգտոնի Մերձավոր Արևելքի քաղաքականության ինստիտուտը - *Washington Institute for Near East Policy*:

Վերջինս Մերձավոր Արևելքի հարցերով զբաղվող ամերիկյան ամենահեղինակավոր կազմակերպությունն է, որի փորձագետների վերլուծություններն ու հարցազրույցներն ամենաշատն են հայտնվում ամերիկյան լրատվամիջոցներում: Միևնույն ժամանակ, ըստ տեսակարար կշռի, ինստիտուտի փորձագետներն ամենից հաճախ են հրավիրվում ամերիկյան Կոնգրես և Սենատ՝ Մերձավոր Արևելքի հարցերին նվիրված լսումներին մասնակցելու:

Մերձավոր Արևելքի քաղաքականության ինստիտուտը, որն ստեղծվել է 1985թ. հրեամետ կոռույցների կողմից, ուղղակիորեն կառավարվել և կառավարվում է ԱՄՆ հրեական համայնքի ներկայացուցիչների կողմից: Ինստիտուտի հիմնադիր տնօրենն է Մարտին Ինդիկը, որը մինչև ինստիտուտի հիմնադրումը ղեկավարել է լոբբիստական գործունեությամբ զբաղվող Ամերիկայի Հրեական հարցերով կոմիտեն (*American Israel Public Affairs Committee*): 1985-ից ինստիտուտի ազդեցությունը Միացյալ Նահանգներում միայն աճել է: Ինչպես հեղինակավոր *Le Monde diplomatique-ի* համարներից մեկում նշում է Ջոլ Բեյնինը, ինստիտուտի ազդեցությունը կտրուկ աճեց և դարձավ որոշիչ արդեն իսկ Բ.Քլինթոնի վարչակազմի օրոք[1]: Հրեամետ կազմակերպության ազդեցության բարձրակետը դարձավ Մարտին Ինդիկի նշանակումը Իսրայելում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան: Փաստորեն, *այս նշանակումով ամերիկյան շահերի ներկայացուցիչն Իսրայելում դարձավ Իսրայելի շահերը ԱՄՆ-ում ներկայացնող կառույցի ղեկավարը*:

Մերձավոր Արևելքի քաղաքականության ինստիտուտը փոխնախագահ Չեյնիի հետ կապերի շնորհիվ պահպանեց և ամրապնդեց իր դերը Բուշ-կրտսերի վարչակազմում, իսկ այսօր ինստիտուտի նախկին վարչության պետ Դ.Ռոսը Պարսից ծոցի հարցերով ԱՄՆ պետքարտուղարի հատուկ ներկայացուցիչն է: Ինստիտուտի մեկ այլ աշխատակից՝ Մ.Էյզենշտատը, ամերիկյան Կոնգրեսի խորհրդականն է Մերձավոր Արևելքի հարցերով, կազմակերպում է տարածաշրջանին առնչվող բոլոր լսումները, ընտրում համապատասխան փորձագետների և կազմում «քաղաքականության առաջարկություններ»:

Մերձավոր Արևելքի քաղաքականության ինստիտուտին մանրամասն անդրադառնալը պատահական չէ: Այս կառույցի օրինակով մենք կարող են առանց վերապահության ասել, որ իսրայելական «ուղեղային կենտրոնների» մաս են կազմում Իսրայելի տարածքից դուրս գտնվող ազդեցիկ մի շարք կենտրոններ, որոնք կարողանում են ակտիվ մասնակցություն ունենալ միջազգային հարաբերություններում ու քաղաքականությունում՝ ապահովելով իսրայելական շահերը, ինչը բնորոշ է միայն Իսրայելին: Նույն ԱՄՆ տարածքում գործող հայկական, հունական, իտալական համայնքային և ազգային կառույցներն իրենց լոբբիստական գործունեության մեջ ամբողջովին անտեսում են վերլուծական և հետազոտական կենտրոնների մեծ պոտենցիալն ու ռեսուրսները, հիմնականում սահմանափակվում են լոբբիստական կազմակերպությունների հետ ակտիվ աշխատանքով, ինչն արդյունք է այն մեծ գումարների, որոնք ծախսվում են այդ գործունեության վրա: Սա սիմետրիկ գործողությունների

[1] *Le Monde diplomatique, July 2003* - TEL AVIV'S INFLUENCE ON AMERICAN INSTITUTIONS

քաղաքականություն է, որը նմանատիպ սիմետրիկ քայլերով (*թուրքական և ադրբեջանական կառույցները նույնպես մեծ գումարներ են սկսել ծախսել սեփական շահերի լոբբիզմի վրա*) վնասազերծվում են: Առանց «ուղեղային կենտրոնների» հետ ակտիվ համագործակցության, սեփական կենտրոնների, գիտահետազոտական և տեղեկատվական ոլորտում սեփական ռեսուրսների զարգացման այսօր հնարավոր չէ լուրջ ազդեցություն ունենալ ոչ միայն ԱՄՆ-ում, այլ նաև ողջ աշխարհում:

Նշենք, որ հաշվի առնելով մինչև վերջերս տևած Թուրքիա-Իսրայել համագործակցության բարձր մակարդակը՝ ինստիտուտն իրական քաղաքականության ոլորտում աջակցել է թուրքական շահերի պաշտպանությանն ամերիկյան քաղաքական դաշտում, կազմակերպել իսրայելա-թուրքական բազմաթիվ միջոցառումներ և հանդես եկել թուրք-ամերիկյան հարաբերությունները վնասող որոշումների ընդունման դեմ: Թե ինչպիսին կլինի ինստիտուտի՝ մեզ հետ անմիջականորեն առնչվող քաղաքականությունն ապագայում, կախված կլինի թուրք-իսրայելական հետագա ընթացքից և հայ-իսրայելական հարաբերություններից:

Ամփոփելով թեման՝ վերադառնանք մեր համառոտ հետազոտության սկզբում նշված թեզերին և նշենք, որ.

1. Իսրայելի և հրեության փորձը ոչ միայն հետաքրքիր, այլև մասամբ կիրառական պետք է լինի Հայաստանի և Հայության համար, քանի որ մեր դիրքն ու խնդիրներն աշխարհում շատ ընդհանրություններ ունեն Իսրայելի և հրեության խնդիրների հետ:
2. Հայաստանի և Հայության շահերի պաշտպանության համար անհրաժեշտ է ակտիվացնել գիտահետազոտական կապերն իսրայելական և հրեական հետազոտական ու վերլուծական կենտրոնների հետ: Դրանք կարող են կիրառական նշանակություն ունենալ, դրական ազդել Իսրայելի հայության կյանքի վրա, Երուսաղեմի հնարավոր կիսման դեպքում հաշվի առնել Հայոց շահերը և նպաստել Հայաստան-Իսրայել հարաբերությունների զարգացմանը:

Իսկ այդ հարաբերությունները, մեր համոզմամբ, ունեն զարգացման մեծ պոտենցիալ:

Նոյեմբեր, 2009թ.

«МОЗГОВЫЕ ЦЕНТРЫ» ИЗРАИЛЯ: СОЧЕТАНИЕ НАЦИОНАЛЬНЫХ И СЕТЕВЫХ СТРУКТУР

Севак Саруханян

Резюме

Исследование израильских центров, занимающихся стратегическими исследованиями, показывает, что они основаны на сочетании интеллектуальных ресурсов Израиля и еврейских общин в мире. Такое сочетание позволяет, пожалуй, наилучшим образом интегрировать научно-исследовательский потенциал двух частей Еврейства и создать систему «мозговых центров», адекватных современному миру.

С другой стороны, связанные с еврейскими общинами зарубежные «мозговые центры» принимают активное участие в лоббировании интересов Израиля не только в экспертном сообществе и информационном пространстве разных стран, но и в политических процессах.

Характер и структура организации исследовательской работы в израильских и связанных с еврейскими общинами «мозговых центрах» показывает их актуальность также для Армении и Армянства, которые во многих смыслах существуют в тех же измерениях, что и государство Израиль и мировое Еврейство.

ՍԵԿՈՒԼՅԱՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Վարդան Ասցատրյան[*]

Հասարակական կառույցի սեկուլյար-հումանիստական մոդելը տևական ժամանակ համառորեն ներկայացվում էր որպես բոլոր այլ (տարբեր կրոնական համակարգերին հենվող) մոդելները համակարգելու ընդունակ ունիվերսալ մոդել: Միայն XX դարի վերջին՝ մոդեռնի գործընթացի ավարտին, հասարակական ուշադրության ոլորտում կրոնական խնդրի վերադարձով պայմանավորված, ապաաշխարհիկացման (դեսեկուլյարացման) գործընթացն առիթ և պայման ստեղծեց վերստին անդրադառնալ երևույթի արմատներին՝ կասկածի տակ դնելով այդ ունիվերսալությունը:

1. Գաղափարի ծագումը

Գաղափարն այն մասին, որ կրոնները տեղ չունեն հասարակական տիրույթում, Արևմուտքում գործնական տարածում է գտել XVII դարում: 1648 թվականից՝ Ռեֆորմացիայի արդյունքում սկիզբ առած Վեստֆալյան խաղաղության բանակցությունների ժամանակներից, գործածության մեջ դրված «սեկուլյարիզացիա» (աշխարհիկացում) տերմինը նախապես կիրառվել է Հռոմեական կաթոլիկ եկեղեցուն պատկանող մի շարք կալվածքների օտարման գործընթացի առումով: XIX դարում այդ հասկացությունը ձեռք է բերում առավել լայն նշանակություն, այն է՝ մշակույթի ազատագրում կրոնի, առաջին հերթին՝ քրիստոնեական կրոնի ազդեցությունից:

Այդ շրջանում Եվրոպան ցնցվում էր կրոնական պատերազմներից, իսկ երերուն խաղաղությունը ցանկացած պահի սպառնում էր ավարտվել հերթական արյունահեղությամբ: Առաջ են քաշվում հասարակական տիրույթի գործունեությանը վերաբերող այնպիսի կանոններ, որոնք ոչ մի կերպ չէին առնչվելու դավանանքային տարբերություններին կամ առնվազն չէին գրգռելու հակամարտող կողմերին: Աշխարհիկության (սեկուլյարիզմի) սկզբունքը, այն է՝ իշխանության գործերին կրոնին մոտ չթողնելը, դարձավ այն որոնելի լուծումը, որից կառչեցին այն ժամանակվա «առաջադեմ» մտածողները: Պետությունը, այսինքն՝ աշխարհիկ իշխանությունը, պետք է լինի հասարակության ընդհանուր բարօրությանն առնչվող խնդիրներում գերագույն իշխանությունը կրող

[*] ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության պետ:

միակ մարմինը: Կրոնի հանդուրժողականության մասին աշխատություններում Ջոն Լոքը մանրակրկիտ նկարագրում է այն սահմանները, որոնցում կրոններին թույլատրվում է գործել, իսկ այն կրոնական կազմակերպությունը, որը չի ճանաչում այդ սահմանները, հայտարարվում է օրենքից դուրս:

Պատահական չէ, որ նման աշխարհայացքի շրջանակներում առաջացավ ուրույն մոտեցում կրոն հասկացությանը: Ինչպես և ներկայիս արևմտյան ընկալմամբ կրոնը ինչ-որ մասնավոր՝ շատ անհատական մի բան է (այլ ոչ թե համազգային, համահասարակական), որը գտնվում է մարդկային սրտի խորքում: Այստեղից բխում են մի ինչ-որ «ճշմարիտ» կրոնի մասին խորհրդածությունները՝ այն հակադրելով «կրոնական մոլեռանդությանը և խավարամտությանը»: Սակայն համառորեն անտեսվում է մի շատ կարևոր հանգամանք. ո՛չ կաթոլիկությունը, ո՛չ էլ բողոքականությունն իրենց զանազան տարատեսակություններում Մոդեռնի ժամանակաշրջանի սկզբում «կրոններ» չեն եղել, այլ՝ ամբողջական աշխարհայացքներ, գործողության համակարգեր, հասարակական ապրելակերպեր, որոնց համար քաղաքական և հանրային բաղկացուցիչ տարրերը գրեթե հիմնական էին:

2. «Կրոն» բառի ի հայտ գալը և թե ինչպես կաթոլիկությունը դարձավ կրոն

«Կրոն»[1] *(religio)* բառն ընդհուպ մինչև «Մոդեռնիզացիան» Արևմուտքում գրեթե չի գործածվել: Տարբեր հակամարտող ավանդույթներն անվանվում էին «հավատ» *(fides)* կամ «օրենք»/«կարգ» *(lex):* Աշխարհիկությունը գործի դնելու համար նախ անհրաժեշտ էր «ավանդական համակարգերը» վերածել «կրոնների»՝ սահմանափակ կարգավիճակ ու գործառույթ ունեցող կառույցների: Եվ քանի որ միանգամից դա չհաջողվեց անել, ապա սկզբում խնդիրը լուծվեց ուժային ճանապարհով, իսկ հետո սկսվեց քրիստոնեության ներքին ձևափոխման գործընթացը՝ Ֆրիդրիխ Շլեյերմախերի «կրոնների մասին խոսքերի» ոգով (ընդունելով կրոնի զուտ բարոյական, էսթետիկական՝ զեղագիտական նշանակությունը):

Այստեղ հարկ է անդրադարձ կատարել պատմությանը. վերադառնալ XV-XVII դարեր, երբ սաղմնավորվում էր այն, ինչն այսօր կոչում են Մոդեռն[2] *(modernity):* Հենց այդ ժամանակներում են դրվել արդիական մի շարք հասկացություն-

[1] Միջնադարյան Հայաստանում հայ պատմիչները (Ագաթանգեղոս, Կորյուն, Եղնիկ Կողբացի, Փավստոս Բուզանդ, Մովսես Կաղանկատվացի և այլք) լայնորեն օգտագործել են «կրօն», «կրօնաւոր», «կրօնազգեաց», «կրօնական», «կրօնաուսոյց» և այլ բառերն ու հասկացությունները:

[2] «Մոդեռն» բառն օգտագործվում է պատմական-քաղաքակրթական այն ժամանակաշրջանի համար, որը սկիզբ առավ Ռեֆորմացիայով: Որոշ դեպքերում այդ բառը նեղ իմաստով օգտագործում են նաև 1870-1910-ականների ժամանակահատվածի, իսկ ավելի նեղ իմաստով՝ որպես Նորագույն շրջան՝ 1910-1960-ականների համար:

ների հիմքերը, որոնք որոշում են այսօրվա ընկալումը, այդ թվում նաև կրոնի՝ որպես լոկ մարդու անձնական գործը հանդիսացող համոզմունքների, մի հավաքականություն, որը գոյություն ունի անկախ պետության լոյալությունից:

Միջին դարերում, հիրավի, չի եղել կրոն երևույթը ժամանակակից ընկալմամբ: Եղել է *«religio»* հասկացությունը, սակայն այն ծայրահեղ հազվադեպ էր հանդիպում Արևմուտքում: Այդ հասկացության նշանակությունն այն օրերին լիովին տարբերվել է այսօրվանից: Այդպես կոչել են վանական միաբանության անդամներին՝ ի տարբերություն «աշխարհիկ» հոգևորականների (մեկ այլ հետազոտող համարում է, որ միջնադարյան «կրոն» հասկացությունը սկզբունքորեն համընկել է ժամանակակից նշանակության հետ) [1, pp. 351-369]: Իսկ երբ «կրոն» հասկացությունը մուտք է գործում անգլերենի մեջ, այն պահպանում է այդ նշանակությունը՝ կիրարկվելով վանական միաբանության կյանքի առնչությամբ: Այսպես, 1400թ. «Անգլիայի կրոններ» արտահայտությունը նշանակել է տարբեր անգլիական միաբանություններ [2, p. 403]: Թովմա Աքվինացին (1225-1274) «կրոն» հասկացությունը հիշատակում է միայն մեկ անգամ, որտեղ այն նշանակել է հատուկ առաքինություն, որը կապված է Աստծուն արժանավայել հարգանք մատուցելու հետ: Ու.Կավանոն, անդրադառնալով այս հիշատակմանը, եզրակացնում է, որ համաձայն Թ.Աքվինացու, *«religio»-ն* առաքինություններից մեկն է, որը ենթադրում է քրիստոնեական եկեղեցու, ինչպես համայնքային, այնպես էլ անհատական պրակտիկաների հավաքականությունը»: Այստեղ կարևորն այն է, որ միջնադարում «կրոնը» եղել է ամբողջական կաթոլիկ ավանդության լոկ մի փոքր տարրը: Կաթոլիկությունը ներառում էր «կրոնը»՝ որպես իր կարևոր, բայց ոչ ամենանշանակալի մասը:

Նույնը կարելի է ասել նաև «աշխարհիկի» *(светский)* մասին, որի նշանակությունը նմանապես տարբերվում էր ժամանակակից ընկալումից: Հնում *«աշխարհիկ»* ասվածը որևէ կերպ չի առնչվել կրոնի հետ՝ դրանք միանգամայն տարբեր հարթությունների էին պատկանում: Կրոնականի ու ոչ կրոնականի ներկայումս առկա բաժանման փոխարեն հնում «գոյություն է ունեցել քրիստոնեական աշխարհի միասնական հանրային տիրույթ՝ իր երկակի չափումներով՝ *sacredotium* (լատ. քահանայություն) և *regnum* (լատ. թագավորություն): Իսկ *«saeculum»-ը* միջին դարերում եղել է «ոչ թե տիրույթ, ոչ թե ոլորտ, այլ անկման ու վախճանի միջև ընկած ժամանակ» [3, p. 9]: Այսինքն՝ մեր ժամանակներում հակադրվող *«religio»-ն* և *«saeculum»*-ը միջին դարերում միասնական քրիստոնեական միջավայրում իրենց համեստ տեղն ունեցող ոչ ինքնուրույն երևույթներ էին:

Հետևաբար, ժամանակակից աշխարհը չի կարող համարվել միջնադարյան կաթոլիկ ավանդությունից բնական ճանապարհով բխած երևույթ: Տեղի է ունեցել հասկացությունների հսկայածավալ վերիմաստավորում և հանրային

տիրույթի սահմանազատում: «Կրոն» տերմինի վերիմաստավորման գործում մեծ դեր են ունեցել այնպիսի մտածողներ, ինչպիսիք են Ն.Մաքիավելին, Հ.Գրոցիան, Թ.Հոբսը, Ջ.Լոքը, Ժ.Բոդենը և այլք: Ուշագրավ է, որ նրանցից և ոչ մեկն աստվածաբան չի եղել, ընդհանրապես նրանց շատ քիչ են հետաքրքրել տարբեր կրոնական ավանդությունների վարդապետական ու բովանդակային կողմերը: Նրանք շատ ավելի կարևոր էին համարում քաղաքացիական խաղաղության, կարգի, քաղաքական իշխանության և այլ աշխարհիկ հարցերը: Այս աշխարհիկները, աստվածաբաններից յուրացնելով իմաստային աշխարհների կերտման նախաձեռնությունը, ըստ էության ստեղծեցին իրենց սեփական ունիվերսումը: Հենց այս նոր աշխարհում էլ նրանք սինթեզեցին «կրոն» կոչված ֆենոմենն արդի ընկալմամբ: Այսինքն՝ ժամանակակից արևմտյան հասարակություններում «կրոն» հասկացությունը ստեղծվել և կիրառվում է աշխարհիկ «քաղաքականության» և քաղաքական աստվածաբանության շրջանակներում՝ ելնելով քաղաքականության ու քաղաքական հասարակության դիրքերից ու շահերից» [4, p. 48]:

Բնականաբար, այս գործընթացում քիչ դեր չունի Ռեֆորմացիան: Այն ոչ միայն անհատապաշտական մոտիվներ ներմուծեց քրիստոնեության մեջ, այլև մղեց դեպի միջդավանական պատերազմների սկզբնավորումը՝ նպատակ հետապնդելով միասնական հասարակության շրջանակներում աշխարհի մասին տարբեր պատկերացումներ ունեցող խմբերի հավատքի հանդուրժողականության ու համագոյության օրհասական խնդիրների լուծումը: Այնուամենայիվ, հենց Մոդեռնի (և ուշ միջնադարի) փիլիսոփաներին, փաստորեն, կարելի է համարել Մոդեռնի իսկական ճարտարապետներ: Հավատքի հանդուրժողականության մասին նրանց աշխատություններին ծանոթանալիս մեր առջև կանգնում են ոչ անկողմնակալ դիտորդները, որոնք հետապնդում են միայն մի նպատակ՝ վերջ դնել պատերազմին (սա Մոդեռնի ակունքների մասին դասական առասպելն է), մարդիկ, որոնք հստակ պատկերացում ունեն խաղաղության մասին, որոնց համար կրոնական պատերազմները ևս մեկ առիթ են ապացուցելու համար խաղաղության իրենց տեսիլի գերակայությունը և դատապարտելու կրոնական բարբարոսությունը:

Աշխարհի նոր տեսիլի հիմնական ակտը «աշխարհիկի» ստեղծումն է՝ որպես Աստծո իշխանության շրջանակից դուրս բերված մի առանձնահատուկ տիրույթ: Ընդ որում, այդ տիրույթը «գոյություն ունի անկախ կրոնից ու կրոնական հարաբերություններից» (մի բան, որը դուրս էր այն ժամանակվա բոլոր պատկերացումներից): Ի հայտ է գալիս այսպես կոչված *զուտ կրոնական կրոն*, որը պարտադիր կապ չունի այն բանի հետ, ինչը կրոնական չէ» [5]: Այս աշխարհիկ աստվածաբանները, ղեկավարվելով աշխարհի կառուցվածքի մասին իրենց պատկերացումներով, կամայական սահմաններ դրեցին, որոնց

մի կողմում գործում են իրենց հայտնի օրենքները (բնության, քաղաքականության, մարդկային բնության), իսկ մյուսում՝ աստվածային, հոգևոր, եկեղեցական օրենքները: Արհեստականորեն ձևավորած այս վերջին ոլորտն էլ կոչեցին «կրոն»: Ինչպես Ա.Մոլնարն է նշում. «Կրոն» հասկացությունը աստվածային բոլոր հարցերը վերցրեց կղերականներից և տվեց աշխարհականներին» [4, p. 59]: Աշխարհիկ աստվածաբաններն իրենք որոշեցին, թե որտեղ են վերջանում աշխարհում աստվածային անմիջական միջամտության սահմանները, և ստեղծված գետտոն անվանեցին «կրոն»:

Ու.Կավանոն առանձնացնում է երկու հիմնական փոփոխություն, որոնք կրել է «կրոն» հասկացությունը՝ միջնադարի համեմատ: Նախ, կրոնը դառնում է ունիվերսալ համամարդկային իմպուլս, «աստվածավախության բազմազան ձևերը և ամենատարբեր արարողությունները…, որոնք մեկ ճշմարիտ *«religio»-ի* ավելի կամ պակաս անկեղծ (կամ կեղծ) անդրադարձերն են՝ արմատավորված մարդկային սրտում» [2, p. 404]: Երկրորդ, «կրոնը առաքինություններից վերածվում է դատողությունների հավաքականության» [2, p. 404]: Այդպիսի կրոնը շատ հարմար է դառնում սաղմնավորվող ժամանակակից պետության համար՝ որպես բացարձակ սուվերենի, որը, ըստ էության, փոխարինում է եկեղեցուն: Այդպիսի պետության մեջ «խաղաղ քաղաքական հասարակության դիտանկյունից «կրոնը» համարվում է օգտակար տարր: Այսպիսի պատկերացմամբ, եթե կրոնը մի ինչ-որ վերացական համամարդկային զգացմունք է կամ աշխարհայացք, որը դավանանքային դոգմաների մի ժողովածու է, ապա կարելի է կաթոլիկությունը կրոն հռչակել (շատերից մեկը), գլխավոր քաղաքական մրցակցին զրկել այդ պղտոր, բայց խստորեն սահմանափակված ոլորտից, բացի ինչ-որ այլ բան վերահսկելու իրավունքից: Բացի այդ, կրոնը կատարում է հանրօգուտ մի գործառույթ՝ այն հանդիսանում է խղճի անալոգ, որով կարգավորվում է ամենօրյա կյանքում մարդու վարքը: Այսինքն, եթե պետությունը վերահսկում է իր հպատակներին արտաքինից, ապա կրոնը դա պետք է անի ներսից: Եվ վերջապես, եթե «կրոնը» բացարձակապես մարդու անհատական համոզմունքների գործն է, եթե այն չի վերաբերվում ոչ մի հասարակայնորեն կարևոր ոլորտի, ապա այստեղ այլևս հակամարտության խնդիր չի ծագի: Յուրաքանչյուրը կարող է հավատալ ցանկացած բանի, պայմանով, որ այդ հավատը չխանգարի պետությանն իրագործել իր ողջ իշխանությունը: Սա նշանակում է, որ «կրոնը» սկսում է օգնել խաղաղության գործին:

Այսպիսով, կրոնը դարձավ բոլոր կրոնական ավանդությունների գետտո: Եթե նախկինում *«religio»-ն* կաթոլիկության մի բաղկացուցիչ մասն էր, ապա այժմ կաթոլիկությունը մղվեց այդ նեղ շրջանակը:

Հաղթելով կաթոլիկությանը, ավելի ստույգ՝ ուժով այն վերածելով «կրոնի», Մոդեռնը այնքան ամրապնդվեց իր բնական լինելու զգացումի մեջ, որ իր

«ճարտարապետների» ստեղծած հասկացությունները («կրոն» և «աշխարհիկություն») կտրվեցին իրենց ծագման պատմական համատեքստից և վերածվեցին «գիտական» ու «անկողմնակալ» վերլուծության ունիվերսալ կատեգորիաների: Այդուհետ Մոդեռնը կրոնների վերածեց նաև իսլամական, հինդուիստական, բուդդիստական և այլ կենդանի ու մեռած ավանդությունները: Հոգևոր հարցերի նկատմամբ անտարբեր մարդկանց կողմից ստեղծված կատեգորիան («կրոնը») դարձավ առօրյա կյանքում կիրարկվող սովորական տերմին:

Մոդեռնի աշխարհի կենսունակության համար ոչ պակաս կարևոր է նաև «աշխարհիկ» կատեգորիան: «Աշխարհիկության» խնդիրը սերտորեն կապված է սեկուլյարացման (*secular,* ծագել է լատ. *sæculāris*, f. *sæculum*) հետ, որը ծնունդ է տալիս ու ամրապնդում այդ աշխարհիկությանը: Այս երևույթները (սեկուլյարացումը և աշխարհիկությունը) պարզաբանվում են սոցիոլոգ Մաքս Վեբերի ներմուծած աշխարհի «կախարդազերծման» *(расколдование)* թեզի միջոցով, որը լիարժեքորեն մշակվեց XX դարի երկրորդ կեսի սեկուլյարացման տեսություններում: Բերգերը սեկուլյարացումը սահմանում է որպես «մի գործընթաց, որի ընթացքում հասարակության ու մշակույթի ոլորտները դուրս են բերվում կրոնական ինստիտուտների վերահսկողությունից: Համաձայն Բերգերի՝ կրոնը աշխարհը ծածկող և նրան ջերմություն ու իմաստ հաղորդող «սրբազան վարագույր է», իսկ սեկուլյարացումն այդ վարագույրի վերացումն է: Հազարավոր տարիներ աշխարհը ննջում էր կրոնական պատկերացումների ծածկույթի ներքո, մինչև որ մի օր, վերջապես, այդ ծածկույթը պոկվեց, և մարդը տեսավ աշխարհը (և իրեն այդ աշխարհում) այնպիսին, ինչպիսին է ինքն իրականում: Տնտեսությունը, քաղաքականությունը, մշակույթը, կրոնը և այլն նա տեսավ իրենց անթաքույց մերկության մեջ: Այսպիսով, սեկուլյարացումը նեգատիվ երևույթ է, քանի որ այն անփոփոխ աշխարհից հեռացնում է կրոնականը և դրանով «կախարդազերծում» է այն: Այս թեզը մինչև վերջերս գերիշխում էր հասարակական գիտություններում՝ սահմանելով ուսումնասիրությունների հիմնական ուղղությունն ու մեթոդաբանությունը: Սկիզբ առնելով և տեսական նշանակություն ստանալով աշխարհի մի հատվածում (Եվրոպա)՝ իր ձևավորման կոնկրետ միջավայրում, այն վերածվեց ունիվերսալ տեսական հասկացության, որի միջոցով նախատեսվում էր ճանաչել բոլոր մնացյալ մշակույթները, որոնք դեռ նոր պետք է անցնեին «կախարդազերծման» գործընթացը: Տիրապետում էր միևնույն թեզը. «նախ Եվրոպայում, ապա նաև այլ վայրերում»: Այսպիսով, մի կողմից գիտնականները մերկացնում են ոչ արևմտյան մշակույթների պատրանքներն ու մոլորությունները՝ դրանով նպաստելով «կախարդազերծմանը», սակայն մյուս կողմից նրանք մնում են իրենց պարզամիտ առասպելների ու մոլորությունների գերին: Աշխարհի «կախարդազերծումը» վերածվում է Եվրոպայի «կախարդման»: Վերջինիս պատմությունը ձեռք է

բերում մի սրբազան կարգավիճակ, որը դուրս է մնում գիտական վերլուծությունից՝ վերածվելով սրբացված իդեալի, որին կարելի է միայն ձգտել, բայց ոչ երբեք կասկածի տակ դնել:

3. Աշխարհիկության գաղափարի հետագա զարգացումը

Գոյություն ուներ աշխարհիկության սկզբունքի և դրա հիմքում ընկած աշխարհայացքի հաստատման առնվազն երկու հնարավոր ռազմավարություն: Առաջին ռազմավարությունը կրոնական ընդհանուր համաձայնության գալու և դրա հիման վրա քաղաքացիական խաղաղություն հաստատելու փորձերն էին: Բնականաբար, իրականում հաստատվում էր ոչ թե ընդհանուր ինչ-որ բան, այլ հենց «նոր աշխարհիկ հայեցակարգը»՝ ձևավորված տարբեր կրոններին արվող սիրաշահությամբ: Երկրորդ ռազմավարությունը ենթադրում էր բացառապես բանականության վրա հիմնված և յուրաքանչյուր ազատ անհատի համար համակողմանիորեն մատչելի նոր «առաջադիմական հայեցակարգի» բացահայտ ընդունում և պարտադրում (աշխարհիկություն):

1. Ընդհանուր համաձայնության ռազմավարությունը կիրառվում էր այն երկրներում, որտեղ ի սկզբանե կար կրոնական բազմակարծություն, իսկ գործող կրոններին բնորոշ չէր դոգմատիզմը: Օրինակ, ԱՄՆ-ում բավական արագ ձևավորվեց համաբողոքական համաձայնություն, իսկ հետո, երբ դա պահանջվում էր, XX դարի կեսերի հանգամանքների բերումով, ձևավորվեց նաև նոր հիբրիդ՝ «հուդայաքրիստոնեական մշակույթ»: Տվյալ հիբրիդը կոչված էր միավորել այնպիսի տարբեր, սակայն շատ ազդեցիկ խմբերի ներկայացուցիչների, ինչպիսիք են, օրինակ, բողոքականները, կաթոլիկները և հուդայականները: Բնականաբար, հուդայաքրիստոնեությունը պատրանք էր, որի հիմքում ընկած էին ամերիկյան արժեքները՝ քողարկված աստվածաշնչային մեջբերումներով: Աշխարհիկությունը հաստատված էր ներքնապես՝ բացակայում էին անփոփոխելի դոգմաները, դավանական դրույթները մեկնաբանվում էին ավելի ու ավելի ազատամիտ լուծումներով: Ի վերջո, միանգամայն անհնարին դարձավ աշխարհիկ հայեցակարգի տարբերակումը կրոնականից: Քանի դեռ կրոնասիրությունն անկում էր ապրում և հազիվ թե մեծամասնության համար նշանակեր ավելին, քան պարզապես հիշողություն իրենց արմատների մասին, ընդհանուր համաձայնության այս ռազմավարությունը լիովին աշխատեց:
2. Աշխարհիկ հայեցակարգին կրոնականի բացահայտ հակադրման և հասարակական տիրույթից վերջինիս ուժով դուրս մղելու վրա հիմնված ռազմավարությունը տարածվեց այն երկրներում, որտեղ կար հզոր միասնական եկեղեցի, որը վարում էր ոչ միայն հերետիկոսների, այլև

ընդհանրապես այլախոհների հետապնդման հետևողական քաղաքականություն: Նոր հայեցակարգը կարող էր առաջանալ միայն որպես կրոնական հայեցակարգի այլընտրանք և անհաշտ թշնամի: Ամենավառ օրինակը կարող է լինել Ֆրանսիան, որտեղ ազգային գաղափարի հիմքում դրված էր «լայիցիզմը»՝ պետության աշխարհիկ կառուցվածքի սկզբունքը: Մեկ այլ օրինակ էր ԽՍՀՄ-ը, որտեղ եկեղեցին թշնամանքով շրջապատվեց և հալածվեց:

Աշխարհիկության հաստատման երկու ռազմավարություններն էլ բավական արդյունավետ եղան:

Ընդհուպ մինչև XX դարի 80-ական թվականները թվում էր, թե ամեն ինչ հիանալի է: Կրոնները դադարեցին ընկալվել որպես խնդիրների աղբյուր, ավելի շատ ուշադրություն էր դարձվում էթնիկ և դասակարգային հակասություններին: Իրագործվող աշխարհիկ հայեցակարգը՝ որպես այլընտրանք կրոնական նախապաշարմունքներին, բոլորի կողմից ընդունվում էր խանդավառությամբ: Սակայն հենց այդ հաջողությունն էլ «առաջադիմող» աշխարհայացքի հետ չար կատակ խաղաց: Աշխարհիկ հայեցակարգն սկսեց ընկալվել ոչ թե որպես լոկ այլընտրանքային հայեցակարգ, որը պետք էր պաշտպանել և կատարելագործել, այլ որպես մարդու միակ բնականոն հայացք աշխարհին, հասարակությանը, բնությանը: Ցանկացած մարդ, ով կասկածում էր աշխարհի նման մտապատկերի բնականությանը, համարձակվում էր լավագույն դեպքում հետադիմականի, վատագույն դեպքում՝ մոլեռանդի անուն հանել: Համապատասխանաբար, աշխարհիկությունը՝ որպես աշխարհիկ հայեցակարգից տրամաբանորեն բխող հասարակական կարգ, սկսեց ընկալվել ոչ թե որպես արժեք, որը պետք էր պաշտպանել, այլ գրեթե որպես իրերի բնական վիճակ:

Վառ արտահայտված վերջին գաղափարական նախագծի՝ կոմունիզմի անկումից հետո արդի աշխարհում մնաց գոյության միայն մեկ լեգիտիմ միջոց՝ ազատականությունը (լիբերալիզմը)՝ բառի ամենալայն իմաստով: Ազատականության շրջանակներում կրոնը, իհարկե, չոչնչացավ, հակառակը՝ փորձեր եղան այն ամեն կերպ զարգացնել՝ որպես մարդկային բնույթի դրսևորման բնական երևույթներից մեկը: Ազատական աշխարհիկությունն այնքան ամրապնդվեց, որ այնուհետև ազատական մտածողներին սկսեց հուզել ոչ այնքան աշխարհիկությունը, որքան կրոնների և կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խնդիրը:

XX դարի 60-ականներից սեկուլյարացման թեման կրոնի սոցիոլոգիայում առաջին պլան է գալիս: Անդրադառնալով սեկուլյարացմանը՝ սոցիոլոգներն իրենց համար պարզեցին, որ այն անկապտելիորեն առնչվում է մո-

դեռնիզմի հետ: Երկար ժամանակ նրանք համարում էին, որ սեկուլյարացումը մոդեռնիզացիայի (արդիականացման) անխուսափելի կողմնակի հետևանքն է, և որ ժամանակակից գիտության, բազմակարծության և սպառողների իրավունքների պաշտպանության դերի բարձրացումը կհանգեցնի կրոնի անկմանը: Ամենաընդհանուր նշանակությամբ, մոդեռնիզացիան ագրարային հասարակության փոխակերպումն է ժամանակակից արդյունաբերական հասարակության: Մոդեռնիզացիայի ենթարկվում էին հասարակության բացարձակապես բոլոր ոլորտները, այդ թվում նաև՝ կրոնը, և շուտով ի հայտ է գալիս նաև կրոնի մոդեռնիզացման թեման:

Դեռևս 1822թ. ամերիկյան ականավոր պետական գործիչ Թոմաս Ջեֆերսոնը «կանխատեսում» էր, թե իբր «չկա ԱՄՆ-ում ապրող մի երիտասարդ, որը չի մեռնի որպես Ունիտարիզմի[1] հետևորդ»: Կյանքը ցույց տվեց, որ Ջեֆերսոնի մարգարեությունն անիրական էր: Երկրորդ մեծ արթնությունը տարածվեց ողջ ԱՄՆ-ով, և բապտիզմը սկսեց ծաղկել այն ժամանակ, երբ ջեֆերսոնյան դեիզմը խոր անկում էր ապրում: Եվրոպական աթեիստները կանխատեսել էին, որ Ջեֆերսոնի դեիստական[2] հավատամքը, ինչպես և ավանդական քրիստոնեությունը, դատապարտված են անկման: Նրանք պնդում էին, որ կրոնական հավատը պատկանում է անցյալին: Համաձայն Օգյուստ Կոնտի, մարդկությունը գտնվում է աստվածաբանական կամ երևակայության տարիքից դեպի իսկական գիտականը տանող երկար, բայցև անդրդվելի ճանապարհի ավարտական փուլում: Կոնտի այս կանխագուշակումը հաստատվել էր ժամանակակից սոցիալական տեսության հիմնադիր հայրերի կողմից՝ ներառյալ Կարլ Մարքսը, Մաքս Վեբերը, Էմիլ Դյուրկհեյմը և Զիգմունդ Ֆրեյդը: Այս հեղինակներից ոմանք ողբում էին ավանդական կրոնի անցումը, իսկ մյուսները տոնում էին այն, բայց նրանք բոլորն էլ ենթադրում էին, որ արդիա-

[1] *Ունիտարիզմը* կրոնական լիբերալների միավորում է, որոնք բանականությանը հենվող կրոնական ճշմարտությունների որոնման մեջ շեշտադրում են անհատի ազատությունը: Նրանք Սուրբ Երրորդության դոգման համարում են քրիստոնեության խեղաթյուրում և հավատում են մի Աստծուն (որտեղից էլ իրենց անունը՝ միարարներ), իսկ Քրիստոսին համարում են պարզապես մարդ: Այն ծագել է Եվրոպայում XVI դարում, իսկ 1825թ. ստեղծվել է ամերիկյան Ունիտարական ասոցիացիան:

[2] *Դեիզմը* կրոնափիլիսոփայական ուղղություն է, որն ընդունում է Աստծո գոյությունը և նրա կողմից աշխարհի արարումը, բայց մերժում է գերբնական ու միստիկ երևույթների մեծամասնությունը, աստվածային հայտնությունը և կրոնական դոգմատիզմը: Նրանց մեծ մասը համարում է, որ աշխարհի արարումից հետո Աստված չի խառնվում իրադարձությունների ընթացքին, մյուսները համարում են, որ Աստված ազդում է իրադարձությունների վրա, սակայն դրանք լիովին չի վերահսկում: Դեիզմը ենթադրում է, որ բանականությունը, տրամաբանությունը և բնության դիտարկումը Աստծուն և նրա կամքը ճանաչելու միակ ճանապարհն է: Այն բարձր է գնահատում մարդկային բանականությունն ու ազատությունը և ձգտում է ներդաշնակության բերել գիտությունն ու Աստծո գոյության գաղափարը: Նրանք չեն ընդունում քահանայությունը, եկեղեցին, ծուխը, նվիրապետությունը. գոյություն ունեն լոկ դեիստների աշխարհիկ միավորումներ՝ ակումբների նմանությամբ: Հիմնադիրն է համարվում Հերբերտ Չերբերին (1583-1648թթ.): Առավելագույն ծաղկման այն հասել է Լուսավորության ժամանակաշրջանում: Դեիզմի տարածման գործում մեծ ներդրում ունի Իլյումինատների միաբանությունը (*Հանրագիտարան Վիկիպեդիա*):

կանության (մոդեռնի) ուժերը կհոչակեն նո՛ր *աշխարհիկ աշխարհը*:

Քսաներորդ դարի ընթացքում համատարած կերպով ենթադրվում էր, որ աշխարհիկությունը (որը հասկացվում էր նախ և առաջ որպես կրոնի անկում) անխուսափելի, անդառնալի և ունիվերսալ գործընթաց է: Մոդեռնացումը դիտվում էր որպես աստվածներին թոշակի ուղարկելու պատճառ: Կրոնը պետք է ջախջախվեր արդյունաբերացմամբ, գիտությամբ, ուրբանացմամբ և սպառողների իրավունքների պաշտպանությամբ:

Նման ենթադրությունները մինչև օրս խորապես դրոշմված են բազմաթիվ կրթված եվրոպացիների մտքերում: Լրագրողներն ու ակադեմիկոսները հաճախ կրոնի անկումը համարում են բնականոն երևույթ, և ավանդական կրոնների հետևորդները դիտվում են որպես ապրող անաքրոնիզմներ, ճանաչողության համար պահպանված դինոզավրեր, որոնք իրենց ողջ ուժերը ներդնում են նոր թշնամական միջավայրում գոյատևելու համար: Թեև ակնհայտ է անորոշ ընկալումն այն բանի, որ մոլորակի մեծամասնությունը դեռևս հավատացյալ է, սակայն դա բացատրվում է նրանով, որ վերջիններս արդիականացման ճանապարհին հետ են ընկել եվրոպացիներից:

Եվ քանի որ արևմտյան երկրներում կրոնի մոդեռնիզացիան թուլացրեց կրոնները, սոցիոլոգները (Պիտեր Բերգեր, Դևիդ Մարտին) սկսեցին խոսել սեկուլյարացման մասին որպես մոդեռնիզացիայի հետևանք: 90-ականներին սեկուլյարացման հիմնական բովանդակություն է դառնում կրոնների սոցիալական դերի կորուստը: Սեկուլյարացման հետևանք է լինում ոչ թե կրոնականությունից զուրկ հասարակությունը, այլ այնպիսի հասարակության ձևավորումը, որի գործունեությունը գրեթե կախված չէ կրոնից: Չնայած սոցիոլոգներն իրենց եզրահանգումները կատարելիս մինչև XX դարի վերջը հիմնվում էին միայն Եվրոպայի և մասամբ ԱՄՆ փորձի վրա, նրանք ընդհանրացնող հետևություններ էին անում, քանզի վստահ էին, որ առկա են զարգացման ընդհանուր միտումներ: Այդ հետևություններից ծնունդ առավ այն թեզը, որ «կրոնը և ժամանակակից հասարակությունն անհամատեղելի են»:

Աշխարհիկացման այս առասպելը գործում էր որպես մի «տխուր պատմություն»՝ ազդելով աշխարհի ներկա ընթացքի վրա: Դա մեծացրեց անհավատների ինքնավստահությունը և հուսահատության հասցրեց հավատացյալներին, որոնք իրենց զգում էին դատապարտված և հնացած: Սակայն վերջին տարիներին կրոնի սոցիոլոգները սկսեցին ավելի հոռետեսորեն մոտենալ ավանդական աշխարհիկացման տեսությանը:

Եվ հենց այդ պահին այն, ինչը լավագույն տերմին չունենալու պատճառով ստիպված կոչում էին *«հանրային կրոններ»* (հասարակական տարածում ունեցող), բառացիորեն ներխուժեց պատմության բեմ: Խոսքը ոչ թե *նոր կրոնական շարժումների* կամ *նոր դարի* մասին է, որոնք հիանալիորեն ձուլվում

էին աշխարհի աշխարհիկ մտապատկերին՝ որպես սահմանային աղանդներ կամ էլ դասական մասնավոր կրոններ, այլ՝ *«ավանդական կրոնների վերածննդի»*: Աշխուժացավ և արմատավորվեց իր սեփական իսլամական նախագծի համար պայքար սկսած իսլամը: Իսլամիստների վրա ոգևորիչ ազդեցություն գործեց 1979թ. Իրանի իսլամական հեղափոխությունը՝ նրանց առաջին նկատելի հաղթանակը: Այդ նույն տարում ամերիկյան բողոքականները ձևավորեցին «բարոյական մեծամասնության» պլատֆորմ և ներկայացան որպես լուրջ քաղաքական ուժ: 1990թ. Ջ.Միլբանկի գլխավորությամբ Անգլիայում սկիզբ առավ ու սկսեց թափ հավաքել «արմատական օրթոդոքսիայի» շարժումը, որը կոչ է անում ժողովուրդներին վերադառնալ իրենց ավանդական կրոնական համակարգերին: Կարճ ասած, հանկարծ պարզվեց, որ կրոնը վերացական բարեպաշտություն չէ, այլ դրական ուժ, որն ունի միանգամայն տեսանելի, այդ թվում նաև՝ քաղաքական շահեր:

Կրոնների հանդեպ ավելի շատ ուշադրության պատճառներից են համարում գլոբալացումը, մահմեդական երկրներից գաղթականների հոսքը, ինչպես նաև աշխարհիկ գաղափարախոսությունների սպառվելը: Առանց այդ գաղափարախոսությունների մնում է կամ աթեիստական սցիենտիզմը[1], կամ կրոնների առավել մեծ կարևորություն ենթադրող նախագծերը: Սրան զուգահեռ, ի հայտ եկան մարդիկ, որոնք սկսեցին աշխարհին նայել հազարամյակային հուզմունքով՝ կանխատեսելով զանգվածային քրիստոնեական արթնության մասին:

Կրոնական խնդիրների վերադարձը հասարակության ուշադրության կենտրոն կապում են նաև «դեսեկուլյարացման» գործընթացի հետ: 1981թ. սոցիոլոգ Կ.Դոբելերեն առաջարկեց սեկուլյարացումը դիտարկել երեք առանձին մակարդակներում. ա) մակրոմակարդակում (հասարակության կառուցվածքի մակարդակում), բ) մեզոմակարդակում (կրոնական կազմակերպությունների մակարդակում) և գ) միկրոմակարդակում (անհատի մակարդակում): Ընդ որում, հիմնական և որոշիչ նշանակություն ունի մակրոմակարդակը: Այս ճշգրտումները կարևոր են «պոստսեկուլյարիզմի» և «դեսեկուլյարիզմի» մասին դատողություններ անելիս, որպեսզի խուսափենք լիարժեք դեսեկուլյարացման հետևանքներ փնտրելու և նոր պոստսեկուլյար դարաշրջանի մասին խոսելու գայթակղություններից:

Ըստ նրա, մակրոմակարդակում սեկուլյարացումը նշանակում է *կրոնի դերի անկում հասարակության կառույցի տիրույթում*: Կրոնը կորցնում է իր համընդգրկուն կարգավիճակը և դառնում ենթահամակարգերից մեկը (ինչպես, օրինակ, քաղաքականություն, տնտեսություն, գիտություն, ընտանիք և այլն):

[1] Սցիենտիզմը փիլիսոփայական-աշխարհայացքային կողմնորոշում է, որի հիմքում ընկած է գիտական գիտելիքի՝ որպես բարձրագույն մշակութային արժեքի և աշխարհում անհատի կողմնորոշման բավարար պայմանի, մասին պատկերացումը:

Մեզոմակարդակում սեկուլյարացումը կապված է կրոնի մարգինալացման հետ (հասարակության վրա տարբեր կրոնական հավատքների և կրոնական ինստիտուտների ազդեցությունը հավասարեցվում է): *Ի հայտ է գալիս «կրոնների շուկան»* (աստվածների նախաքրիստոնեական պանթեոնը)՝ այլևս ոչ մի կրոնական կազմակերպություն չի կարող հավակնել առանձնահատուկ կարգավիճակի, և նոր հետևորդներ գտնելու համար բոլորը պետք է մրցակցեն միմյանց և հասարակական կազմակերպությունների հետ:

Միկրոմակարդակում սեկուլյարացումը դրսևորվում է *կրոնի սեփականաշնորհմամբ*՝ մարդու հասարակական գոյությունը քայքայվում է հանրային և մասնավոր ոլորտների, և կրոնը մղվում է մասնավոր ոլորտ՝ վերածվելով անհատի մասնավոր գործի: Բացի այդ, «կրոնների շուկայի» երևան գալու հետևանքով մարդու մեջ սպառողական վերաբերմունք է զարգանում կրոնների նկատմամբ. նա սկսում է կրոնական ավանդությունները դիտարկել որպես ապրանք, որը գնահատում է «ինչ կարող է դա տալ ինձ» սկզբունքով: Այսինքն՝ ոչ թե կրոնն է թելադրում մարդուն ինչպիսին լինել, այլ մարդը՝ կրոնին:

Հայտնի սոցիոլոգ Դ.Մարտինը նկարագրում է սեկուլյարացման չորս հիմնական մոդել.

1. Անգլոսաքսոնական (կրոնական ինստիտուտների թուլացում, ամորֆ կրոնական համոզմունքների պահպանում):
2. Ամերիկյան (կրոնական ինստիտուտների ամրապնդում, ամորֆ կրոնական համոզմունքների պահպանում՝ կրոնական բովանդակության անէացման համատեքստում):
3. Ֆրանսիական կամ լատինական (ամուր կրոնական համոզմունքների և կրոնական ինստիտուտների ընդհարում ոչ պակաս ուժեղ աթեիստական համոզմունքների և խմբերի հետ):
4. Ռուսական (կրոնական համոզմունքների ինստիտուտների զանգվածային թուլացում՝ հասարակական դաշտերում դրանց պահպանումով):

Կառուցվածքային և ինստիտուցիոնալ փոփոխություններին զուգահեռ սեկուլյարացումը կապված է եղել նաև գիտակցության հեղափոխության հետ: Ի հայտ է գալիս հասարակության և դրանում մարդու ունեցած տեղի մասին մի նոր ընկալում՝ *հասարակությունը հավասար և փոխգործակցող անհատների հավաքականություն է*: Տվյալ հասարակության կարգերն ու օրենքները բխում են ռացիոնալ մտածողությունից, այլ ոչ թե որևէ ավանդական տիպարին համապատասխանելու անհրաժեշտությունից: Ի հայտ է գալիս աշխարհիկ աշխարհ՝ այն իմաստով, որ դրա գոյությունն ու զարգացումն այլևս կախված չէր դիտվում Աստծուց: Աշխարհի, հասարակության և մարդու մասին նոր աշխարհիկ պատկերացումների հավաքականությունը կարելի է կոչել

Մոդեռնի նախագիծ: Մոդեռնը հիմնվում է աշխարհի նոր տեսիլի վրա, որում կրոնը հիմնական դեր չունի, այդուհանդերձ, ոչ ոք չի արգելում կրոնին իրականացնել իր զուտ կրոնական գործառույթները:

4. Աշխարհիկությունը՝ որպես նոր կրոն

Համաձայն Ջ.Միլբանկի՝ «Կար ժամանակ, երբ ոչ մի «աշխարհիկ» (սեկուլյար) բան չկար: Եվ աշխարհիկը չի եղել մի ինչ-որ լատենտ, իր ժամին սպասող երևույթ, որպեսզի այն պահին, երբ սրբազանը նվազեցներ իր ընդգրկումը, ավելի շատ տարածություն լրացվեր «զուտ մարդկային» շոգիով»: «Աշխարհիկը որպես մի առանձին ոլորտ պետք է հիմնվեր կամ պատկերացվեր ինչպես տեսության մեջ, այնպես էլ պրակտիկայում» [5, p. 9]: Նման հիմնադրումը կարող էր իրականացվել միայն մի որոշակի աստվածաբանության հիման վրա, որը Միլբանկն իր աշխատություններից մեկում անվանում է «այլասերված» (քրիստոնեական դոգմաների համեմատ) [6]: Այդ ի՞նչ աստվածաբանության մասին է խոսքը: Դրա հիմնական դրվածքը պատկերացումն է աշխարհի ինքնուրույնության մասին, աշխարհի այնպիսի գոյության մասին, որ կարծես թե Աստված չկա: Ընդ որում՝ Աստծո գոյությունն ընդունվում է (թեև միաժամանակ այն ավելի ու ավելի է մոտեցվում բնությանը), բայց լոկ որպես այս աշխարհը ստեղծած մի շարժող նախապատճառ, որն աշխարհին հաղորդել է զարգացման օրենքները, և դրանից հետո հեռացել է հանգստի և այլևս չի միջամտում նրա գործառույթներին: Աստծո բացակայության պայմաններում գլխավոր գործող անձ է ճանաչվում մարդը, ամբողջ իշխանության կրողը: Հենց նրան է բոլոր գործերից հեռացած Աստված փոխանցել աշխարհը՝ որպես կալվածք: Սուվերեն իշխանության լիիրավ կրողը հանդիսացող մարդը, հետևելով իր իրական բնությանը և ճանաչելով Աստծո սահմանած օրենքները, որպես լիիրավ տեր տնօրինում է այս աշխարհը: Եվ կասկածից դուրս է, որ սա աստվածաբանություն է, քանի որ «միայն որոշակի աստվածաբանությունը կարող է ասել՝ «այնպես, կարծես, թե Աստված չկա» [5, p. 13]: Արևմուտքի ինտելեկտուալ պատմության ընթացքում նման տեսակի աստվածաբանությունն ընդունել է տարբեր ձևեր, օրինակ՝ հերետիկոսական և նեոհեթանոսական…

Այս աստվածաբանական դրվածքներից բխում են հասարակության, արդարության, օրենքի ժամանակակից հայեցակարգերը: Մարդը՝ որպես աշխարհիկի լիիրավ տեր, հանդիսանում է մարդկանց համատեղ գոյությունը սահմանող ցանկացած օրենքի, կարգերի աղբյուր: Անգամ բացարձակ իշխանությունը հարկադրված է իր իշխանության արդարացումը որոնել հենց առանձին անհատների կամքում: Մի ժամանակ նրանք իրենց իրավունքների մի մասը տվել են սուվերենին, որպեսզի վերջ դնեն «բոլորը բոլորի դեմ» ընթացող պատերազմին (միֆ հասարակական պայմանագրի մասին):

Այսպիսով, համաձայն Միլբանկի թեզի, աշխարհիկությունը որոշակի աստվածաբանության պտուղ է, այլ ոչ թե ինչ-որ բնական տիրույթ, որը սեկուլյարացման գործընթացում մնացել է կրոնի նահանջից հետո: Աշխարհիկ աստվածաբանները, առաջնորդվելով իրենց ինչ-որ պատկերացումներով, ոչ թե պարզապես «կրոն» են ստեղծել, այլ զուգահեռաբար կառուցել են «աշխարհիկը», որը լավագույնս է պատասխանում աշխարհի մասին իրենց աստվածաբանական պատկերացումներին: Այստեղից հետևում է, որ այն կրոնական ավանդությունները, որոնք ընդհարվել են Մոդեռնի նոր նախագծի հետ, ոչ միայն դուրս են մղվել «կրոն» անվանվող մի արհեստականորեն սինթեզված միջավայր, այլև կանգնել են «աշխարհիկության» նոր աստվածաբանությունն ընդունելու անհրաժեշտության առջև, որը վերացման սպառնալիքի ներքո փաթաթվում է նրանց վզին: Այստեղ կարևոր է ընդգծել, որ «աշխարհիկության» աստվածաբանությունը կարող է անգամ կաթոլիկական աստվածաբանությունից լավը լինել, այդուամենայնիվ, այն շարունակում է աստվածաբանություն մնալ, որը ներառում է միանգամայն կոնկրետ պատկերացումներ Աստծո (նույնիսկ եթե այն նույնացվում է Բնության հետ), աշխարհի, մարդու և այլնի մասին: Հավանաբար, նրա հիմնական տարբերությունն իր աստվածաբանություն լինելու փաստի մերժումն է: Երկար դարեր նա իրեն հակադրել է բոլոր մնացյալ աստվածաբանություններին՝ որպես բնականի ու ճշմարիտի հակադրություն հակաբնականի ու կեղծի:

Աշխարհիկության կրոնական-գաղափարական չեզոքությունն ավելի շուտ առասպել է, քան իրականություն, քանի որ ժամանակակից Արևմուտքի հասարակության արժեքային համակարգում աշխարհիկության գաղափարը հաճախ ավելի բարձր տեղ ունի, քան մարդը: Հետևապես, պետության՝ կրոնական առումով, չեզոք լինելու մասին հայտարարությունն ինքնին կեղծ է և հորինվել է աշխարհիկության համար ճանապարհ հարթելու նպատակով: Ըստ այսմ, որոշակի առումներով կրոնական համակարգեր են աթեիզմն ու սեկուլյարիզմը:

Ամերիկյան կրոնագետ սոցիոլոգ Ռ.Բելլան (1927թ.) այս համակարգերը բնութագրում է որպես քաղաքացիական կրոններ. «...եթե այդ հասարակություններում (օր.՝ Ճապոնիա) ակներև է հսկայական տարատեսակությունը, ապա նրանցում որպես կրոնական կյանքի միասնական չափանիշ առկա է նաև քաղաքացիական կրոնը, որը հասարակության կրոնական միասնականության համար ծառայում է որպես ավելի կամ պակաս համաձայնեցված հիմք՝ նույնիսկ այնտեղ, որտեղ կրոնական պլյուրալիզմն առավել վառ է արտահայտվում: Կարելի է, օրինակ, խոսել ԱՄՆ-ում գոյություն ունեցող դեիստական սիմվոլիզմի մասին, որը մեր պետական արարողակարգի ծիսական սրբությունների կարևոր բաղկացուցիչ մասն է, որոնց մեջ Շնորհակալության օրը և Քաղաքացիական պատերազմի ժամանակ զոհվածների հիշատակի օրն

ավելի կարևոր դեր ունեն, քան Հուլիսի 4-ը և նահատակի մահով մեռած Աբրահամ Լինքոլնի և մյուս սրբերի հիշատակի օրը: Արլինգթոնյան պետական հանգստարանում կանգնեցված Քենեդու հուշարձանն ազգային (պետական) հավատքի ավելի ուշ շրջանի սրբություն է: Ամերիկյան քաղաքացիական կրոնը ներկայացնում է լուրջ կրոնական ավանդություն...» [7, c. 46-47]:

Այսպիսով, Մոդեռնի հետևանքով ի հայտ եկած աշխարհի «կախարդազերծման» (աշխարհիկացման) միֆը լիովին փլուզվում է: Դրա փոխարեն առկա են բոլոր հիմքերը՝ խոսելու համար հակառակի՝ Եվրոպայի (որպես արդիականության օրրանի) պատմության «կախարդանքի ենթարկվելու» մասին: Պարզվում է՝ Մոդեռնը միանգամայն որոշակի աստվածաբանական աշխարհայցք է, որն ամեն կերպ ծածկում է սեփական աստվածաբանական բնույթը:

5. Սեկուլյար հայեցակարգի խարխլումը

Կրոնի սոցիոլոգ, ամերիկացի Փիթեր Բերգերը «Նյու Յորք Թայմս» թերթում 1968թ. գրում էր. «Քսանմեկերորդ դարի սկզբին կրոնի հետևորդներ, հավանաբար, կգտնվեն միայն փոքրիկ աղանդներում, որտեղ նրանք միասին կհավաքվեն՝ ընդդիմանալու համար համաշխարհային աշխարհիկ մշակույթին»: Սակայն 30 տարի անց՝ 1999թ. «Աշխարհի դեսեկուլյարիզացիան» աշխատության մեջ նա գրում է. «Սխալ է այն ենթադրությունը, թե մենք ապրում ենք աշխարհիկացված (սեկուլյարացված) աշխարհում. աշխարհն այսօր, որոշ բացառություններով, այնքան մոլեգնորեն է կրոնական, որքան երբեք չի եղել, և որոշ վայրերում այնքան շատ, որքան՝ երբևէ»:

6. Կրոնների աննախադեպ ակտիվացումը

Ժամանակակից աշխարհի վիճակի բնութագրական առանձնահատկություններից մեկը կրոնների ակտիվացումն է: Որոշ հասարակագետների[1] այս եզրակացությունն այլևս ոչ ոք լրջորեն չի վիճարկում: Այլ բան է, որ կրոնների այդ ակտիվացումը (կամ՝ *վերածնված կրոններ – «resurgent religion»*) տեղի է ունենում տարբեր ձևերով՝ կախված կրոնի առանձնահատկությունից և դրա տարածման տիրույթից:

Հակառակ ոմանց այն հավատքին, թե սեկուլյարացումը վերջնական է, սեկուլյար ժամանակաշրջանի ողջ ընթացքում այդ ավանդությունները շարունակել են ապրել ինչպես մասնավոր կրոնականության ընդհատակում, այնպես էլ արևմտականացման ենթադրվող տարածքներում: Այսօր նրանք «լույս աշխարհ են դուրս եկել»՝ իրենց հետ բերելով կրոնական կյանքում Աստծո

[1] Տե՛ս Peter L. Berger (ed.), The Desecularization of the World: Resurgent Religion and World Politics. Washington, DC: Ethic and Public Policy Center, 1999.

գիտակցումը, ամբողջական աշխարհայացքը և գերակայությունները, այդ թվում նաև բարոյականության, որոնց աղբյուրը ոչ թե այս աշխարհում գտնվող անհատի, այլ՝ աշխարհի անդրանցական Արարչի մեջ է:

XX դարի վերջին քառորդում տեղի ունեցած հայտնի իրադարձությունները ստիպեցին կասկածի տակ դնել ժամանակակից աշխարհի և կրոնի անհամատեղելիության արևմտյան գաղափարը: Իր մասին հայտարարեց կրոնական արմատականությունը, և ոչ միայն իսլամականը, այլև՝ քրիստոնեականը: 1979թ. Իրանում տեղի ունեցավ հեղափոխություն, որի նպատակն էր իսլամական պետության ստեղծումը, իսկ ԱՄՆ-ում իրենց մասին հայտարարեցին քրիստոնեական աջերը, որոնք փորձում էին հզոր քաղաքական շարժում ձևավորել, և կրոնական իրավունքն առաջավոր դեր խաղաց ազգային քաղաքականության մեջ: Այդ նույն ժամանակ արևմտյան հետազատողներն ուշադրություն են դարձնում մինչ այդ անտեսվող նոր կրոնական շարժումների երևույթի վրա: Այդ իրադարձությունների թվում կարելի է նշել նաև 90-ականների սկզբին Արևելյան Եվրոպայում աթեիստական վարչակարգերի տապալումը, որը զգալիորեն կապված էր նաև կրոնական կազմակերպությունների գործունեության հետ: Նախկին Չինաստանում, որտեղ նույնպես տիրում էր պաշտոնական աթեիզմը, ներկայումս առկա է էական դեսեկուլյարացում:

Հիշելով ոչ անհայտ կարգախոսները՝ կարելի է ասել, որ «Աստծո մահից» (Նիցշե) և դրան հաջորդած «Մարդու մահից» (Մ.Ֆուկո) հետո կրկին գալիս է մարդու կրոնական ընկալման ժամանակաշրջանը: Անհատների հասարակության մեջ, ավելին՝ «ծայրահեղ անհատականացված հասարակության» մեջ, Զիգմունդ Բաումանի խոսքերով՝ «մարդը հաճախ դիմում է հենց կրոնին»: Նրան չի բավականացնում մարդու իրավունքներով ենթադրվող ինքնատիպությունը, նա ցանկանում է լսել Աստծո ձայնն ու կոչը և պատրաստ է իր տեղը գտնել կրոնական ավանդությամբ առաջարկվող համակարգում:

Այսօր կրոնը դադարել է մարդու մասնավոր գործը լինել, այն կրկին վերադառնում է քաղաքական ու հասարակական տիրույթներ: Կրոնի «սեփականաշնորհման» բազմամյա ակնկալիքները, դրա փոխակերպումը թատրոնի կամ ֆուտբոլի նման կիրակնօրյա հոբբիի չարդարացան: «Հանրային կրոնների» խնդիրն ավելի հաճախ է առաջին պլան մղվում: Կրոնների ակտիվացումը, մասնավորապես, դրսևորվում է հասարակական կյանքում, այդ թվում նաև քաղաքականության մեջ վերջինիս աճող մասնակցությամբ: Կրոնական գիտակցության կրողներն ու արտահայտողները դառնում են հասարակական քննարկումների և քաղաքական գործընթացների մասնակիցներ, ինչը հատկանշական չէր ոչ հեռավոր անցյալի համար, եթե նկատի ունենանք եվրոպական մշակութային տիրույթը: Այսպիսով, գլոբալ մասշտաբի լայնացող «եվրոպական» հասարակության մշակութային (այդ թվում նաև քաղաքական) տի-

րույթ են վերադառնում կրոնական ավանդույթները:

Այս միտումը պահանջում է լուրջ ուշադրություն դարձնել կրոնական գիտակցության ներքին տրամաբանության վրա՝ այն համեմատելով ոչ կրոնական կամ սեկուլյար գիտակցության հետ: Ոմանք թյուր կարծիք ունեն, թե ավանդական և ոչ ավանդական կրոնների ներկայիս ակտիվացումն արխաիկայի պարզ դրսևորում է: Դա նոր տիպի արխաիկա է, այսինքն՝ պատմական գործընթացի արդյունք, նոր մշակութային փուլի իրականություն, որը հաճախ կոչում են պոստմոդեռն (հետժամանակակից): Պոստմոդեռն ասվածը մոդեռնի տիրապետությունից հետո ստեղծված անցումային վիճակ է, որին անխուսափելիորեն պետք է հաջորդի իրերի նոր ձևավորվող կարգը: Անցումային այս վիճակում ձևավորվել է պարադոքսալ իրավիճակ՝ հասարակական տիրույթում կրոնի ավելի մեծ չափի ներկայություն և ավելի շատ մարտնչող աթեիզմ: Այս առումով հատուկ ուսումնասիրման առարկա է նաև զարթոնք ապրող կրոնականության բնույթը. չէ՞ որ այն ակամայից պետք է կրի սեկուլյարիստական գաղափարների և դրանց հիմնված ապրելակերպի հարյուրամյա ազդեցությունը…

7. Պոստսեկուլյարացում և դեսեկուլյարացում

Ինչպես արդեն նշեցինք, XXդ. վերջը վկայեց աշխարհի տարբեր մասերում կրոնի դրամատիկ վերընթացը: Աշխարհիկ լիբերալների համար լուրջ խնդիր էին Եվրոպա մուտք գործող գաղթական նոր համայնքները, իսկ այստեղ գաղթող թուրքերը, հինդուսները, պակիստանցիները, հյուսիսաֆրիկացիները չէին հասկանում, թե ինչու լավ եվրոպացիներ դառնալու համար իրենք պետք է դադարեն լրջորեն վերաբերվել իրենց դավանանքին:

Արևմտյան կառավարությունները՝ հուսահատված հանցավորության և թմրադեղերի չարաշահման խրոնիկ սոցիալական խնդիրների լուծման իրենց անկարողությունից, հայտնաբերեցին կրոնական հիմքի վրա բարեգործության և համագործակցության ծրագրերի նկատմամբ նոր էնտուզիազմի երևան գալը: Ոչ միայն դադարեց կրոնական անկումը, այլև որոշ կրոնական հարանվանություններ անգամ շոշափելի աճ ունեցան: Եվ XXդ. վերջին ի հայտ եկան քաղաքային մեգաեկեղեցիներ, տիրապետող դարձան եկեղեցական ծրագրերը (այստեղ հարկ է նկատի ունենալ, որ այդ իրավիճակում ի հայտ էին գալիս կրոնականության նոր որակներ): Սթափ աշխարհիկ ռացիոնալիզմը կողք կողքի քարշ էր գալիս «Նոր դար» շարժման և Արևելյան կրոնների էկլեկտիկ և միստիկ հոգևոր հավատալիքների և մեթոդների հետևից:

Կրոնի սոցիոլոգները սկսեցին խոսել «Աստվածային վրեժի» մասին *(Gilles Kepel),* «Սրբազանության վերադարձի մասին» *(Daniel Bell),* «Կրոնների հրավառության» մասին *(David Westerlund),* և «Դեսեկուլյարացվող աշխարհի»

մասին *(Peter Berger):* Որոշ փորձագետներ նույնիսկ առաջարկում էին թաղել աշխարհիկացման տեսությունը և հրաժարվել դրանից:

60-70-ականների սեկուլյարացման տեսաբանների մոտ, որոնք հիմնվում էին հիմնականում Եվրոպայի փորձի վրա, ԱՄՆ-ում մեծ կրոնական ակտիվության փաստը առաջ էր բերել նկատելի խնդիրներ: Այս համատեքստում որևէ հասարակություն այլ հասարակությունների համար օրինակելի դարձնելու սկզբունքը սխալական համարվեց, և դրա շուրջ քննարկումները կորցրին իրենց նշանակությունը: Նրանք ստիպված էին հրաժարվել այն հիմնական թեզից, թե մոդեռնիզացիան՝ ժամանակակից հասարակության ձևավորումը, և կրոնը անհամատեղելի են, որ որքան շատ է դրանցից մեկը, այնքան քիչ է մյուսը: Դրա փոխարեն այսօր խոսում են «բազմատեսակ արդիականությունների» մասին, այսինքն՝ այն մասին, որ հասարակությունը կարող է արդիական լինել տարբեր ձևերով (Եվրոպան ժամանակակից հասարակության մի տեսակ է, իսկ Իրանը՝ մեկ այլ):

«Դեսեկուլյարացում» հասկացության ի հայտ գալը հենց այս նոր բացահայտման հետևանքն է: Հիշեցնենք, որ «դեսեկուլյարացում» հասկացությունը ներմուծել է սոցիոլոգ Փիթեր Բերգերը, որպեսզի աշխարհիկ եվրոպական հասարակությանը հակադրի աշխարհով մեկ նկատվող կրոնական աշխուժացումը:

Ժամանակակից Արևմուտքի պայմաններում պոստսեկուլյարացման ֆենոմենի մասին ավելի հաճախ գրում է գերմանացի փիլիսոփա Յուրգեն Հաբերմասը: Ըստ նրա, նախ և առաջ, ավելի ու ավելի ակնհայտ է դառնում արդի աշխարհիկ պետությունների ու հասարակությունների կախվածությունը կրոնական ավանդություններից և պատկերացումներից. հենց դրանցից է ավելի շատ կախված քաղաքացիական ընհանրության և համերաշխության զգացումի վերարտադրությունը, որը խժռում են տիրապետող շուկայական հարաբերությունները: Այլ կերպ ասած՝ աշխարհիկ մշակույթն ավելի ու ավելի անկարող է դառնում դաստիարակել լիարժեք քաղաքացիներ, որոնք կունենան ավելի լայն կողմնորոշում, քան անհատական բարեկեցությունն է, և նա ստիպված է հենվել կրոնական ավանդության դրական ազդեցության վրա:

Իսկ XX դարի ամերիկյան սոցիոլոգ Ռ.Բելլան գրում է. «Փաստորեն, աստիճանաբար ավելի մեծ ընդունելություն է գտնում այն մոտեցումը, որ միայն իրենում ընտանիքի, դպրոցի ու եկեղեցու որոշակի տեսակ ներառող շատ բարդ ինստիտուցիոնալ կառուցվածքն է ունակ ձևավորել մի անհատի և աջակցել նրան, որն ընդունակ կլինի գործել մի աշխարհում, որտեղ տառացիորեն ամեն բան ընտրության առարկայի է վերածվում» [7, c. 13]:

Պոստսեկուլյարացման մեկ այլ երևույթ է նոր կրոնական ընկերակցությունների առաջացումը, որոնք ավելի դժվար են հարմարվում եվրոպական

հասարակությունների աշխարհիկ սկզբունքներին և պահանջում են դեսեկուլյարացում:

Այսուհանդերձ, սեկուլյարացումը որպես ունիվերսալ համաշխարհային երևույթ դիտարկելուց հրաժարվելը դեռևս չի նշանակում, թե այն այլևս գոյություն չունի Արևմուտքում: Իսկ պոստսեկուլյար աշխարհի մասին թեզի առաջին պլան մղվելը ոչ թե ինչ-որ վճռական իրադարձությունների հետևանք է, այլ աշխարհի վերաբերյալ նոր տեսիլ, որն ի հայտ է եկել սեկուլյարացման սոցիոլոգիական ընկալման գաղափարական սխալների վերացման արդյունքում:

8. Աշխարհիկությունը որպես գործընթաց

Պարզվեց, որ աշխարհիկությունն աշխատում է միայն հենց իր հորինած կրոնի նկատմամբ: Հենց որ կրոնական ավանդույթները սկսեցին հանդես գալ իրենց անունից, պարզ դարձավ, որ աշխարհիկությունն այնքան էլ չեզոք և անխնդրահարույց չէ: Ինչպես «ընդհանուր» պլատֆորմի, այնպես էլ աշխարհիկ աշխարհայացքի հաստատման ռազմավարությունը սկսեց անկանոն գործել:

Ընդհանուր պլատֆորմի մշակման համար անհրաժեշտ է առնվազն երկու պայման. նախ, կողմերը պետք է ցանկանան փոխզիջումների գնալ, երկրորդ, պետք է լինեն բոլորի համար ընդունելի ընդհանուր սկզբունքներ: Սակայն, եթե առաջ են քաշվում փոխբացառող պայմաններ, և եթե կողմերը պայմանավորվելու ցանկություն չունեն, ապա կոնսենսուսի՝ հատկապես աշխարհիկ պլատֆորմի հիման վրա, հասնելու նպատակն աստիճանաբար ավելի անհասանելի է դառնում: «Հուդայաքրիստոնեական մշակույթն» ԱՄՆ-ում բախվեց իսլամի խնդրի հետ, որին առայժմ չի հաջողվում ոչ մի կերպ ինտեգրել նոր հիբրիդում՝ «մոնոթեիստական կրոնների» մշակույթում:

Խնդիրներ առաջացան նաև աշխարհիկ աշխարհայացքում: Նախ, այն դադարեց նոր կողմնակիցներ գրավել, դադարեց լինել լռելյայն ընդունվող հայեցակարգ. ավելացավ այն կասկածի ենթարկող անձանց թիվը, երկրորդ, տվյալ նախագծի կողմնակիցները համոզվեցին, որ իրենք ոչ մի արժեք չեն պաշտպանում, այլ պարզապես ապահովում են «նորմալ գոյատևման միակ հնարավոր պայմանները, որոնք երաշխավորում են բոլորի համար ընդունելի գոյություն»: Հենց այդ համոզմունքից էլ բխում է հանրային տիրույթ կրոնի վերադարձի աշխարհիկ մարդկանց շատ բնորոշ արձագանքը: Տեղի ունեցող երևույթի լուրջ վերլուծության փոխարեն առաջին պլան են մղվում զգացմունքները և գանգատները կրոնական ծայրահեղականության և մոլեռանդության առիթով, ինչպես նաև գանգատներ, որ եկեղեցիները մոռացել են իրենց իսկական կոչումը և մտել իրենց չվերաբերվող գործերի մեջ (քաղաքականություն, մշակույթ, արվեստ, կրթություն):

Այն բանից հետո, երբ աշխարհիկության նախկին հայեցակարգերի անհա-

մապատասխանությունն ակնհայտ դարձավ, սկսվեցին դրա բարեփոխման աշխատանքները: Այսօր փորձում են աշխարհիկությունը ներկայացնել որպես չեզոք գործընթաց, անջատել աշխարհիկ աշխարհայացքից, որը սկսում է արդարացիորեն ընդամենը աշխարհի նկատմամբ այլընտրանքային հայեցակետ դառնալ: Ընթանում է, այսպես ասած, «աշխարհիկ աշխարհայացքի» մասնավորեցումը (սեփականաշնորհումը), ինչը ժամանակին տեղի ունեցավ կրոնների հետ: Հանրային տիրույթում այսուհետև, իբրև թե, պետք է գերիշխեն զաղափարապես չեզոք նորմեր և գործընթացներ: Նման մոտեցումն առավել հետևողականորեն պաշտպանել են Ջոն Ռոլզը, Յուրգեն Հաբերմասը և Չարլզ Թեյլորը:

Ըստ այդմ, հանրային տիրույթը տարբեր կրոնական կամ հակակրոնական աշխարհայացքների ներկայացուցիչների միջև բանակցային գործընթացն ապահովող մեխանիզմ է: Եվ եթե Ռոլզը գտնում էր, որ հանրային տիրույթը կրոնի, ինչպես նաև մյուս բոլոր ամբողջական աշխարհայացքների տեղը չէ, ապա Հաբերմասը ճանաչում է կրոնասեր մարդկանց իրավունքը՝ որպես այդպիսին մասնակցելու բանավեճերին, իհարկե՝ այն պայմանով, որ նրանք կարողանան իրականացնել իրենց պահանջների փոխադրումը բոլորին հասկանալի աշխարհիկ լեզվի, որն արդի լուսավորյալ աշխարհի համընդհանուր բանակցային լեզուն է: Աշխարհիկ մտածող համաքաղաքացիներից պահանջվում է առաջին հերթին ունակություն՝ ընկալել կրոնասեր մարդկանց փաստարկները և օգնել նրանց փոխադրելու իրենց պահանջները ընդհանուր հասկանալի լեզվի և հակառակը:

Աշխարհիկությունը որպես գործընթաց՝ փորձ է լուծելու կրոնական փոքրամասնությունների խնդիրը: Ազատամտությունը ներկայանում է որպես աշխարհակարգ, որում ոչ ոք իրեն ճնշված չի զգում: Սակայն կրոնների դեպքում այդ սկզբունքը խախտվում է: Հանրային կյանքին լիարժեք մասնակցության համար կրոնասեր քաղաքացիները ստիպված են տրոհել իրենց ինքնությունը կրոնականի և քաղաքացիականի. առաջինը գերիշխում է մասնավոր կյանքում, երկրորդը՝ հանրային: Այդ իմաստով կրոնասեր քաղաքացիներն առավել նվազ նպաստավոր պայմաններում են, քան աշխարհիկ աշխարհայացքների կրողները, որոնց համար իրենց հանրային գոյատևումն իրենց մասնավոր կյանքի բնական շարունակությունն է: Գործընթացային չեզոքությունը կոչված է, իբր, հաղթահարելու տվյալ անարդարությունը:

Այսպիսով, սկիզբ է դրվում զաղափարական աշխարհիկությունից գործընթացային աշխարհիկությանն անցնելու շրջափուլին: Աշխարհիկությունը զաղափարախոսությունից վերածվում է գործիքի:

Սակայն այժմ արդեն ակնհայտ է, որ գործընթացային չեզոքությունը չի կարող լուծել այն խնդիրները, որոնց լուծման համար այն նախատեսված է: Գործընթացային աշխարհիկությունը, միևնույն է, մնում է տվյալ գործընթացի հիմնական պարամետրերը որոշող աշխարհիկ աշխարհայացքի արդյունքը:

Սիրաշահությունները և շողոքորթությունները կրոնական տարբեր ավանդույթներին այդպես էլ մնում են սիրաշահություններ և շողոքորթություններ: Զուտ գործընթացայնությունը, ինչպես նշում է Ջոն Միլբանկը, պատրանք է: Ցանկացած սոցիալական կարգի հիմքում միշտ ինչ-որ արժեքներ են ընկած: Օրինակ, «չեզոք» աշխարհիկ գործընթացները ճանաչում են միայն անհատին՝ իր իրավունքներով և կրոնական պահանջներով: Սակայն ինչպե՞ս վարվել կրոնական խմբերի իրավունքների և ազատությունների հետ: Թվաբանական մեծամասնությունը միշտ հետապնդելու է սակավաթիվ փոքրամասնությանը: Տվյալ սկզբունքը գրավականն է այն բանի, որ կրոնական ավանդույթների ձայնը երբեք ոչ մի տեղ չի լսվի: Հենց այդ մասին է ասում Թալալ Ասադը՝ վերլուծելով մահմեդականների դրությունը Եվրոպայում: Նման իրավիճակում իր մասին հայտնելու միակ ելքը մեծամասնություն դառնալն է, սակայն այդ դեպքում զրկանքների կենթարկվեն մյուս բոլորը:

Բացի դրանից, այդ ինչպե՞ս է, որ առաջարկվող գործընթացները հենց աշխարհիկ են և ոչ կրոնական: Ամենևին էլ բոլորի համար չէ, որ հարմարավետ է աշխարհիկ գործընթացների պայմաններում: Ու.Կոնոլին արդեն ներմուծել է «մշակութային տառապանքներ» հասկացությունը, երբ ցավն առաջացնում են ոչ թե այս կամ այն սոցիալական զրկանքները, այլ հենց հասարակության կազմակերպական կառուցվածքը: Նման պայմաններում ինչ-որ խումբ վաղ թե ուշ փորձում է հաստատել իր «գործընթացային չեզոքությունը»:

Սակայն գլխավոր խնդիրն այն չէ, թե ինչպես է հնարավոր մեկ հասարակության շրջանակներում տարբեր կրոնների համագոյակցությունը, այլ այն, որ ոչ կաթոլիկությունը, ոչ բողոքականությունը (բացի իր ազատամիտ հոսանքներից), ոչ իսլամը, ոչ ուղղափառությունը կրոններ չեն: Կրոնական ավանդույթները դադարում են կրոն լինել այդ բառի ազատամիտ իմաստով և դառնում են այն, ինչի համար աշխարհիկ զրույցի շրջանակներում անգամ, հավանաբար, համապատասխան բառ չկա: Դրանք կարելի է անվանել այլընտրանքային աշխարհայացք կամ այլընտրանքային արժեքային աշխարհ: Ընդ որում, այլընտրանք ոչ միայն միմյանց, այլև աշխարհիկին՝ որպես ընդամենը մեկ այլ աշխարհայացքի: Եվ այստեղ առաջանում է հիմնարար հարց. տիրույթի շրջանակներում ինչպե՞ս է հնարավոր համագոյակցությունն այդ թվում նաև ինստիտուցիոնալ չափում ունեցող տարբեր արժեքային աշխարհների, որոնց միասնությունն ապահովվում է բացառապես ձևական, բայց ամենևին ոչ չեզոք նորմերով:

XXI դարի սկզբին աշխարհը կրկին համարձակվում է վերադառնալ XVI-XVII դարերի իրավիճակին: Քաղաքացիական միջկոնֆեսիոնալ և միջկրոնական խաղաղությունը կրկին կյանքի ու մահվան խնդիր է: Սակայն, ի տարբերություն այդ դարաշրջանի, աշխարհիկությունն այժմ արդեն, կարծես թե փրկություն չէ:

9. Իսկ հետո՞

Աշխարհիկության նախագիծը վճռական պարտություն կրեց. այն, մասամբ նաև իր կամքով, կորցրեց իրականության նկարագրման՝ բոլորի կողմից ճանաչված մենիշխանությունը: Քանի դեռ այն սահմանում էր, թե ինչ է կրոնը և որտեղ են վերջանում նրա սահմանները, ամեն ինչ նորմալ էր, սակայն հենց որ խոսքը տրվեց կրոններին՝ սկիզբ առան խնդիրներ: Աշխարհիկությունն, անգամ գործընթացայինը, սկսեց ավելի ու ավելի շատ խափանումներ ունենալ, սակայն այդ խափանումներն առայժմ բացառապես տեսական բնույթի են: Նախքան այդ խափանումները գործնական կդառնան, խելամիտ է մշակել դեպքերի հետագա զարգացման տարբերակներ:

Հնարավոր ռազմավարություններից մեկն աշխարհիկ աշխարհայացքի հիման վրա աշխարհիկության հաստատման նոր փորձն է: Նման քայլը ենթադրում է հրաժարում հանդուրժողականության և փոքրամասնությունների իրավունքների հարգանքի գաղափարից: Անհրաժեշտ է ուժով դուրս մղել կրոնները հանրային տիրույթից՝ կրկին վերածելով դրանք «կրոնների»: Նման քաղաքականության կողմնակիցներ կան ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Արևմուտքում: Դրանց թվում կարելի է նշել ամերիկացի մտավորականներ Ռիչարդ Դոկինզին, Քրիստոֆեր Հիթչենսին, Սեն Հարիսին և այլոց: Ռուսաստանում նրանք շատ են այսպես կոչված հակակղերականների շրջանում: Ըստ էության, դա XVII դարից ի վեր Նոր ժամանակների (Մոդեռնի) վարած քաղաքականության շարունակությունն է:

Մեկ այլ տարբերակ է հրաժարումն աշխարհիկությունից, և դրա հետ միասին՝ համընդհանուր միաչափ հանրային տիրույթից: Այսպես, օրինակ, Ջոն Միլբանկը խոսում է «համալիր սոցիալական տիրույթ» վերադառնալու անհրաժեշտության մասին, ինչը ենթադրում է հնարավորություն տարբեր խմբերի համար՝ անկախ գոյատևելու և ինքնուրույն որոշելու սեփական կանոնները: Նրան երկրորդում է քաղաքական տեսաբան Ուիլյամ Կոնոլին, որը հռչակում է անվանական (նոմինալ) բազմակարծությունից իրական բազմակարծությանն անցման անհրաժեշտությունը, ինչը թույլ է տալիս յուրաքանչյուր խմբի պահպանել ինքնությունը ոչ թե անվանապես, այլ իրականում: Այստեղ, իհարկե, միանգամից ծագում են մի շարք հարցեր. եթե անհետանում են ընդհանուր արժեքները, որոնք, թեկուզ ուժով, սակայն պարտադրվում են բոլորին, ապա արդյո՞ք դա չի հանգեցնի միասնական պետության, միասնական ազգի, միասնական ժողովրդի անհետացմանը: Արդյո՞ք չեն խորտակվի առանձին խմբերից կազմված հասարակությունները, որոնց անդամները խոսում են տարբեր լեզուներով և ձգտում տարբեր արժեքների:

Վերջապես երրորդ, մասամբ փոխզիջումային տարբերակը սոցիալական ցանցերի զարգացման ուղին է, երբ ձևականորեն մարդիկ ապրում են կողք

կողքի, սակայն պատկանում են տարբեր ցանցերի, որոնք հաճախ միմյանց հետ չեն շփվում:

Սրանք դեպքերի հետագա զարգացման հնարավոր համարվող տարբերակներից միայն մի քանիսն են: Դրանք կմարմնավորվեն, եթե կրոնները շարունակեն ուժեղացնել իրենց ներկայությունը հասարակությունում, իսկ աշխարհիկության կողմնակիցների թիվը կշարունակի նվազել: Աշխարհիկությունը նույնպիսի հայեցակարգ է, ինչպիսին կրոնական հայեցակարգն է: Դրա համար էլ ծայրահեղականության և մոլեռանդության մասին ճիչերի փոխարեն անհրաժեշտ է կրկին սովորել հրապարակայնորեն պաշտպանել սեփական արժեքները, իդեալները: Չէ՞ որ կրոնների՝ հանրային տիրույթ վերադարձի խնդիրն ինչ-որ մեկընդմիշտ տրված սոցիալական սահմանների խնդիր չէ, այլ՝ տարբեր աշխարհայացքների և դրանցից բխող՝ սոցիալական իրականության շուրջ տարբեր հայացքների խնդիր:

Հունիս, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Biller P.,* Words and the Medviel Notion of “Religion” //Journal of Ecclessiastical History. 1985. *Words and the Medieval Notion* «*Religion*», *Journal of Ecclesiastical History* 36 (*1985*).
2. *Cavanaugh W.T.,* “A fire strong enough to consume the house:” The wars of religion and the rise of the state. *Modern Theology, 11*(4), 1995.
3. *Milbank J.*, «Theology and Social Theory: Beyond Secular Reason». Blackwell Publishing, 2006:
4. *Molnar A.,* The construction of the notion in early modern Europe // Method and Theory in the Study of Religion, vol. 14, 2002.
5. *Кырлежев А.*, Постсекулярная эпоха // Континент, N 120, 2004.
6. Radical Orthodoxy: A New Thelogy (ed. J. Milbank). L., UK: Poutledge, 1998.
7. Религиоведение: Хрестоматия, автор составитель П.И. Костюкович, ООО «Новое знание», Минск, 2000.
8. *Дмитрий Узланер,* “В каком смысле современный мир может быть назван постсекулярным” (http://magazines.russ.ru/continent/2008/136/u20.html), “Трансформации светскости” (http://www.zip.org.ua/2009/01/08/secular/). “Расколдовывание дискурса: Религиозное и светское в языке нового времени” (http://www.intelros.ru/pdf/logos_04_2008/10.pdf).
9. *Григорий Гутнер*, “Секулярность, постсекулярность и универсализм. Замечания к диалогу Хабермаса и Ратцингера” (http://www.standrews.ru/index-ea=1&ln=1&shp=1&chp=showpage&num=1062).

СЕКУЛЯРНАЯ КОНЦЕПЦИЯ

Вардан Асцатрян

Резюме

Обычно секуляризация трактуется в сугубо отрицательном смысле: как «история вычитания», шаг за шагом освобождающая мир от накинутого на него «религиозного покрывала». Этот взгляд предполагает существование как бы «естественно» независимых от религии сфер человеческой деятельности и отдельной от них религиозной сферы, которая столь же «естественно» должна быть ограничена рамками личного благочестия. Но по какому-то недоразумению религия вышла из своих «естественных» пределов и вторглась в нерелигиозные сферы, нарушив их автономию. А процесс секуляризации просто всё возвращает на «свои места». В том числе и религию. Такова общепринятая концепция секуляризации.

В противоположность ей есть другая позиция, которая настаивает на том, что никаких особых, четко отграниченных друг от друга сфер религиозного и нерелигиозного нет, а само такое разграничение вводится лишь секулярным проектом. Функция секуляризации состоит не в том, чтобы всё расставить по местам, а в том, чтобы их создать, а затем убедить публику, что такие, весьма специфические места на самом деле предполагаются «природой вещей», а вовсе не есть какое-то специальное изобретение европейской эпохи последнего периода, не имеющее аналогов в истории. Поэтому религия в современной западноевропейской интерпретации появляется только с развитием процесса секуляризации и, более того, предполагается им.

До внедрения секулярного проекта (примерно с XVIIв.) всё в равной степени могло быть названо религиозным: и политика, и наука предполагали в своей основе не меньшую «религиозность», чем вера в божественное как таковая. В такой ситуации религия, с точки зрения модернистского мировосприятия, была стимулирована секуляризмом, стремившимся, по словам Д.Узланера, «загнать в гетто» альтернативные проекты. Для этого неудобные концепты были промаркированы как «религиозные» и немедленно определены в узкие рамки «личного дела каждого человека».

Но сегодня уже наступил конец эры секуляризации, и то, что было загнано в рамки «религии», стремится выйти за ее пределы и определять жизнь общества в целом. Светскость сегодня уже пытаются представить как нейтральную процедуру, ее пытаются отсоединить от светского мировоззрения, которое начинает справедливо позиционироваться как всего лишь еще один альтернативный взгляд на мир. В публичном пространстве отныне должны господствовать нейтральные нормы и процедуры.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Մերուժան Մարկոսյան[*]

Հոդվածում ներկայացվում են ժամանակակից պետության ազդեցության ոլորտները և ներգործության ուղղությունները, որոնց շարքում ավելի ու ավելի մեծ նշանակություն և կարևորություն են ստանում սոցիալական քաղաքականության հիմնախնդիրները և դրանց լուծումները: Շուկայական տնտեսության անցման առանձնահատկությունները հետհամայնավարական երկրներում մեծապես ազդեցին և պայմանավորեցին այդ երկրների սոցիալական քաղաքականության սկզբունքների ձևավորման և իրականացման վրա:

Ներկայացվում են ներկայիս տնտեսական ճգնաժամի պայմաններում աշխարհի մի շարք պետությունների սոցիալական հակաճգնաժամային միջոցառումները: Ցույց է տրվել ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի Հանրապետության տնային տնտեսությունների և ձեռնարկությունների վրա: Վերջին բաժնում համառոտ քննարկվում են Հայաստանում սոցիալական ոլորտի վերափոխումների արդի հիմնախնդիրները:

1. Պետության սոցիալական քաղաքականությունը շուկայական հարաբերությունների համակարգում

Հասարակության բազում սոցիալ-տնտեսական հարցերի լուծման ժամանակ կարևոր դեր է խաղում շուկան: Նախ՝ այն բաշխում է եկամուտները՝ ըստ աշխատանքի վերջնական արդյունքների: Երկրորդ՝ այն բարձրացնում է ողջ տնտեսության արդյունավետությունը, ստեղծում հզոր նյութական պաշար ողջ հասարակության բարեկեցության բարձրացման համար: Եվ երրորդ՝ հենց շուկան է թելադրում արտադրողներին ստեղծել բարիքներ՝ մարդկանց պահանջմունքներին համապատասխան:

Սակայն շուկայական հարաբերությունների համակարգը կատարյալ չէ և չի կարող հասարակության բոլոր անդամների համար սոցիալական երաշխիքներ ապահովել: Այս թերությունը հաղթահարելու համար է գործում պետության սոցիալական քաղաքականությունը: Վերջինիս նպատակը հասարակական կյանքի սոցիալ-տնտեսական պայմանների կարգավորումն ու բարելավումն է, բնակչության բոլոր անդամների բարեկեցության ապահովումը,

[*] Կորպորատիվ կառավարման բարձրագույն դպրոցի վերլուծաբան, տնտեսագիտության թեկնածու:

ինչպես նաև զուտ շուկայական տնտեսության վերածումը սոցիալական ուղղվածությամբ շուկայական տնտեսության [1, c. 286]:

Սոցիալական քաղաքականության մասին խոսելիս հասկանում ենք պետության ձեռնարկած գործողությունները՝ ուղղված հասարակության տարբեր անդամների և խմբերի եկամուտների բաշխմանն ու վերաբաշխմանը [2, c. 600-604]: Այս կերպ սահմանվում է սոցիալական քաղաքականությունը նեղ իմաստով: Լայն իմաստով՝ սոցիալական քաղաքականությունը մակրոտնտեսական կարգավորման ուղղություններից մեկն է, որը կոչված է ապահովելու հասարակության բոլոր անդամների սոցիալական կայունությունը և ստեղծելու որքան հնարավոր է միանման «ելակետային պայմաններ» երկրի ողջ բնակչության համար:

Ըստ շվեյցարացի տնտեսագետ Սիմոն դը Սիսմոնդիի (1773-1842)՝ «պետությունը պետք է ձգտի այնպիսի իրավիճակի, որը կապահովի բավարարվածություն, երջանկություն, ուրախություն ու հանգիստ և՛ աղքատներին, և՛ հարուստներին, և միևնույն ժամանակ այդ իրավիճակից պետք է ոչ ոք չտուժի»: Նման մոտեցումը ենթադրում է սոցիալական քաղաքականության հետևյալ երկու ուղղությունները *(Գծապատկեր 1).*

Գծապատկեր 1

Պետության սոցիալական քաղաքականության հիմնական ուղղությունները [1, c. 285-287]



Շատ երկրներ միայն նպաստների տրամադրմամբ չեն սահմանափակվում՝ որպես չքավորներին, գործազուրկներին, անաշխատունակներին աջակցելու միջոց: Շատերին կարելի է օգնել նաև այլ ճանապարհով. օրինակ՝ կույրերին կամ հաշմանդամներին համապատասխան աշխատանքային գործունեության մեջ ընդգրկելով: Բացի այդ, մարդու համար ավելի արժեքավոր է վաստակած գումարը, քան ստացածը, և լիարժեք կյանքին իր մասնակցության աստիճանի գիտակցումը:

Արևմտյան երկրներում մեծ տնտեսական ճգնաժամից (1929-1933թթ.) հետո հասարակությունը գործնականում համոզվեց, որ տարերային շուկայական հարաբերությունների մեխանիզմը կարող է հանգեցնել տնտեսության ծանր անկումների, խրոնիկ գործազրկության և աղքատության ցուցանիշների բարձրացման: Այդ իսկ պատճառով, գործնական միջոցառումներ սկսեցին ձեռնարկվել ճգնաժամի սոցիալական հետևանքների կանխարգելման ու մեղմացման ուղղությամբ: 20-րդ դարի 40-ական թվականների վերջից մինչև 50-ականների սկիզբը շատ երկրների պաշտոնական դիրքորոշումը դարձավ *«բարեկեցության պետություն» (“Welfare state”)* հայեցակարգը, որն առաջ քաշեց աղքատ բնակչության համար սոցիալական պաշտպանության լայնամասշտաբ միջոցառումների կիրառման անհրաժեշտության գաղափարը:

«Բարեկեցության պետություն» ծրագրերը ներառում են ինչպես բնակչության տարբեր շերտերին առնչվող սոցիալական ապահովագրության ծրագրեր, այնպես էլ միջոցառումների համակարգ նվազագույն եկամուտ ունեցող ընտանիքների համար, այդ թվում՝ ապահովագրում ծերությունից, հիվանդություններից, գործազրկության նպաստների տրամադրում, երեխաներին, կույրերին, անաշխատունակներին և այլ կարիքավորներին աջակցելու համար պետական աջակցության լրացուցիչ ծրագրերի մշակում, ինչպես նաև առևտրային կտրոնների տրամադրում, բնակտարածության ապահովում և այլ սոցիալական ծառայությունների մատուցում:

«Բարեկեցության պետություն» համակարգի գործունեության ընթացքում վերջին ժամանակաշրջանում առաջ են եկել հետևյալ խնդիրները. նախ՝ անընդհատ աճում է սոցիալական ծախսերի ծանրաբեռնվածությունը պետական բյուջեի վրա, և հետևաբար՝ մեծանում է բյուջեի պակասուրդը, երկրորդ՝ աղքատ բնակչության շրջանում պակասում են աշխատանք գտնելու և աշխատելու խթաններն ու ցանկությունը: Խնդիրն այն է, որ շուկայական հարաբերությունների համակարգում սոցիալական աջակցության զարգացած համակարգը հանգեցնում է նրան, որ բնակչության անապահով խավն ավելի ու ավելի է ծուլանում իր համար աշխատանք փնտրելու գործում և գերադասում է նպաստ ստանալ, քան գնալ աշխատելու, քանի որ երբեմն ապրանքների ստացման կտրոնները, միայնակ մայրերին, գործազուրկներին տրվող նպաստները միասին շատ չնչին են տարբերվում այն գումարից, որը կստա-

նար, եթե աշխատեր: Միևնույն ժամանակ, հնարավոր է այնպիսի իրավիճակ, որ երբ այդ մարդն աշխատի, կզրկվի նպաստների որոշակի ծավալից և կհայտնվի աղքատության թակարդում [3, c. 216, 220]:

Պետության գործունեության սոցիալական ուղղվածությունը՝ իբրև սոցիալական պետության բնորոշ գիծ, պետք է գործնական դրսևորվի սոցիալական քաղաքականության իրականացման ընթացքում: Սոցիալական պետության սոցիալական քաղաքականությունը պետության տնտեսական քաղաքականության հիմնական համակարգող բաղադրիչն է, որն իր մյուս բաղադրիչների գործունեությունն ուղղորդում է սոցիալական արդարության, պաշտպանվածության, բարձր կենսամակարդակի ապահովման նպատակների իրականացմանը [4, c. 380-412]:

Այժմ դիտարկենք սոցիալական քաղաքականության մասին գրականության մեջ մատուցվող «բարեկեցության պետության» մի քանի մոդել: Լայն տարածում ունի Ռ.Թիթմուսի դասական մոտեցումը, որը «բարեկեցության պետության» մոդելները դասակարգում է ըստ բնակչությանը տրվող երաշխիքների մակարդակի: Առանձնացվում են հետևյալ մոդելները՝ մնացորդային, ինստիտուցիոնալ և արտադրական ձեռքբերումների [5, էջ 55-57]:

Մնացորդային մոդելը ենթադրում է այնպիսի պետության տիպ, որը հիմնված է ինքնապահովման սկզբունքի, գաղափարի վրա, երբ նորմալ պայմաններում մարդիկ չեն դիմում օգնության և ապահովում են իրենց՝ հիմնվելով սեփական հնարավորությունների վրա: Օգնությունն այս պայմաններում նշանակվում է միայն մարդկանց այն կատեգորիաներին, ովքեր զանազան պատճառներով ի վիճակի չեն ապահովել իրենց: Սոցիալական ապահովությունն այս իմաստով ունի մնացորդային բնույթ, քանի որ օգնությունը տրվում է միայն ամենակարիքավորներին:

Ինստիտուցիոնալ մոդելում պետության ռազմավարությունն ուղղված է մարդկանց ունեցած ռեսուրսների համահարթեցմանը: Եթե մնացորդային մոդելում սոցիալական ապահովությունը նպատակ ունի բավարարել միայն նվազագույն պահանջմունքները, ապա ինստիտուցիոնալ մոդելը կանգ չի առնում նվազագույնի վրա, դուրս է գալիս դրա շրջանակներից՝ փորձելով այդպիսով նվազեցնել սոցիալական անհավասարության աստիճանը: Մնացորդային մոդելում սոցիալական պաշտպանությունն ամբողջությամբ կախվածության մեջ է գտնվում մարդու անհատական հնարավորություններից, մինչդեռ ինստիտուցիոնալ մոդելում հիմք է ընդունվում ծագող սոցիալական հիմնախնդիրների համար կոլեկտիվ պատասխանատվությունը:

Արտադրական ձեռքբերումների մոդելը մշակվել է մնացորդային և ինստիտուցիոնալ մոդելներից ավելի ուշ: Այն հիմնված է սոցիալական քաղաքականության՝ որպես տնտեսական աճի պահպանման միջոցի, ընկալման վրա: Այս մոդելի ցայտուն օրինակ է սոցիալական ապահովագրության գերմանական

համակարգը: Այստեղ կենսաթոշակների մակարդակը սերտորեն կապվում է վճարվող ներդրումների մակարդակի հետ և, հետևաբար, շեշտը դրվում է այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են աշխատանքային ստաժը և արտադրողականությունը: Իրականում այս մոդելին համապատասխանող պետությունը հիմնվում է մարդու տնտեսական ակտիվության վրա: Օգնությունն այսպիսի պետությունում նախատեսված է միայն մարդկանց այնպիսի կատեգորիաների համար, ովքեր ակտիվ չեն և դրանով իսկ չեն հավաքել համապատասխան ապահովագրական ստաժ սոցիալական ապահովագրության ծրագրի շրջանակներում: Այս մոդելը նման է մնացորդայինին, սակայն մի շարք սկզբունքային տարբերություններով, որոնցից առավել կարևորն այն է, որ սոցիալական ապահովության երաշխիքների զարգացումը դրվում է հիմնականում պետության վրա, մինչդեռ մնացորդայինում սոցիալական ծրագրերի զարգացման մնացորդային արտոնությունը պատկանում է մասնավոր հատվածին:

Հետաքրքիր է նաև «բարեկեցության պետության» Գ.Էսպինգ-Անդերսոնի դասակարգումը, որը, կախված քաղաքական գաղափարախոսությունից, առանձնացնում է այնպիսի «բարեկեցության վարչակարգեր», ինչպիսիք են ազատականը և սոցիալ-ժողովրդավարականը [5, էջ 57-65]:

Ազատական մոդելի համար բնութագրական է սոցիալական ապահովագրության, համընդհանուր պետական տրանսֆերտների, ինչպես նաև կարիքավորության ստուգման ընթացակարգի վրա հիմնված կենսաթոշակների ցածր մակարդակը: Եկամտի պահպանման սոցիալական ծրագրերը հիմնականում կողմնորոշված են դեպի ամենաաղքատները: Այս մոդելում ընդգծվում է աշխատանքային էթիկայի ավանդական ազատական նորմերի կարևորությունը. պաշտպանության մակարդակն այնքան ցածր է, որ չի խթանում մարդկանց՝ գերադասելու կենսաթոշակով ապրելը աշխատանքային գործունեությունից: Այստեղ պետությունը նախապատվությունը տալիս է շուկային՝ վարկավորելով սոցիալական պաշտպանության մասնավոր ծրագրերը:

Բարեկեցության սոցիալ-ժողովրդավարական մոդելով պետություններում ժողովրդավարական ուժերը սոցիալական իրավունքների զարգացման շարժիչն են: Պետությունը հիմնվում է «բոլոր քաղաքացիներն ունեն սոցիալական ապահովության իրավունք» և «բոլոր աշխատավորներն ունեն աշխատավարձից կախված արտոնություններ ստանալու իրավունք» սկզբունքների վրա: Լրիվ զբաղվածության ապահովումը պետության առաջնային քաղաքական խնդիրներից է: Սոցիալ-ժողովրդավարները գտնում են, որ պետությունը պետք է ձգտի անհավասարության նվազեցման, իսկ սոցիալական ապահովությունը չպետք է հանգեցվի նվազագույն պահանջմունքների բավարարման: Ընդհակառակը, քաղաքացիների պաշտպանությունը պետք է իրականացվի բարձր մակարդակով: Բացի այդ, սոցիալական ծառայություններով ապահովվածությունը պետք է հիմնվի համընդհանրության և համերաշխության սկզբունքի վրա:

Ուղղորդվելով վերը նշված դասակարգմամբ՝ դիտարկենք Արևմտյան Եվրոպայի երկրներում գոյություն ունեցող սոցիալական քաղաքականության մոդելները՝ վերլուծելով այդ երկրների սոցիալական քաղաքականության ինչպես հիմնական ձեռքբերումները, այնպես էլ դժվարությունները:

Շվեդիայի սոցիալ-ժողովրդավարական մոդել («շվեդական մոդել») [6, c. 54]: Տվյալ մոդելն այս կամ այն չափով ներառված է սկանդինավյան երկրների սոցիալական քաղաքականության մեջ: Շվեդական մոդելը ստեղծվել է 1960-ական թթ. վերջին՝ Շվեդիայի անկախ պետականության ձեռքբերման հետ, որն այժմ ամենազարգացած սոցիալ-տնտեսական հարաբերություններ ունեցող երկրներից է: Շվեդական մոդելում գլխավոր նպատակը լրիվ զբաղվածության և եկամուտների համահարթեցման ապահովումն է: Այս մոդելի համընդհանրությունն արտահայտվում է սոցիալական պաշտպանության համընդհանրությամբ և հանրամատչելիությամբ, ինչը տարածվում է ողջ բնակչության վրա [7, c. 57]:

Սոցիալական ապահովությունն այս համակարգում գտնվում է բարձր մակարդակի վրա և նախատեսում է գործազրկության, երեխաների և մի շարք այլ նպաստների հատկացում: Այստեղ առաջ եկող գործազրկության նպաստների ծախսերի կրճատումն իրականացվում է աշխատանքի տեղավորման զարգացած ծառայությունների հաշվին: Անկախ ծնողների եկամուտներից՝ երեխաները ստանում են ամենամսյա նպաստ մինչև 18 տարին լրանալը[1]:

Շվեդիայում միջնակարգ և բարձրագույն կրթությունը, ինչպես նաև որակավորման բարձրացման և այլ կրթական ծրագրերն իրագործվում են անվճար հիմունքներով: Այս երկիրը, առհասարակ, կրթության վրա ծախսում է ՀՆԱ ավելի մեծ մասը, քան ցանկացած այլ երկիր, և կրթվածության մակարդակով զբաղեցնում առաջին տեղերից մեկը: Կրթության հանրամատչելիության պայմաններում կադրերի վերապատրաստումը և մասնագիտական որակավորման բարձրացումը զգալիորեն նվազեցնում են գործազրկության մակարդակը և արտացոլում բնակչության լրիվ զբաղվածության քաղաքականությունը:

Գերմանիայի պահպանողական-կորպորատիվ մոդել: Այս մոդելը տարածված է Եվրոպայի մի շարք պետություններում (Գերմանիա, Ֆրանսիա, Ավստրիա, Բելգիա): Սոցիալական ապահովության ոլորտում Գերմանիայում գործում են չորս տեսակի սոցիալական ապահովագրություն՝ կենսաթոշակային, բժշկական, գործազրկության և դժբախտ պատահարների: Սոցիալական ապահովագրությունը ֆինանսավորվում է գործատուների հետ համատեղ, ինչպես նաև վարձու աշխատողների կողմից, և տարբերակված է ըստ գործունեության տեսակների:

Այս մոդելում առկա է պետության և մասնավոր հատվածի զուգակցում սոցիալական խնդիրները լուծելիս, որտեղ առանձին ձեռնարկատիրոջ պատասխանատվությունը փոխարինված է պարտադիր կոլեկտիվ պատասխա-

[1] *E.Palmer,* The Swedish Pension Reform Model: Framework and Issues, June 2000, (www.worldbank.com).

նատվության համակարգով, որը կարգավորվում և վերահսկվում է պետության կողմից [3, c. 5]:

Սոցիալական ապահովության համակարգը ներառում է նաև պետական միջոցներ, որոնք տրվում են երեխաների նպաստների, փախստականների օգնության, կրթաթոշակի, երիտասարդների օգնության, բուժման նպաստի, կենսաթոշակային հատկացումների, պատերազմում զոհվածների ընտանիքների օգնության, հաշմանդամների, ինչպես նաև սակավ ապահովված քաղաքացիների սոցիալական օգնության տեսքով:

Առողջապահության համակարգում գործում է անհրաժեշտ բժշկական ապահովագրության համակարգը, որտեղ ընդգրկված է բնակչության մոտ 90%-ը, իսկ բնակչության 8%-ը ներառված է մասնավոր փոխհարաբերություններում, և 2% չունևոր քաղաքացիների համար վճարում է պետությունը [8, c. 64]:

1990-ական թթ. վերջին Գերմանիայի սոցիալական ոլորտի զարգացածությունը հասավ որոշակի գագաթնակետի, հետևաբար այն այժմ, ինչպես և շվեդական մոդելը, կարիք ունի լուրջ արդիականացման: Առաջիկայում Գերմանիայում նախատեսվում են գործազրկության նվազեցում և սոցիալական բարեփոխման իրականացում, որտեղ պետական սոցիալական ապահովագրության հետ մեկտեղ կզարգանա ապահովագրության մասնավոր համակարգը:

Մեծ Բրիտանիայում սոցիալական ապահովության ծրագրերը խիստ անհատականացված են, դրանց մեծամասնությունը մասնավորեցված է: Կարիքավոր բոլոր խմբերի հավասարության փոխարեն ներդրված է բնակչության առանձին կատեգորիաներին (կենսաթոշակառուներ, հաշմանդամներ, հիվանդ և անգործունակ մարդիկ, ոչ լրիվ, ինչպես նաև բազմազավակ, ցածր եկամուտ ունեցող ընտանիքներ) ընտանեկան օժանդակության սկզբունքը:

Սոցիալական արդարության վերաբերյալ կան պատմականորեն ձևավորված երեք տեսակի չափորոշիչներ. *համահարթող* (կենտրոնական պլանավորման ժամանակաշրջան), *շուկայական* (երբ եկամուտների բաշխումն ըստ արտադրության գործոնների համարվում էր արդարացի) և *սոցիալիստական* (որտեղ արդարացի է համարվում միայն ըստ աշխատանքի բաշխումը, սակայն այն պայմանով, որ հասարակության բոլոր անդամներն ունեն որոշակի ելակետային հավասար երաշխիքներ) [9, c. 501]:

Սոցիալական նպատակների հայտարարումը իբրև պետության գործունեության հիմնական գերակայություն դեռևս չի նշանակում, որ անցումային տնտեսությունում արդեն ստեղծված է և գործում է սոցիալ-վերաբաշխողական համակարգը, որը բնորոշ է սոցիալական պետության սկզբունքներին: Քանի որ ցանկացած տնտեսական համակարգում սոցիալական քաղաքականության էությունը դրսևորվում է իր կատարած գործառույթների միջոցով, այն է՝ *տնտեսական, վերաբաշխողական, պաշտպանական, գաղափարախոսական և այլն* [4, c. 380], ապա անհրաժեշտ է դիտարկել սոցիալական քաղաքա-

կանության հիմնական գործառույթների փոփոխություններն անցումային տնտեսությունում, որպեսզի պատկերացում կազմենք, թե որքանով են իրագործվել կամ շեղվել անցումային տնտեսությամբ երկրների սոցիալական քաղաքականությունները սահմանված նպատակներից:

Շուկայական տնտեսության անցման ընթացքում փոխվեց մինչև վերափոխումը գոյություն ունեցող սոցիալական քաղաքականության տնտեսական գործառույթը, որն այն ժամանակ հիմնական նպատակային գործառույթն էր: Սոցիալական քաղաքականության տնտեսական գործառույթով բարենպաստ սոցիալական պայմաններ էին ստեղծվում, որպեսզի ապահովվեին տնտեսական աճի բարձր տեմպեր, որին համապատասխանում էր կենտրոնական կարգավորմամբ սոցիալական պաշտպանության մեխանիզմը: Վերջինիս պարագայում ապահովվում էին նվազագույն սոցիալական չափորոշիչները, ինչն էլ սոցիալիստական պետություններին հնարավորություն էր տալիս տնտեսելով, խնայելով սպառման ծախսերը՝ ռեսուրսներն ուղղել տնտեսության ներդրումային հատված:

Վերոնշյալ նպատակին էր ծառայում նաև սոցիալական քաղաքականության վերաբաշխող գործառույթը՝ ուղղված եկամուտների սահմանափակմանը և դրանց հավասարեցմանն ու համահարթմանը՝ տնտեսության կոնկրետ ճյուղերի համար սահմանելով համապատասխան հաստիքային դրույքաչափերի ու աշխատանքի նորմավորման հստակ համակարգեր: Ինչպես նաև այդ նպատակին էր ծառայում սոցիալական քաղաքականության պաշտպանական գործառույթը, որը փոխհատուցում էր աշխատանքի ցածր վարձատրությունն առաջին անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների համար դոտացիաների տրամադրմամբ՝ ապահովելով բնակչության այնպիսի կենսամակարդակ, որն անհրաժեշտ է աշխատուժի վերականգնման համար՝ չխոչընդոտելով տնտեսական աճը:

Սոցիալական քաղաքականության գաղափարախոսական գործառույթը, որի էությունը սոցիալիստական համակարգի առավելությունների ցուցադրումն էր, այն է՝ աշխատանքի, անվճար կացարանի, կրթության, առողջապահության, մշակույթի սոցիալական երաշխիքների տրամադրումը, չեզոքացնում էր նախապես առկա բարձր սոցիալական լարվածությունը, որն առաջանում էր եկամուտների հավասարեցնող վերաբաշխման և աշխատանքի ցածր վարձատրության պատճառով, և այդ ճանապարհով չեզոքացնում էին քաղաքական արգելքները տնտեսական աճի ճանապարհին:

Շուկայական տնտեսության անցման ժամանակ սոցիալական քաղաքականության գերակա գործառույթներն են դառնում պաշտպանականը և վերաբաշխողականը, որոնք աստիճանաբար փոխարինում են մինչ վերափոխումը գոյություն ունեցող սոցիալական քաղաքականության տնտեսական ու գաղափարախոսական ուղղություններին, որն էլ դառնում է անցումային շրջանի սոցիալական քաղաքականության հիմնական առանձնահատկություններից մեկը:

Անցումային ժամանակաշրջանի սոցիալական քաղաքականության առանձնահատկությունը դրա բարձր կախվածությունն է սուբյեկտիվ գործոններից, ինչպիսիք են քաղաքական ընտրությունները և գաղափարական նախապատվությունները: Այդ կախվածությունն ավելի վառ արտահայտվում է անկայուն, ինքնակարգավորմանն անընդունակ անցումային տնտեսություններում, քան կայուն, օբյեկտիվ օրինաչափություններին ենթարկվող, զարգացած շուկայական տնտեսություններում:

Պ.Սամուելսոնի և Վ.Նորդհաուսի կարծիքով՝ հարուստներից աղքատներին եկամուտների վերաբաշխման մեխանիզմների կիրառմամբ պետությունը կարող է վնաս հասցնել տնտեսական արդյունավետությանը և կրճատել վերաբաշխման ենթակա ազգային եկամտի ծավալը [10, c. 410]: Տվյալ տեսակետը ենթարկվում է հիմնավորված քննադատության ինստիտուցիոնալ և նեոքեյնսական ուղղությունների ներկայացուցիչների կողմից, որոնք կարծում են, թե ժամանակակից՝ դեպի մարդկային կապիտալն ուղղված տնտեսությունում աճում է սոցիալական գործոնների և հետևաբար սոցիալական քաղաքականության դերը կայուն տնտեսական զարգացման ապահովման գործընթացում:

Անցումային շրջանում սոցիալական քաղաքականության բնորոշ գծեր են բազմատարրությունը, այլընտրանքայնությունը, տարբեր տարատեսակների առկայությունը, անկայունությունը, երբ կարճ ժամանակահատվածում իրականացվող անցումային գործընթացներում կարող են տրամագծորեն փոխվել սոցիալական քաղաքականության նպատակները, բովանդակությունն ու դերը: Տվյալ իրավիճակի պատճառն անցումային շրջանի սոցիալական քաղաքականության կախվածությունն է սուբյեկտիվ գործոններից (օրինակ՝ տնտեսական զարգացման ընտրված դոկտրինը, հասարակությունում առկա քաղաքական իրավիճակը և այլն), ինչպես նաև օբյեկտիվ սահմանափակումների առկայությունը:

Սոցիալական քաղաքականության նմանօրինակ վերափոխումների արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել անցումային վերափոխումների սոցիալական օգուտների և սոցիալական ծախքերի հարաբերակցությունը՝ հիմնվելով վերափոխումների առաջին տասնամյակի փորձի վրա:

Որևէ իրավիճակից մյուսին անցնելիս հասարակության սոցիալական օգուտը հասարակության բարեկեցության աճն է, որը հասարակության բոլոր անդամների կամ նրանց մի խմբի բարեկեցության բարձրացումն է՝ առանց մյուսների բարեկեցության մակարդակի նվազման: Ընդ որում, ընթացիկ և մինչև վերափոխումը գոյություն ունեցող բարեկեցության մակարդակներն իրար հետ համադրելն արդարացի ու ճիշտ չէ. ընթացիկ բարեկեցության մակարդակը հարկավոր է համեմատել այն իրավիճակի հետ, որում կհայտնվեր հասարակությունը, եթե այդ շուկայական վերափոխումները չիրագործվեին, կամ այն իրավիճակի հետ, որը կառաջանար լավագույն այլընտրանքային քաղաքականության իրականացման արդյունքում միևնույն ելակետային

պայմանների առկայության դեպքում [11, c. 267]:

Անցումային տնտեսությունում պետության հիմնական սոցիալական ուղղվածությունը պաշտպանական գործառույթն է:

Անցումային տնտեսության սոցիալական պաշտպանության ընդհանուր մեխանիզմն ունի *Գծապատկեր 2-ում* պատկերված սխեմատիկ տեսքը.

Գծապատկեր 2

Անցումային տնտեսությունում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը



Համակարգը հիերարխիկ բուրգ է ներկայացնում՝ բաղկացած սոցիալական պաշտպանության մի քանի մակարդակից: Բուրգի գագաթի նեղացումը նշանակում է այս կամ այն սոցիալական պաշտպանության մակարդակում ընդգրկված մարդկանց թվաքանակի կրճատում: Այս համակարգի հիմքը կազմում է պետության սոցիալական երաշխիքների համակարգը:

Չնայած այս երաշխիքները համընդհանուր բնույթ են կրում, որոնք ամրագրված են երկրների սահմանադրությունների մեջ, դրանց մատչելիությունն աստիճանաբար նվազում է սոցիալական ծառայությունների շուկայականացման գործընթացին զուգահեռ: Ակնհայտ է, որ երաշխիքների համակարգի մատչելիության պահպանման համար անհրաժեշտ է, որ վճարովի ծառայությունների աճի հետ մեկտեղ ավելանան բնակչության եկամուտները, և, հատկապես, տեղի ունենա իրական եկամուտների աճ:

Սոցիալական պաշտպանության համակարգի հաջորդ տարրը պետական սոցիալական ապահովությունն է, որն, ի տարբերություն սոցիալական երաշխիքների, հանդես է գալիս իբրև արձագանք սոցիալական ռիսկերին, և այն նախատեսված է ոչ բոլորի համար, այլ միայն նրանց համար, ովքեր

սոցիալական ռիսկի զոտում են:

Սոցիալական ապահովությունը հանդես է գալիս երկու կազմակերպա-իրավական ձևով՝ պետական (պարտադիր) սոցիալական ապահովագրություն և սոցիալական աջակցություն:

Պետության սոցիալական ապահովագրության մեխանիզմը մի կողմից՝ հիմնվում է գործատուների և աշխատողների կողմից արտաբյուջետային ֆոնդեր կատարվող պարտադիր ապահովագրական հատկացումների հավաքագրման, մյուս կողմից՝ այդ ֆոնդերից համընդհանրության սկզբունքով վճարվող սոցիալական տրանսֆերտների վրա [12, c. 238]:

Տնտեսապես թույլ զարգացած երկրներում սոցիալական ապահովագրության համակարգերը, անգամ միայն ֆինանսական հնարավորություններից ելնելով, կարող են ապահովել սոցիալական երաշխիքների հարաբերական ցածր մակարդակ: Տնտեսության արդյունավետության բարձրացումը հնարավորություն է տալիս ընդլայնել սոցիալական ապահովագրության տեսակները, մեծացնել տրամադրվող օգնության չափերը, կատարելագործել գործող համակարգը [13, p. 10]:

Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրների և անցումային տնտեսությամբ «հաջողված» երկրների փորձը վկայում է այն մասին, որ ինքնապաշտպանության ու ինքնապահովման լավագույն մեխանիզմը աշխատանքն է: Այդ պատճառով եկամուտների վերաբաշխման քաղաքականությունը պետք է զուգակցվի զբաղվածության քաղաքականության հետ, երբ սոցիալական աջակցության միջոցները համակցվում են նոր աշխատատեղերի ստեղծման հետ: Պետությունը մի կողմից՝ պետք է համապատասխանեցնի նվազագույն աշխատավարձը նվազագույն սպառողական զամբյուղի ծավալի հետ, մյուս կողմից՝ մոտեցնի աշխատավարձի մակարդակը աշխատանքի արտադրողականությանը [4, c. 411]:

Եթե առաջին պայմանը լրիվ կախված է պետության սոցիալական երաշխիքներից, ապա երկրորդի իրականացումը պետք է բխի պետության, ձեռնարկատիրոջ և աշխատողի փոխադարձ համագործակցության արդյունքում՝ աշխատանքային կոլեկտիվների և ձեռնարկատերերի միջև եկամուտների առավել արդարացի բաշխման միջոցով, ասել է թե՝ պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի թույլ չտա ձեռնարկատիրոջը, օգտվելով աշխատանքի շուկայում իր ունեցած մենաշնորհային դիրքից, կանխել, խոչընդոտել աշխատուժի գնի աճը: Եթե պետությունը շարունակի իրեն զերծ պահել բնակչության ցածր աշխատանքային եկամուտների հիմնախնդրի լուծումից, ապա ստիպված կլինի փոխհատուցել ցածր աշխատանքային եկամուտները սոցիալական տրանսֆերտների ծավալի աճի միջոցով, որը ոչ միշտ է հաջողությամբ պսակվել, ինչպես ցույց տվեց Ռուսաստանի փորձը [14, c. 31]:

Պետությունը շուկայական հարաբերություններում պետք է միջամտի մասնավոր տնտեսական կյանքին այնպես, որ աջակցի կենսամակարդակի

բարձրացմանը, բնակչության առողջության բարելավմանը, կրթության և մշակույթի ոլորտների բարելավմանը, մարդկանց անվտանգության ապահովմանը և բարենպաստ բնապահպանական պայմանների ձևավորմանը [15, c. 247-248]:

2008թ. կեսերից սկիզբ առած և մեծ արագությամբ ծավալված ճգնաժամի «հայրենիքը» ԱՄՆ-ն է: Այն սկզբնավորվեց որպես ֆինանսական (քանի որ դրսևորվեց հիփոթեքային շուկայում), այնուհետև տարածվեց տնտեսության մյուս ոլորտներում և վերածվեց տնտեսական ճգնաժամի: Նշված ճգնաժամի հաջորդ կարևոր առանձնահատկությունն այն էր, որ այն ստացավ գլոբալ բնույթ և տարածման մասշտաբներով ընդգրկեց աշխարհի բոլոր պետություններին: Ներկայիս ճգնաժամի հաջորդ բնորոշ հատկանիշն այն է, որ ստեղծված պայմաններում դրանից դուրս գալու լոկոմոտիվի դերը սկսեց կատարել պետությունը: Դրանով իսկ տնտեսության վրա մեծացավ պետության կարգավորման ուժը. շուկայական ինքնակարգավորման հնարավորությունները զգալիորեն նվազեցին: Բավական է նշել, որ աշխարհի առաջատար երկրների կողմից իրականացված հակաճգնաժամային միջոցառումների իրականացման արդյունքում շատ կարճ ժամանակահատվածում՝ ընդամենը 1 տարվա ընթացքում, այդ երկրներում պետական սեփականության բաժինը 8-12%-ից հասավ սեփականության ընդհանուր ծավալի 1/3-ին:

Մեծ հաշվով աշխարհի պետությունների կողմից իրականացվող հակաճգնաժամային միջոցառումները կարելի է խմբավորել 2 խմբում, երբ խթանվում է առաջարկը, և երբ խթանվում է պահանջարկը: Մենք ավելի շատ հակված ենք երկրորդ մոտեցմանը, որն ավելի շատ ունի շուկայական կամ սոցիալական ուղղվածություն: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ, ի տարբերություն պլանային (հրամայական) տնտեսության, որտեղ արտադրողը (առաջարկ ստեղծողն) ուներ թելադրող դեր, շուկայական տնտեսության ժամանակ տնտեսության շարժող ուժը սպառողն է (պահանջարկ ձևավորողը): Ահա թե ինչու առավել արդյունավետ կարելի է համարել այն պետությունների վարած հակաճգնաժամային ծրագրերը (միջոցառումները), որոնք ուղղված և հասցեագրված են հենց սպառողին: Ստորև բերված տարբեր երկրների կողմից իրականացվող հակաճգնաժամային սոցիալական միջոցառումներն ընդհանուր գծերով որոշակի պատկերացում են տալիս այդ երկրների կատարած քայլերի մասին: Անկասկած է նաև, որ դեռևս վաղ է խոսել այս կամ այն երկրում իրականացված հակաճգնաժամային սոցիալական քաղաքականության արդյունավետության մասին, քանի որ նախ՝ այդ երևույթը դժվար չափելի է, և երկրորդ՝ դեռևս բավարար ժամանակ չի անցել ամբողջական պատկերացում կազմելու իրականացվող քաղաքականության արդյունավետության վերաբերյալ: Բոլոր դեպքերում բերված տեղեկություններն օգտակար կարող են լինել նաև մեզանում իրականացվող հակաճգնաժամային սոցիալական միջոցառումների զինանոցը հարստացնելու և, սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները հաշվի առնելով, նաև դրանք իրականացնելու համար:

Աղյուսակ 1

Աշխարհի տարբեր երկրներում կիրառվող հակաճգնաժամային սոցիալական միջոցառումները

Դրամական բնույթի միջոցառումներ	*Ոչ դրամական բնույթի միջոցառումներ*
ԱՄՆ	
1. ԱՄՆ նախագահի աշխատակազմը հայտարարեց, որ *TARP* ծրագրի երկրորդ մասը առավելապես կուղղվի կազմակերպությունների և սպառողների վարկավորմանը, այլ ոչ թե բանկերի օգնությանը: Տրամադրվող գումարներից մոտավորապես $100 մլրդ-ը պլանավորվում է օգտագործել բնակարանների շուկայում ճգնաժամի հետևանքների մեղմմանը, մասնավորապես, այն բնակարանատերերի աջակցմանը, որոնց սպառնում է հեռացում՝ կապված հիփոթեքի գծով անձնական անվճարունակության հետ: Դրա հետ մեկտեղ *Bank of America*-ն *TARP*-ի շրջանակներում $20 մլրդ-ի չափով միջոցներ կստանա և $118 մլրդ գումարի երաշխիքներ, որը նախօրոք առանձնացված $15 մլրդ-ի հետ բանկին հնարավորություն կտա վերականգնել ֆինանսական դրությունը *Merrill Lynch*-ի ձեռքբերումից հետո[1]: 2. ԱՄՆ պետական գանձապետարանը հունվարի վերջին 700 միլիարդանոց խրախուսող փաթեթից առանձնացրեց $386 մլրդ: Ֆինանսական օգնություն ստացան երկրի 14 նահանգներից 23 բանկեր, իսկ ֆինանսական ինստիտուտների ընդհանուր թիվը, որոնք պետության կողմից աջակցություն են ստացել խրախուսվող փաթեթի շրջանակում, արդեն հասել է 317-ի: 3. Հունվարի վերջին Կոնգրեսը հավանության է արժանացրել տնտեսության խրախուսման $819 մլրդ արժողությամբ ծրագիրը: Օրենսդրությունը թույլ է տալիս $544 մլրդ տրամադրել ենթակառուցվածքային ծախսումներին, ինչպես նաև $275 մլրդ՝ ֆիզիկական անձանց և բիզնեսի հարկային բեռի մեղմացմանը[2]: 4. Ուժի մեջ է մտել երկրի տնտեսության օգնության $787 մլրդ արժողությամբ օրենքի նախագիծը[3]: 5. Հրապարակվել է բնակարանային շուկային աջակցման ծրագիրը, որը կոչված է կանխելու 9 մլն ամերիկացիների տների կորուստը, որոնք դժվարությունների են հանդիպել հիփոթեքային վարկերը վճարելիս: Պլանը ենթադրում է այդ նպատակների համար $75 մլրդ-ի հատկացում: Այն թույլ կտա վերաֆինանսավորել 5 մլն փոխառուների հիփոթեքային վճարները:	1. Ամերիկյան և եվրոպական 10 բանկերի կոնսորցիումի կողմից ընդհանուր $70 մլրդ բյուջեով հիմնադրամի ստեղծում՝ չափերով ավելի փոքր ֆինանսական ինստիտուտներին օգնություն ցուցաբերելու համար[4]: 2. ԱՄՆ նախագահը հայտարարեց 3 մլն աշխատատեղերի պահպանման շրջանակներում նոր հանձնաժողովի ստեղծման մասին: Խմբի հիմնական խնդիրը կլինի աշխատող ընտանիքներին օգնությունը, որոնք ընկել են դժվար կացության մեջ: Հանձնաժողովի ծրագրերում կրթական ծրագրեր և դասընթացներ են, միջին խավի եկամուտների և կենսաթոշակային խնայողությունների պահպանում[5]: 3. Ներդրումների ուղղում էկոլոգիապես մաքուր էներգիայի զարգացմանը՝ մոտակա երեք տարիների ընթացքում էներգիայի այլընտրանքային տեսակների հայթայթման կրկնակի ավելացման նպատակով և էներգամատակարարման բարելավում, որը նույնպես կստեղծի մոտավորապես 500 հազար աշխատատեղ[6]: 5. Գործազրկության և առողջապահության գծով ապահովագրական համակարգի բարելավում, ամերիկյան ընտանիքների 95 տոկոսին հազար դոլարի չափով հարկային արտոնությունների տրամադրում:

[1] http://www.k2kapital.com/news/fin/527217.html
[2] http://www.k2kapital.com/news/fin/537089.html
[3] http://www.rb.ru/news/economics/2009/02/18/102157.html
[4] http://www.k2kapital.com/news/fin/514886.html
[5] Նույն տեղում:
[6] http://www.rbc.ru/rbcnews/20090110193958.shtml

Դրամական բնույթի միջոցառումներ	Ոչ դրամական բնույթի միջոցառումներ
Գերմանիա	
1. Մշակված է տնտեսության խթանմանը նպաստող ծրագիր €31 մլրդ-ի կամ ՀՆԱ 1.25 տոկոսի չափով[1]: 2. Կառավարությունը սոցիալական ապահովագրության վճարների նվազեցման նպատակով տրամադրում է €10 մլրդ և ևս մի քանի մլրդ հարկային բեռի թուլացման և ներդրումների համար[2]: 2. Խթանող միջոցների երկրորդ փաթեթը, որը արժե €50 մլրդ ($67.02 մլրդ), ներառում է ենթակառուցվածքում և կրթության ոլորտում նոր ներդրումներ, որոնք կնպաստեն աշխատատեղերի պահպանմանը (դաշնային կառավարությունը ներդրումների համար կապահովի €14 մլրդ, իսկ գերմանական 16 «հողեր» կստանան հավելյալ միջոցներ), €1.5 մլրդ հատկացվում է մեքենաշինական արդյունաբերությանը (այդ թվում, նոր ավտոմեքենա գնողներին €2.5 հազար պարգևատրում): 2009թ. հարկային արտոնությունները կավելանան մինչև €2.9 մլրդ, իսկ 2010-ից կհասնեն մինչև €6.05 մլրդ-ի[3]:	1. Աշխատավարձի սահմանափակումների կիրառում մինչև €50 հազար (հաստատման փուլում է)[4]: 2. Ճգնաժամի դեմ պայքարում կրճատել աշխատանքային շաբաթը. 2009թ. հունվարի 1-ից ճգնաժամ ապրող ձեռնարկությունները անցնում են 3-4-օրյա աշխատանքային շաբաթի: Ձեռնարկատերերը վճարում են աշխատակիցների աշխատավարձը, իսկ պետությունը փոխհատուցում է մնացած ծախսերը: 3. Համաշխարհային ճգնաժամի պայմաններում տնտեսության խթանման երկրորդ ծրագիրը ներառում է աշխատանքից հեռացման արգելքը. Գերմանիայի խոշորագույն ընկերությունները չպետք է դիմեն զանգվածային կրճատումների՝ պետության ֆինանսական օգնության դիմաց:
Ֆրանսիա	
1. Հրապարակվել է տնտեսական ճգնաժամի սոցիալական հետևանքների վերացմանն ուղղված գործողությունների փաթեթը: Հասարակությանն արտակարգ օգնություն ցուցաբերելու ծրագիրը (€2.65 մլրդ) նախատեսում է գործազուրկներին միջոցներ տրամադրել իրենց կարիքների բավարարման նպատակով: Գլխավոր առաջարկություններից մեկը կդառնա աշխատանքը կորցրած կադրերի վերապատրաստմանն ուղղված հիմնադրամի ստեղծումը: Առաջարկված գործողությունների փաթեթը ներառում է նաև 4 մլն ընտանիքների հարկային բեռի թեթևացում, գործազրկության և բազմազավակ ընտանիքների նպաստների ավելացում[5]:	1. Հիմնվել է նոր նախարարություն, որը պատասխանատու է ազգային տնտեսության վերականգնման ծրագրի իրականացման համար: Ծրագիրը նախատեսում է այդ նպատակների համար €26 մլրդ-ի տրամադրում: Նախարարությունը ստեղծվել է վերահսկողություն իրականացնելու համար: Մասնավորապես, հավելյալ միջոցների ծախսման վերահսկողության համար, որոնք բացառապես ուղղված են ազգային տնտեսության վերականգնմանը, այլ ոչ թե տարբեր գերատեսչությունների ընթացիկ ծախսերի համար: 2. Ավանդների երաշխավորում €70 հազար ծավալով:

[1] http://www.burocrats.ru/banks/081204173819.html
[2] http://news.finance.ua/ru/~/1/0/all/2008/12/25/147465
[3] http://www.k2kapital.com/news/fin/523695.html
[4] http://www.magazine-deutschland.de/en/artikel-en/article/nbd/1/article/das-500-milliarden-euri-rettungspaket-der-bundesregie-rung.html
[5] http://www.banki.ru/news/bankpress/?id=849501..html

Դրամական բնույթի միջոցառումներ	*Ոչ դրամական բնույթի միջոցառումներ*
Հունգարիա	
1. Տրամադրվում են պարտքային պարտավորությունների վերաֆինանսավորման երաշխիքներ $1.5 մլրդ ընդհանուր արժողությամբ: 2. $1.3 մլրդ ընդհանուր գումարով վարկերի երաշխիքների տրամադրման ծրագիր՝ հիմնականում փոքր և միջին բիզնեսին: 3. Կառավարությունը նախատեսել է վարկավորել փոքր ու միջին բիզնեսը, ինչի համար 140 մլրդ ֆորինտ է առանձնացրել:	1. Տոկոսադրույքի ավելացում երեք տոկոսով: 2. Ավանդների երաշխիքների ծավալը 6 մլն-ից ավելացել է մինչև 13 մլն ֆորինտ:
Իտալիա	
1. Երեք տարվա ընթացքում կառավարությունը տնտեսության աջակցմանը կուղղի €40 մլրդ: Գումարը կարող է աճել մինչև €80 մլրդ, եթե Իտալիան ստանա ԵՄ օգնությունը: 2. 2009–2010թթ. կառավարությունը ընդհանուր առմամբ €8 մլրդ կհատկացնի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի սոցիալական հետևանքների վերացմանը: Տվյալ դեպքում ենթադրվում են հանրության առավել թույլ և անպաշտպան շերտերին օգնության ցուցաբերման մեխանիզմներ, այդ թվում նաև ճգնաժամի հետևանքով աշխատանքից զրկված քաղաքացիներին:	1. Մինչև €103 հազար ծավալով ավանդների երաշխավորում:
Չեխիա	
Կառավարությունը հավանության է արժանացրել տնտեսության խթանման ծրագիրը: Դրան համապատասխան տնտեսական անկման դեմ պայքարում երկիրը մտադիր է հատկացնել €2.44 մլրդ: Նախագիծը նախատեսում է հարկերի կրճատում, ենթակառուցվածքներում և բնապահպանությունում ներդրումներ, ինչպես նաև ավտոարտադրողներին և փոքր բիզնեսին վարկերի տրամադրում:	2009թ. փետրվարի 5-ին բանկային տոկոսադրույքի իջեցում՝ 2.25–ից մինչև 1.75 տոկոս[1]:
Մեծ Բրիտանիա	
1. Կառավարությունը 400 մլն ֆունտ ստեռլինգ (€444 մլն) հատկացրեց առաջին բնակարանը ձեռք բերող անձանց օգնության համար: Այդ միջոցներն ուղղվել են 130 ընկերությունների, որոնք պետք է կառուցեն բնակելի անշարժ գույքի 18 հազար օբյեկտներ: Ծրագիրը գործում է 2009-ից: Բացի այդ, նախատեսվում է երիտասարդ ընտանիքներին տրամադրել բնակարանի ձեռքբերման 30% զեղչ[2]: 2. Մեծ Բրիտանիայում մշակվել է 20 մլրդ ֆունտ ստեռլինգ արժողությամբ համալիր միջոցառումների ծրագիր, որը ներառում է՝ հարկային արտոնություններ և ծախսեր փոքր ընկերությունների, ցածր վարձատրվող աշխատողների ու տնային տնտեսությունների օգնության համար:	

[1] http://www.uabanker.net/daily/2009/02/020509_1620.shtml
[2] http://www.prian.ru/news/12732..html

Դրամական բնույթի միջոցառումներ	Ոչ դրամական բնույթի միջոցառումներ
Ճապոնիա	
1. ԱՄՆ-ին $98 մլրդ-ի տրամադրում՝ ճգնաժամից տուժած զարգացող երկրներին օգնելու նպատակով[1]։ 2. Կառավարությունը հաստատեց $54 մլրդ-ի կայունացնող միջոցառումների փաթեթը։ Այդ միջոցները ծախսվելու են փոքր բիզնեսի վարկավորման և աշխատանքից ազատվածների նպաստների տրամադրման վրա։ 3. Կառավարությունն ավելի քան $70 մլրդ է ուղղել զբաղվածության ապահովագրման վճարների դրույքն իջեցնելու նպատակով։	Կառավարությունը մտադիր է իջեցնել տների սեփականատերերի հարկը, ինչի համար պահանջվում է ավելի քան $100 մլրդ։
Հարավային Կորեա	
2009թ. փետրվարի 11-ին նախագահը հավանության արժանացրեց փոքր և միջին ընկերություններին $37 մլրդ վարկային երաշխիքների տրամադրման պլանը, որոնք տուժել են վարկային ճգնաժամից։	Կառավարությունը պլանավորում է վաճառել իրեն պատկանող ընկերությունների բաժնետոմսերի $12.5 մլրդ ընդհանուր գումարի փաթեթը, որը գնվել է 1998թ. ասիական ֆինանսական ճգնաժամի ժամանակ ուղիղ արտասահմանյան ուղղակի ներդրումներ ներգրավելու նպատակով[2]։
Սինգապուր	
Կառավարությունը մտադիր է մեկնարկել այսպես կոչված աշխատանքային վարկերի տրամադրման ծրագիրը, որոնք կարող են փոխհատուցել գործատուների՝ ֆինանսական ճգնաժամի պայմաններում աշխատատեղերի պահպանման ծախքերը։ Ծրագրի արժեքը կկազմի 4.5 մլրդ սինգապուրյան դոլար[3]։	
Սաուդյան Արաբիա	
Սաուդյան Արաբիան առանձնացրել է $2.67 մլրդ խոշորագույն սոցիալական ուղղվածության բանկին, որը տրամադրում է անտոկոս վարկեր նվազող եկամուտ ունեցող բնակչությանը[4]։	
Արգենտինա	
Նախագահը հայտարարեց երկրի շինարարական ճյուղում աշխատատեղերի ստեղծման ծրագրի մասին՝ փորձելով հաղթահարել ճգնաժամը։ Ծրագրի արժողությունը 71 մլրդ պեսո է ($21.5 մլրդ)։ Այդ միջոցառումների նպատակը շինարարական արդյունաբերության մեջ զբաղվածների թվաքանակի ավելացումն է՝ 362 հազարից 770 հազար մարդ։ Ծրագրի ֆինանսավորումը կիրականացվի ի հաշիվ 78 մլրդ պեսո ծավալով մասնավոր կենսաթոշակային կուտակումների[5]։	Մասնավոր կենսաթոշակային ֆոնդերի ազգայնացում[6]։

[1] http://news.siteua.org/
[2] http://www.k2kapital.com/news/fin/545037..html
[3] http://www.k2kapital.com/news/fin/529980..html
[4] http://lenta.ru/news/2008/10/27/bank/
[5] http://prian.ru/news/12458.html
[6] http:// www.infosmi.ru/translation/244879.html

Դրամական բնույթի միջոցառումներ	Ոչ դրամական բնույթի միջոցառումներ
Բրազիլիա	
Նախագահը ստորագրել է բարեկեցության հիմնադրամի ստեղծման մասին հրամանը, որի սկզբնական չափը կկազմի 14.2 մլրդ ռեալ (մոտավորապես $6 մլրդ): Հիմնադրամի հիմնական խնդիրն է դառնալ երկրի տնտեսության համար համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքների մեղմացման լրացուցիչ գործիք: Հիմնադրամը կհամալրվի կառավարության խնայած միջոցների հաշվին:	

2. ՀՀ սոցիալական ոլորտի վերափոխումներն ու արդի հիմնախնդիրները

Հայաստանի Հանրապետության տնտեսության համախառն ներքին արդյունքի նախընթաց աճը ձևավորել է բարենպաստ ներուժ սոցիալական ոլորտում դրական տեղաշարժերի, զարգացման ծրագրերի իրականացման և բարեփոխումների համար:

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցության առաջին ալիքին Հայաստանի Հանրապետությանը հաջողվեց դիմակայել, նախ՝ շնորհիվ արդյունավետ ֆինանսական վերահսկողության, որի արդյունքում ֆինանսական համակարգի կայունությունը բնութագրող ցուցանիշները պատմականորեն գտնվել են բարձր մակարդակի վրա, և երկրորդ՝ ՀՀ տնտեսության ֆինանսական հատվածում «տաք փողերի» բացակայության: Միևնույն ժամանակ, թույլ էին կապերը միջազգային ֆինանսական շուկաների այն հատվածների հետ, որտեղ արձանագրվեց ճգնաժամի առաջին ալիքը: Մասնավորապես, ի տարբերություն զարգացած երկրների, Հայաստանի ֆինանսական շուկաներում՝ բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում չդրսևորվեց խուճապ, չսրվեց իրացվելիության նկատմամբ պահանջարկը:

Այնուամենայնիվ, Հայաստանին, ինչպես և աշխարհի ոչ մի երկրի, չհաջողվեց խուսափել ճգնաժամի ազդեցությունից, որի հիմնական հարվածն իր վրա ընդունեց տնտեսության իրական հատվածը՝ արձանագրելով անկման միտումներ: Դա հիմնականում պայմանավորված էր հետևյալ գործոններով.

- մասնավոր տրանսֆերտների կրճատմամբ,
- համաշխարհային շուկաներում հումքային ապրանքների և, հատկապես, մետաղների գների նվազմամբ,
- համաշխարհային պահանջարկի նվազման հետևանքով հայաստանյան արտահանելի ապրանքների և ծառայությունների արտահանման պահանջարկի անկմամբ,
- ՀՀ տնտեսություն ներհոսող ներդրումների ծավալների անկմամբ, ինչը համաշխարհային տնտեսությունում ֆինանսական միջոցների լիկվիդայնության պակասի հետևանք էր [16, էջ 1-2]:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության վրա համաշխարհային ճգնաժամի ունեցած ազդեցությունը՝ ՀՀ կառավարության կողմից իրականացվող հակաճգնաժամային քաղաքականության արձագանքն ուղղված է ոչ թե ֆինանսական ինստիտուտների հզորացմանը և հնարավոր ռիսկերից լրացուցիչ ապահովագրմանը, այլ հիմնականում տնտեսական ակտիվության խթանմանը: Հակաճգնաժամային քաղաքականության հիմնական սկզբունքներն են.

- ֆինանսական կայունության միջոցով մակրոտնտեսական կայունության ապահովումը,
- փոխարժեքի արդյունավետ քաղաքականության իրականացումը,
- հասարակության և բիզնեսի հետ արդյունավետ հաղորդակցության ապահովումը,
- ընդլայնող դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը,
- ենթակառուցվածքներին ուղղված լայնածավալ ծրագրերի իրականացումը,
- գործարար միջավայրի բարելավումը և գործարարությանը ժամանակավոր աջակցության տրամադրումը,
- սոցիալական ուղղվածություն ունեցող ծրագրերի իրականացման առաջնահերթությունը [16, էջ 6]:

ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների ցանկում տեղ է գտել նաև «Սոցիալական ծրագրեր» բաժինը: Այդ բաժնում ՀՀ կառավարությունը հայտարարել է «Երիտասարդներին մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի մեկնարկի մասին, որի հիմնական նպատակն է սոցիալապես անապահով ընտանիքների աջակցությունը: Ծրագրով նախատեսվում է իրականացնել պետական օժանդակություն երիտասարդ ընտանիքներին՝ հիփոթեքային վարկավորման միջոցով բնակարան ձեռք բերելու նպատակով: Նշված օժանդակությունը նախատեսվում է իրականացնել հետևյալ երկու ուղղություններով.

- Պետության կողմից 10-15 տարի մարման ժամկետով անտոկոս փոխառության տրամադրում հիփոթեքային վարկի կանխավճարի համար պահանջվող գումարի 30%-ի չափով, իսկ երիտասարդ ընտանիքում անչափահաս երեխաների առկայության դեպքում, յուրաքանչյուր երեխայի համար, ևս 10%:
- Պետության կողմից հիփոթեքային վարկի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորում: Երիտասարդ ընտանիքում անչափահաս երեխաների առկայության դեպքում յուրաքանչյուր երեխայի հաշվարկով կսուբսիդավորվի ևս 10%, մինչև նրա չափահաս դառնալը [16, էջ 22-23]:

Անհրաժեշտ է նշել, որ թեև համաշխարհային ճգնաժամի ազդեցությունն ավելի է խորանում (բավական է նշել, որ 2008թ. առաջին կիսամյակում ՀՆԱ անկումը կազմել է 16.3%), սակայն ՀՀ կառավարությունը հայտարարել է, որ բնակչությանն առնչվող պետական սոցիալական ծրագրերը փոփոխությունների չեն ենթարկվելու, ինչը կարևոր երաշխիք է կենսամակարդակի պահպանության համար: Բնականաբար, այս ոլորտում կան նաև բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք լուծումների կարիք ունեն:

Համաշխարհային ճգնաժամի տնտեսական, հետևաբար նաև սոցիալական իրավիճակի բացասական զարգացումներին հակազդելու համար անհրաժեշտ են մի շարք անհապաղ միջոցառումներ: Մասնավորապես, սպառման կտրուկ անկում թույլ չտալու և ազգային արտադրողին խրախուսելու նպատակով արդյունավետ կարող է լինել անուղղակի հարկերի (ԱԱՀ, ակցիզներ) որոշ իջեցումը երկրի ներսում սպառվող ապրանքների նկատմամբ: Օրինակ՝ ԱԱՀ-ն կարելի է իջեցնել 20%-ից մինչև 16-17%: Բարձր գործազրկություն թույլ չտալու նպատակով շահութահարկը կարելի է իջեցնել մինչև եկամտահարկի մակարդակ:

Նշենք նաև, որ եկամտահարկի գործող սանդղակը տնտեսական ճգնաժամը հաղթահարելու լավագույն միջոցը չէ. հարուստներն ավելի շատ պետք է վճարեն: Միևնույն ժամանակ, խստություն պետք է ցուցաբերել շքեղության առարկաների, ծխախոտի, ալկոհոլի հարկման ուղղությամբ (սրանց ակցիզային հարկը պետք է բարձրացվի): Ծխախոտի, ալկոհոլի, ավտոմեքենաների, բջջային հեռախոսների ներմուծման մաքսատուրքերը պետք է ավելացվեն: Այս փոփոխությունները հնարավորություն կտան թույլ չտալ բյուջեի եկամուտների կտրուկ անկում, խթանել զբաղվածության բարձր մակարդակ, հարկավորել ներմուծումները (դրանով իսկ նպաստել արտահանում-ներմուծում նոր հավասարակշռության հաստատմանը): Բյուջեի համալրման լուրջ աղբյուր կարող է հանդիսանալ գույքահարկի ավելի մեծ տարբերակումը, պրոգրեսիվ եկամտահարկի սանդղակի կատարելագործումը (հարուստներն ավելի շատ պետք է հարկվեն), էլիտային բնակարանային շինարարության բարձր դրույքաչափերով հարկումը Երևանի կենտրոնում: Գործող հարկերի մասով՝ հույժ կարևոր է, որպեսզի հարկվեն բոլորը: Դրան հակառակ՝ սոցիալական լարվածությունը թուլացնելու համար անհրաժեշտ է եկամտահարկով չհարկվող գումարի սահմանագիծը բարձրացնել մինչև 50 հազար դրամ:

Ճգնաժամի ընթացքում անխուսափելի է պետական ներդրումների տեսակարար կշռի, համախառն կուտակումների նորմայի, ներդրումային ծրագրերում պետության փայամասնակցության բարձրացումը: Գործազրկության բարձր մակարդակ ունեցող մարզերում պետք է իրականացնել ներդրումներ ենթակառուցվածքների ոլորտում, իրականացնել հանրային բնույթի աշխատանքներ:

Պետք է հիշել, որ ճգնաժամի արդյունքում մասնավոր արտասահմանյան ներդրումները երկար ժամանակով կարող են անհետանալ: Կահագնանա հայրենական կապիտալի արտահոսքի ավելացման վտանգը: Ահա թե ինչու անհրաժեշտ է 20% հարկ սահմանել կապիտալի արտահանման նկատմամբ:

Բանկային համակարգի աշխուժացման և ներդրումների խրախուսման համար կարևոր են հետևյալ միջոցառումները.

1. Ավանդների երաշխավորման հիմնադրամի գործունեության թափանցիկության և հուսալիության ապահովում, հասարակության լայն շրջանակներին հասու պարբերաբար հաշվետվությունների ու զեկույցների հրապարակում:
2. Դրամային ավանդների երաշխավորվող շեմի բարձրացում մինչ 8-10 մլն դրամ մակարդակը, արտարժութային ավանդների երաշխավորվող մակարդակի անփոփոխ կամ չնչին բարձրացման պարագայում:
3. Բանկային համակարգի իրացվելիությանն ու վճարունակությանն ուղղված հատուկ միջոցառումների իրականացում, տնտեսական նորմատիվների և բանկային տոկոսի հաշվարկման մեխանիզմի վերանայում, մասնավորապես, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 879 հոդվածի՝ տոկոսադրույքների մակարդակը սահմանափակող մասի վերացում[1] [17, էջ 294]:
4. Պարտավորությունների կատարման ապահովման լրացուցիչ միջոցների կիրառում, այդ թվում՝ պետական մարմինների օժանդակություն ժամկետանց պարտավորություններ ունեցող անձանց նկատմամբ համապատասխան միջոցների կիրառման հարցում:

Սրանք անհապաղ միջոցառումներ են, որոնք անհրաժեշտ է իրականացնել ճգնաժամի բացասական ազդեցությունը մեղմելու համար միայն, քանի որ մեր երկիրը գտնվում է ճգնաժամի մեջ, ինչը պահանջում է արտակարգ, ոչ ավանդական միջոցների կիրառում, առավել բեկումնային մոտեցումներ և երկարատև մշակումներ և, բացի այդ, նշված միջոցառումները ստեղծված իրավիճակում կարող են ավելացնել պետական բյուջեի եկամուտները, որոնք սոցիալական ծրագրերի իրագործման նյութական հիմքերն են:

Նշենք, սակայն, որ ՀՀ սոցիալական ոլորտում մինչև ճգնաժամն էլ կային հրատապ լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ: Այդ հարցերն այժմ էլ չեն կորցրել իրենց արդիականությունը, և դրանց պետք է անդրադառնալ անկախ տնտեսական իրավիճակից:

Ուսումնասիրության արդյունքում պարզեցինք, որ գոյություն ունեցող

[1] Համաձայն այդ հոդվածի, «Փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը»:

սոցիալական պաշտպանության ծրագրերը հիմնականում համապատասխանում են Հայաստանի այժմյան աղքատության և խոցելիության դիմապատկերին: Դրանք նաև արտացոլում են Հայաստանի սոցիալական պայմանագրերը, ազգային այնպիսի գերակայությունը, ինչպիսին է բացասական ժողովրդագրական միտումների կանխումը ծնելիության խթանման միջոցով:

Քանի դեռ Հայաստանը որևէ անսպասելի ցնցում չի արձանագրել, հավանականությունը քիչ է, թե միջնաժամկետ առումով բնակչության ունեցած սոցիալական ռիսկերի բնույթն ու կառուցվածքը, սոցիալական պայմանագիրը և սոցիալական զարգացման գերակայությունները նշանակալի փոփոխությունների կենթարկվեն: Այդ առումով Հայաստանում այժմյան աղքատներին և խոցելի խմբերին ուղղված սոցիալական ապահովության ցանցերի և աշխատաշուկաների ծրագրերի լայնածավալ փոփոխությունների կարիք չի լինի: Փոխարենը կկարևորվեն դրանց ամրապնդումը և արդյունավետության բարձրացումը՝ իրականացման մեխանիզմների բարելավման միջոցով: Այս ոլորտում կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են, որ.

1. Կառավարությունը կարող է նպատակահարմար համարել գնահատել ավելի մեծ խմբերին տրամադրվող նպաստների ծրագրերը և դրանց կառուցվածքը: Այդպիսի նպաստային ծրագրերից է մինչև երկու տարեկան երեխաների չաշխատող մայրերին նպաստների հատկացման ծրագիրը: Այն մեկն է խորհրդային ժառանգություն համարվող ծրագրերից, նպատակն է՝ մայրերին հնարավորություն տալ խնամելու երեխաներին, միաժամանակ նաև քաջալերել, որ նրանք շատ երեխաներ ունենան: Իրականում ծրագիրը, կարծեք թե, նպատակներից ոչ մեկն էլ չի իրագործում: Շատ քիչ աշխատող մայրեր են օգտվում դրանից, քանի որ աշխատանքից դուրս մնալու հնարավորությունը մեծանում է, իսկ նպաստի գումարը չնչին է՝ ներկայումս այն 6,000 դրամ է, կամ որ նույնն է, համարժեք է միջին աշխատավարձի 7%-ին: Լուծումներից մեկը կարող է լինել մայրության արձակուրդի կրճատումը՝ այն հասցնելով մեկ տարվա՝ փոխարենը կրկնապատկելով նպաստի գումարը: Նպաստի տրամադրումը կարելի է սկսել նաև միայն երկրորդ երեխայի ծննդից սկսած: Երեխայի խնամքի նպաստի չափի ավելացումը կարող է նաև ունենալ աղքատամետ ազդեցություն, քանի որ սովորաբար բազմազավակ լինում են աղքատ ընտանիքները: Գնահատման ենթակա մեկ այլ ծրագիր է նաև ժամանակավոր անաշխատունակության վճարովի պարապուրդը: Սա հատկապես կարևորվում է այժմ, երբ Պետական սոցիալական ապահովագրության հիմնադրամը վերածվել է Պետական սոցիալական ապահովության ծառայության, իսկ նախկին սոցիալական ապահովագրության վճարները (այդ թվում նաև ժամանակավոր անաշխատունակության վճարները) ֆինանսավորվում են բյուջեից: Որպես առաջին քայլ՝ կառավարությունը կարող է քննարկել վատ-

առողջության պատճառով բացակայությունների որոշակի թվով օրերի վճարումը գործատուին հանձնելու հնարավորությունը:

Երրորդ ծրագիրը, որ գնահատման կարիք ունի, վերացված արտոնությունների դիմաց կանխիկի փոխհատուցման ծրագիրն է: Մի քանի տարի առաջ Հայաստանը վերացրեց կոմունալ ծառայությունների վճարները զեղչով մուծելու արտոնությունը՝ փոխարենն առաջարկելով կանխիկ փոխհատուցում: Գործնականում պարզվել է, որ իրենց բաշխվածությամբ այս արտոնություններն ավելի շատ ուղղված էին հարուստներին: Թեև ընդհանուր եկամտի համեմատությամբ այդ կանխիկի հատկացումը փոքր է և դժվար արձանագրելի տնային տնտեսությունների հարցումների ընթացքում, տրամաբանական կլինի ընդունել, որ բաշխման ազդեցությունը նույնն է: Կառավարությունը կարող է քննարկել այս ծրագրում միայն իսկապես աղքատ ընտանիքներին ներառելու հնարավորությունը և դա ընտանեկան նպաստների ծրագրի մեջ միավորելը:

2. Ուշադրության կենտրոնում պետք է պահել հասցեականության ապահովումը և թույլ չտալ ծրագրերի մասնատում: Ունենալով աղքատության և խոցելիության բարձր ցուցանիշներ՝ սոցիալական պաշտպանության ծրագրերի անհրաժեշտությունը զգալիորեն գերազանցում է այն ֆինանսական հնարավորությունները, որ առկա են այդ ծրագրերի ֆինանսավորման համար: Այդ պայմաններում, հասցեականության ապահովումն արդյունավետ միջոց է՝ ծրագրերի և ռեսուրսների մեծ մասը բնակչության ամենակարիքավորներին ուղղելու համար: Այս պայմաններում միջամտությունները մանրացված ծրագրերով իրականացնելու առաջարկները, որ կդասակարգեն դրանք ըստ աղքատության կամ խոցելիության, պետք է մերժվեն, փոխարենն այդ ծրագրերը ներառելով մեկ՝ ընտանեկան նպաստի ծրագրի մեջ: Այլապես, դա Հայաստանի համար կնշանակի վերադարձ անցյալին, երբ կային մի շարք փոքր, անարդյունավետ, ծախսատար ծրագրեր: Կստեղծվի այն նույն իրավիճակը, որ առկա էր 1998թ., երբ ընտանեկան նպաստի ծրագրի ներդրումը փոխարինվեց 26 խմբերով դասակարգված փոքր միջամտությունների ծրագրերով:

Ավելի մեծ ուշադրություն պետք է հատկացնել աշխատաշուկայի քաղաքականություններին: Այդ համատեքստում, անհրաժեշտ է ավելի շատ ռեսուրսներ հատկացնել աշխատաշուկայի ծառայությունների և այն աշխատանքների հետագա բարելավման ու ընդարձակման համար, որոնք բարեհաջող իրականացվել են մինչև հիմա: Նշվածը հիմնավորվում է Հայաստանի գործազրկության շատ բարձր մակարդակով (27%, որը շատ բարձր է տարածաշրջանի ցանկացած այլ երկրի համեմատությամբ): Թեև այդ ցուցանիշը հիմնականում կախված է աշխատատեղերի ստեղծման տեմպից, աշխատաշուկայի հաստատությունների ճկունությունը, աշխատատեղերի ու աշխատողների համադրման լավ ծառայությունները և գործազուրկների մրցունակությունը աշխատաշուկայում բարձրացնելու արդյունավետ միջոցները նույն-

պես կարևոր դեր են կատարում: Հայաստանն ընդունել է աշխատաշուկայի կանոնակարգերի ճկուն օրենսգիրք, իսկ Զբաղվածության պետական ծառայությունն էլ վերջին մի քանի տարիներին զգալիորեն ամրապնդել է իր կարողությունները: Սակայն այն շարունակում է հասանելի լինել աշխատանք փնտրողների միայն մի փոքր հատվածին: Պետք է շարունակվի այս հաստատության կարողությունների ամրապնդումը, պետք է ընդարձակվեն այն ծրագրերը, որոնք արդյունավետ են եղել գործազուրկներին թափուր աշխատատեղերի համար մրցունակ դարձնելու հարցում:

3. Կառավարությունը պետք է օգտագործի սոցիալական պաշտպանության կառավարման կառուցվածքում վերջերս տեղի ունեցած փոփոխությունները՝ աշխատանքների ավելի արդյունավետ կազմակերպման, տեղեկատվական բազայի ամրապնդման, բարելավված հաշվետվողականության և թափանցիկության միջոցով ապահովելու համար ավելի որակյալ և արդյունավետ ծառայությունների մատուցումը, որի համար առաջարկվում են հետևյալ քայլերը.

- Ավարտին հասցնել սոցիալական պաշտպանության տեղեկատվական համակարգերի կառավարման աշխատանքները: Հայաստանը, որ սոցիալական ապահովության ոլորտում տեղեկատվական համակարգերի ներդրման առաջամարտիկն էր, այժմ հետ է մնում իր հարևաններից, ինչպես նաև Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի այլ երկրներից: Բիզնես գործընթացների կառավարման էլեկտրոնային դարաշրջան բարեհաջող մուտք գործելու համար պետք է արվի հետևյալը. ավարտին հասցվի սոցիալական ապահովության կորպորատիվ տեղեկատվության և հաղորդակցության ցանցի մշակումը, սոցիալական ապահովության համակարգում բոլոր բիզնես գործընթացների ավտոմատացումը և դրանց ինտեգրումը միասնական տեղեկատվական համակարգերի կառավարման մեջ, որի համար անհրաժեշտ է ներդնել *LANs* և *WLANs* և ուսուցանել տեղեկատվական համակարգերի կառավարման աշխատանքներն իրականացնողներին:
- Ավարտին հասցնել սոցիալական ապահովության բոլոր տեղական գրասենյակները ֆիզիկապես կամ վիրտուալ մեկ կանգառի պատուհանների վերածելու գործընթացը: Նման փորձն ունեցել է հաջողություններ: Ծառայություն մատուցողները բարելավել են իրենց ներքին արդյունավետությունը, իսկ հաճախորդներն էլ ստանում են ավելի որակյալ ծառայություններ, դրանք նաև ավելի էժան են: Այդ առումով, նորաստեղծ *SSSS* (նախկին հիմնադրամը՝ *SSIF*) և *SES* գրասենյակները պետք է ի մի բերվեն՝ ընդհանուր սոցիալական ապահովության «մեկ կանգառի պատուհանի» մեջ:
- Սոցիալական ապահովության վարչատարածքային կենտրոնների ինտեգրում:

Նշված կենտրոններն առանցքային դեր են կատարում ընտանեկան նպաստների շահառուների իրավասությունը ճշտելու և տվյալ վարչական տարածքում մարզային և քաղաքային իշխանությունների կառավարմամբ նպաստների հատկացման վարչական աշխատանքներն իրականացնելու հարցում: Բացի այդ, ընտանեկան նպաստների տրամադրման գործընթացում թափանցիկության բարելավման և հասցեականության ապահովման հիմնական խոչընդոտներից մեկը վարչական իրավիճակն է:

Կարծում ենք, նշված խնդիրը կարելի է մեղմել սոցիալական ապահովության վարչատարածքային կենտրոններն աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության վարչական կառուցվածքի մեջ «մեկ կանգառի պատուհանի» ծառայությունների մատուցման մաս դարձնելով:

Հնարավորության սահմաններում նպաստները պետք է շահառուներին տրամադրվեն քարտերի տեխնոլոգիաների միջոցով, ինչը հաջողությամբ իրականացվել է տարածաշրջանի շատ երկրներում:

4. Անհրաժեշտ է ծրագրերը ֆինանսավորել հավուր պատշաճի: Ոչ մի ծրագիր չի կարող նախասահմանված նպատակին ծառայել, եթե չլինի բավարար ֆինանսավորում: Սոցիալական ապահովությանը հատկացվող ռեսուրսների քանակն ուղղակիորեն պայմանավորված է ընդհանուր ֆինանսական վիճակով և սոցիալական ռիսկերի կառավարմանը տրվող կարևորությամբ: Ելնելով դրանից՝ ակնկալվում է, որ աղքատությունն ու խոցելիությունը միջնաժամկետ առումով կշարունակեն մնալ լուրջ մարտահրավերներ: Ուրեմն, սոցիալական պաշտպանության համար պետական ծախսերը պետք է առնվազն կայուն մնան ՀՆԱ հարաբերակցության մասով: Ինչ վերաբերում է սոցիալական պաշտպանության համակարգի ներսում ռեսուրսների հատկացմանը (ընդունելով, որ աղքատությունը կշարունակի կրճատվել), առաջարկվում է աղքատության կրճատման ծրագրերի ֆինանսավորումն իրական առումով առնվազն պահել կայուն մակարդակի վրա:

5. Անհրաժեշտ է ստեղծել աղքատ և խոցելի անձանց տվյալների բազա: Որպես սկզբնակետ պետք է օգտագործել ընտանեկան նպաստների ծրագրի տվյալները, քանի որ այն բոլոր տնային տնտեսությունները, որ դիմում են ընտանեկան նպաստների ստացման համար, անցնում են թեստ, որի արդյունքում միավորներ են տրվում և որոշվում է նրանց նպաստառու դառնալու իրավունքը: Այդ տվյալները պետք է պահվեն Հայաստանի աղքատ և խոցելի անձանց տվյալների բազայում, իրական ժամանակային գրաֆիկով պարբերաբար թարմացվեն, և կարող են կիրառվել ոչ միայն ընտանեկան նպաստների, այլև կառավարության այլ ծրագրերի հասցեական իրականացման նպատակով:

Անհրաժեշտ է իրականացնել ծրագրերի պարբերական մոնիթորինգ և գնահատում: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն

իրականացնում է ընտանեկան նպաստների ծրագրի կանոնավոր մոնիթորինգ և գնահատում: Բացահայտումներն օգտագործվում են ծրագրի շարունակական բարելավման համար: Ի հավելումն՝ նախարարությունը նաև օգտագործում է տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքները՝ գնահատելու համար ընտանեկան նպաստների ծրագրի հաջողվածությունը: Այս պրակտիկան պետք է այլ ծրագրերի դեպքում նույնպես կիրառվի, ինչը կհանգեցնի փաստերի վրա հիմնված սոցիալական ապահովության քաղաքականությունների ձևավորման: Այստեղ կարևոր դերակատարում կարող է ունենալ Աշխատանքի և սոցիալական հարցերի ազգային ինստիտուտը, սակայն այդ դերը հաջողությամբ կատարելու համար հարկ կլինի, որ այն էականորեն բարելավի իր կարողությունները:

6. Անհրաժեշտ է դադարեցնել փոխադարձ հաշիվների մարման պրակտիկան: Հայաստանում գործատուների և սոցիալական ապահովության ծրագրերի բյուջետային ֆինանսավորման ծրագրերի միջև դեռևս գոյություն ունի հաշիվների փոխադարձ մարման հին պրակտիկան: Ձեռնարկությունը ֆինանսավորում է ժամանակավոր անաշխատունակության պարապուրդը, մայրության արձակուրդը և մի քանի այլ հատկացումներ և այդ ծախսերը համապատասխանաբար հանում է իր վճարելիք սոցիալական պարտավորություններից/հարկերից (նախկինում՝ սոցվճարումներ): Կան դեպքեր, երբ գործատուն հայտարարում է, որ իր վճարումները գերազանցել են իր հարկային պարտավորությունները: Այս համակարգը մնացել է խորհրդային անցյալից, երբ ձեռնարկության ներսում արհմիության մասնաճյուղերն իրականացնում էին ոչ կենսաթոշակային սոցիալական ապահովության նպաստների վարչարարությունը: Այն չի ապահովում թափանցիկություն և հաշվետվողականություն և պետք է դադարեցվի: Սոցիալական ապահովության բոլոր հատկացումների վարչարարությամբ պետք է զբաղվի Պետական սոցիալական ապահովության ծառայությունը: Այլ կերպ ասած՝ գործատուները պետք է ամբողջությամբ փոխանցեն հարկային մարմնին վճարման ենթակա սոցիալական հարկերը, իսկ ժամանակավոր անաշխատունակության պարապուրդի և մայրության արձակուրդի վճարները աշխատողները պետք է ստանան Պետական սոցիալական ապահովության ծառայությունից:

7. Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարման ներկա գործընթացը չի ներառում մարդու հոգևոր-մշակութային և սոցիալական ծառայությունների իրականացումը, չնայած պաշտոնապես այն ամրագրված է ՀՀ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում (ԱՀՌԾ). «…աղքատության տակ հասկացվում է կենսաբանական, սոցիալական, հոգևոր-մշակութային նվազագույն պահանջմունքները բավարարելու անհնարինությունը… Մարդն աղքատ է կամ աղքատ չէ՝ հիշյալ երեք խմբերի

համակցությամբ, և միայն նվազագույն նյութական (կենսաբանական) պահանջմունքների բավարարումը չի բերելու մարդու սոցիալական հնարավորությունների մեծացման և աղքատության վերացմանը…» [18, 1-ին բաժին, 1-ին գլուխ, 41-րդ և 42-րդ մասեր]:

Այս ամենը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարումը սեղմվել և վերածվել է նյութական նվազագույն կարիքների բավարարման գործընթացի՝ սա բնակչության նյութական գոյության տարրական պայմանների լուծում է, և նույնիսկ այս պայմաններում ՀՀ բնակչության 28.2%-ը չի կարողանում լուծել իր նյութական գոյության նվազագույն խնդիրները:

Աղքատության հաղթահարման համար պետք է՝

- Բարձրացնել աղքատության ընդհանուր գիծը՝ սահմանելով այնպիսի պարենային և ոչ պարենային ապրանքներ, որոնք բազմազան են, որակյալ և նպաստում են մարդու զարգացմանը և ոչ թե նրա զուտ գոյապահպանմանը:
- Բարձրացնել նյութական-կենսաբանական աղքատության գիծը և առնվազն՝ հասցնել նվազագույն պարենային ու սպառողական զամբյուղներն այն մակարդակին, որն անհրաժեշտ է մարդկանց առողջությունը, կենսունակությունը և ֆիզիկական զարգացումը պահպանելու համար:
- Սահմանել նաև անհրաժեշտ նվազագույն գումարը՝ մարդկանց նյութական-կենսաբանական, սոցիալական և հոգևոր-մշակութային պահանջմունքների բավարարման համար:
- Օրենքով ամրագրել նվազագույն պարենային զամբյուղի և սպառողական զամբյուղի պարունակությունը և արժեքները, ինչպես նաև աղքատության գիծը՝ հաշվի առնելով ոչ միայն նյութական-կենսաբանական, այլև սոցիալական ու հոգևոր-մշակութային աղքատության չափորոշիչները: Այս սահմանված նվազագույն գումարներն անպատճառ պետք է հաշվի առնվեն և հիմք հանդիսանան աշխատավարձերի, կենսաթոշակների և նպաստների չափերի սահմանման գործում:

Աղքատության հաղթահարումը, բնակչության եկամուտների տարբերության կրճատումը կիրականացվի բնակչության անապահով ճանաչված ընտանիքների աղքատության ընտանեկան նպաստների ֆինանսական հատկացումների ավելացման, նվազագույն աշխատավարձի աստիճանական բարձրացման, աշխատունակ բնակչության զբաղվածության արդյունավետ մակարդակի ապահովման միջոցով:

Բացի դրանից, անհրաժեշտ է կատարելագործել նվազագույն աշխատավարձի քաղաքականությունը, ինչպես նաև հաղթահարել քաղաքացիական և պետական տարբեր ծառայությունների աշխատավարձերի միջև գոյություն

ունեցող էական տարբերությունները:

«Կենսանվազագույն զամբյուղի նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքի մեթոդաբանության մշակման, բնակչության եկամուտների ինդեքսավորման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները: Նախատեսվում է ավարտին հասցնել արտադրությունում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրական համակարգի ներդրման, սոցիալական ապահովագրական պետական հիմնադրամի կառավարման, կենսաթոշակների ֆինանսավորման հավաքագրման և վերահսկողության նոր մեխանիզմների ներդրման հետ կապված մեթոդական, կազմակերպչական միջոցառումների և իրավական նորմերի մշակման ու ներդրման աշխատանքները: Աշխատանքի պաշտպանության բնագավառում անհրաժեշտ է ընդունել աշխատանքի անվտանգության և հիգիենայի մասին օրենսդրություն, ապա և ուժեղացնել հսկողությունն աշխատանքի և աշխատանքի պաշտպանության օրենսդրության կատարման նկատմամբ: Աշխատանքի պայմանների և անվտանգության ապահովման բարելավման համար անհրաժեշտ է մշակել մեխանիզմներ՝ գործատուներին տնտեսապես խթանելու առաջին հերթին տնտեսության այն ճյուղերում, որոնք կապված են մասնագիտական ռիսկայնության հետ:

Զբաղվածության բնագավառում անհրաժեշտություն է դարձել աշխատաշուկայի վերլուծության մեթոդաբանության ճշգրտումը, աշխատանք փնտրող անձանց առավել արդյունավետ օգտագործումը մասնագիտական կողմնորոշման, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներում:

Զբաղվածության բնագավառի մարտավարության կարևոր ուղղություններ են համարվում առավել ճկուն աշխատանքի շուկայի ձևավորումը, աշխատուժի զանգվածային ազատման կանխումը, հեռանկարային բնագավառներում և արտադրություններում աշխատատեղերի ստեղծումը, ֆինանսական շուկայի մուտքի ընդլայնման ճանապարհով փոքր և միջին ձեռնարկությունների ոլորտի զարգացումը և հասանելիության ապահովումը հատկապես աղքատ ճանաչված սոցիալական ռիսկի խմբերի համար: Ի լրումն՝ անհրաժեշտ է ընդլայնել վարձատրվող հասարակական աշխատանքների ծավալներն ու հատկացվող ֆինանսական միջոցները, կատարելագործել, զարգացնել և խրախուսել բնակչության ինքնազբաղվածության և եկամտաբեր գործունեության ձևերը՝ յուրաքանչյուր անհատի, ինչպես նաև տնտեսության և հասարակության տնտեսական և սոցիալական շահերի բավարարման նպատակով:

8. Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (ընդունված է 2004թ. նոյեմբերի 9-ին) հոդված 182-ի. Աշխատավարձի ինդեքսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Թեև նշված օրենքի ընդունումից հետո անցել է

ավելի քան 4 տարի, սակայն մինչև օրս աշխատավարձի ինդեքսավորման վերաբերյալ ոչ մի փաստաթուղթ չի ընդունվել, ինչը, անկասկած, նորմալ համարել չի կարելի: Հարցի իրավական կարգավորման տեսանկյունից նշված՝ 182 հոդվածի ձևակերպումը անորոշ է այն առումով, որ աշխատավարձի ինդեքսավորման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ այլ փաստաթղթերում գրառումներ չկան, և, հետևաբար, աշխատանքային օրենսգրքի 182 հոդվածի պահանջն իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին ՀՀ օրենքում (ընդունվել է 2004թ. նոյեմբերի 9-ին) պետք էր առանձին հոդվածով ՀՀ կառավարությանը հանձնարարական տրվեր (նշելով նաև կատարման ժամկետը) ապահովելու օրենսգրքի 182 հոդվածի կատարումը:

Բնակչությանը ճգնաժամերից զերծ պահելու համար, որքան հնարավոր է արագ, անհրաժեշտ է ընդունել օրենք ՀՀ-ում առևտրային գործունեության պետական կարգավորման մասին, որտեղ պետք է առաջնային անհրաժեշտության սննդամթերքի գումարային առավելագույն առևտրային վերադիրը հաստատել 10-12%-ից ոչ ավելի: Միայն այս դեպքում ազգաբնակչությունը կխուսափի անվերահսկելի գների աճի հիմնախնդրից, որոնք վերջին 2-3 տարիների ընթացքում անհանգստացրել են հասարակությանը:

Սեպտեմբեր, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Куликов Л. М.,* Экономическая теория, учебник, Москва, 2006.
2. Курс экономической теории, учебник, издание 5-е, под общей редакцией М.Н.Чепурина, Е.А.Киселевой, Киров, “АСА”, 2006г.
3. Социальные реформы в странах с переходной экономикой, Проблемы и опыт, под редакцией С.В.Кадомцевой, Москва, ИКЦ “ДИС”, 1997.
4. Теория переходной экономики, учебное пособие под ред. И.П.Николаевой, Москва, 2001.
5. *Մարկոսյան Մ., Գեղամյան Ն.,* Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2006.
6. *Волков А.М.,* Швеция: социально-экономическая модель, Москва, 1991.
7. *Афанасьева С.,* Пенсионная реформа в Швеции, журнал “Пенсия”, N4, апрель 1997г., стр. 57.
8. *Ламперт Х.,* Социальная рыночная экономика: Германский путь, Москва, “Дело”.
9. Трансформационная экономика России, под редакцией А.В. Бузгалина, МГУ, Москва, 2006.
10. *Самуэльсон П., Нордхаус В.,* Экономика, Москва, 1997.
11. *Бальцерович Л.,* Социализм, капитализм, трансформация, Москва, 1999.
12. Социальная политика, учебник, под общей ред. Н.Волгина, Москва, “РАГС”, 2005г.
13. *Guhan S.,* Social security options for developing countries, International Labour Review, 1994, vol 133, no1.

14. Обзор экономики России, выпуск 3, Москва, 1999.
15. *Аганбегян А.Г.,* Социально-экономическое развитие Рассии, Москва, 2006г.
16. ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների իրականացման մասին ամփոփ հաշվետվություն, Ե., «Ֆենոմեն» հրատարակչություն, 2009:
17. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, Ե., պաշտոնական տեղեկագիր, 2008:
18. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի N 994-Ն որոշմամբ:

СОЦИАЛЬНАЯ ПОЛИТИКА В УСЛОВИЯХ КРИЗИСА

Меружан Маркосян

Резюме

Рыночная экономика требует адекватности государственного управления и возможностей данного рынка, причем каждая деталь в этой цепочке должна выполнять предназначенную ей функцию. Предпринимательство или его регулирование не являются первичной задачей государства, оно может и должно играть свою роль в экономике, но при этом не вмешиваться напрямую в деятельность домашних хозяйств и финансирование производства.

На плечи государства должны лечь расходы по улучшению социальной среды, обеспечению обороноспособности, созданию законодательства, управлению государственными финансами, налогообложению, борьбе с инфляцией, а также разработке антикризисных и других программ, направленных на повышение конкурентоспособности экономики, обеспечение экономического роста, финансовой стабильности и поддержку малого и среднего предпринимательства.

В статье представлены основные подходы к осуществлению социальной политики в странах с развитым рынком. Нынешний мировой финансовый кризис поставил перед правительствами стран новые задачи по обеспечению интересов своих граждан. Почти во всех странах программы по социальному обеспечению предусматривают как финансовые, так и нефинансовые мероприятия. Антикризисная программа Правительства Республики Армения также предусматривает социальные мероприятия. Необходимо отметить, что Правительство РА не пошло на сокращение социальных программ, все они будут осуществляться в прежних объемах.

Автор предлагает свое видение реформ в социальной сфере и вносит предложения, способствующие увеличению доходов государственного бюджета, направленных на выполнение социальных программ.

Հուշագիր հեղինակին

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա համառոտագիր (հոդվածի լեզվով) և ամփոփագիր (բնագրից տարբեր լեզուներով):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝

   1. *Մարգարյան Ս.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
   2. *Шарипова Р.,* Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
   3. *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from http://www.internews.ras.ru/books/media, Sept. 28, 1998.

5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 14.12.2009թ.
Թիվ 6 (28), 2009թ.
Տպաքանակը՝ 400։

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 8 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում